ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» Բաց բաժնետիրական ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55

էլ. փոստ՝ hello@evoca.am, կայք՝ www.evoca.am

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» Բաց բաժնետիրական ընկերություն

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55

էլ. փոստ՝ hello@evoca.am, կայք՝ www.evoca.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը	անվանական, արժեկտրոնային պարտատոմս	անվանական, արժեկտրոնային պարտատոմս	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային	ոչ փաստաթղթային	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	2,500,000 հատ	350,000 հատ	150,000 հատ
Արժեթղթերի թողարկման ծավալը	25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ	35,000,000 (երեսուն հինգ միլիոն) ԱՄՆ դոլար	15,000,000 (տասնհինգ միլիոն) Եվրո
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար	100 (մեկ հարյուր) Եվրո

Արժեկտրոնը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ		3
ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ		5
2.1	Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	5
2.2	Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	12
2.3	Բանկի զարգացման միտումները	13
2.4	Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին	15
2.5	Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը	16
2.6	Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	17
2.7	Վերջնական պայմանների հրապարակման ձևը	18
2.8	Ամփոփ ֆինանսական տվյալներ	24
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		27
3.1	Ռիսկային գործոններ	27
3.2	Հիմնական տեղեկատվություն	28
3.3	Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն	28
3.4	Առաջարկի ժամկետները և պայմանները	36
3.5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	44
3.6	Լրացուցիչ տեղեկատվություն	44
ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		46
4.1	Անկախ աուդիտորները	46
4.2	Ռիսկային գործոններ	47
4.3	Տեղեկատվություն Բանկի մասին	50
4.4	Բիզնեսի նկարագիրը	51
4.5	Բանկի կառուցվածքը	52
4.6	Զարգացման վերջին միտումները	53
4.7	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	58
4.8	Հսկող անձինք	75
4.9	Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ	76
4.10	Էական պայմանագրեր	76
4.11	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	76
4.12	Այլ տեղեկատվություն	77
	Հավելվածներ	78

ԲԱԺԻՆ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ՝ մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկատվության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք՝

Վարուժան Ավետիքյան(VAROUJAN AVEDIKIAN)	**Խորհրդի նախագահ(Chairman of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Խոսե Մարիա Մորենո դե Բարրեդա (JOSE M. MORENO DE BARREDA)	**Խորհրդի անդամ(Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Վազգեն Գևորկյան (VAZGEN GEVORKYAN)	**Խորհրդի անդամ(Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Մարտա Էչարրի (MARTA ECHARRI)	**Խորհրդի անդամ(Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Արկադի Սանդլեր (Arkady Sandler)	**Խորհրդի անդամ (Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Մարինա Բուկի (MARINA BOUKI)	**Խորհրդի անդամ(Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**
Պիեր Կազիյակ(PIERRE CAZILHAC)	**Խորհրդի անդամ(Member of Supervisory Board)**		29.09.2026
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**	**(ամսաթիվ)**

Կարեն Եղիազարյան	Վարչության նախագահ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տաթևիկ Խաչատրյան	Վարչության նախագահի տեղակալ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Պետրոսյան	Վարչության նախագահի տեղակալ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Լիլիթ Գաբոյան	Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էմմա Ջանինյան	Գլխավոր հաշվապահ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սմբատ Մարտիրոսյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Սահակյան	Վարչության անդամ, Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ		29.09.2026
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՇԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Բանկի Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am**:**

2.1 Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

2.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО “ЭВОКАБАНК”
անգլերեն՝ “EVOCABANK” OPEN JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО “ЭВОКАБАНК”
անգլերեն՝ “EVOCABANK” OJSC

Բանկի պետական գրանցման վայրը՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Բանկի գտնվելու վայրը՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2

Բանկի պետական գրանցման համարը՝ 27

Կապի միջոցները՝
Հեռ.՝ (+37410) 60 55 55, (+37410) 20 55 55
էլ. փոստ՝ hello@evoca.am
էլ. հասցե՝ www.evoca.am
Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Բանկի Ներդրումային ծառայությունների բաժնի որևէ աշխատակցի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 60 55 55 (15-35), (+374 10) 20 55 55:

2.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն 1990թ. հունիսի 1-ին ՀՀ օրենսդրության համաձայն հիմնադրվել է որպես «Պրոմեթևս» Առևտրային Բանկ և գործում է բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա:

Ստորև ներկայացված է համառոտ պատմական ակնարկ Բանկի հիմնադրման և զարգացման մասին.

- 1990թ. Բանկը հիմնադրվել է որպես «Պրոմեթևս» առևտրային բանկ:
- 1991թ. հոկտեմբերի 2-ին լիցենզավորվել է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ թիվ 27 ընդհանուր արտոնագրով:
- 1996թ. Վերանվանվել է՝ «Պրոմեթևս Բանկ» ՍՊԸ:
- 2001թ. Վերանվանվել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ:
- 2007թ. Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 3.5 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 7.2 մլրդ ՀՀ դրամ:
- 2011թ. Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 7.2 մլրդ ՀՀ դրամով, կազմելով՝ 14.4 մլրդ ՀՀ դրամ:
- 2016թ.
  - տեղի է ունեցել Բանկի կազմակերպաիրավական ձևի փոփոխություն՝ վերակազմավորվելով ՍՊԸ-ից ՓԲԸ-ի
  - արտոնյալ բաժնետոմսերի թողարկման միջոցով իրականացվել է կանոնադրական կապիտալի համալրում ևս 3.550 մլրդ ՀՀ դրամով, ինչի արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 17.950 մլրդ. ՀՀ դրամ:
- 2017թ. Բանկը վերանվանվել է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ փոխելով իր ռազմավարությունը և բիզնես մոդելը՝ անցնելով mobile-first ֆորմատի:
- 2020թ. մայիսի 29-ին բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կայացված որոշմամբ՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 2.050 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 20 մլրդ ՀՀ դրամ
- 2022թ.
  - մարտի 12-ին բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում կայացված որոշմամբ՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է ևս 2.250 մլրդ ՀՀ դրամով,
  - իսկ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման միջոցով իրականացվել է կանոնադրական կապիտալի համալրում 750 մլն ՀՀ դրամով, ինչի արդյունքում բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 23 մլրդ ՀՀ դրամ:
- 2023թ.

  Բանկը 31.12.2023թ.-ի դրությամբ ունեցել է ավելի քան 128 հազար հաճախորդ, մոտ 212 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

  Բանկի ընդհանուր ակտիվները աճել են 28.05%-ով 31.12.2023թ.-ի դրությամբ համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ կազմելով 446 մլրդ ՀՀ դրամ:

  Բանկի ընդհանուր կապիտալը աճել է 13.99%-ով 31.12.2023թ.-ի դրությամբ համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ կազմելով 70 մլրդ ՀՀ դրամ:
- 2024թ.

  Բանկը 31.12.2024թ.-ի դրությամբ ընթացքում ունեցել է ավելի քան 148 հազար հաճախորդ, մոտ 277 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

Բանկի ընդհանուր ակտիվները աճել են 23.92%-ով 31.12.2024թ.-ի դրությամբ համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ կազմելով 552 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի ընդհանուր կապիտալը աճել է 21.22%-ով 31.12.2024թ.-ի դրությամբ համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ կազմելով 84.2 մլրդ ՀՀ դրամ:

- 31.12.2025թ.-ի դրությամբ

Բանկը 31.12.2025թ.-ի դրությամբ ունեցել է ավելի քան 168 հազար հաճախորդ, մոտ 301 մլրդ ՀՀ դրամի վարկային պորտֆել:

- ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.06.2025թ. որոշման համաձայն՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (վերջինիս իրավահաջորդը «Էվոկաբանկ» ԲԲԸ-ն է) և «Վիլկո» ՍՊԸ-ն որակվել (ճանաչվել) են որպես հայկական բանկային ցածր ռիսկային ֆինանսական խումբ՝ «ԷՎՈԿԱ» անվանմամբ, և Բանկը նշանակվել է որպես «ԷՎՈԿԱ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:
- 01.08.2025թ.-ի դրությամբ Բանկի կազմակերպական-իրավական ձևը փոխվել է՝ Փակ բաժնետիրական ընկերությունից դառնալով Բաց բաժնետիրական ընկերություն («ԲԲԸ»):
- 30.06.2026թ.-ի դրությամբ

Բանկի ընդհանուր ակտիվները աճել են 3.46%-ով 30.06.2026թ.-ի դրությամբ համեմատած 31.12.2025 թ.-ի դրությամբ կազմելով 761 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի ընդհանուր կապիտալը աճել է 2.36%-ով 30.06.2026թ.-ի դրությամբ համեմատած 31.12.2025 թ.-ի դրությամբ կազմելով 107 մլրդ ՀՀ դրամ:

2.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 23 մլրդ ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 172,500 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 57,500 (հիսունյոթ հազար հինգ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված արտոնյալ տեսակի բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով), ընդ որում՝ արտոնյալ տեսակի բաժնետոմսերը բաժանված են 35,500 (երեսունհինգ հազար հինգ հարյուր) հատ 07.10.2016թ. թողարկման, 14,500 (տասնչորս հազար հինգ հարյուր) հատ 29.05.2020թ. թողարկման և 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) հատ 12.03.2022թ. թողարկման արտոնյալ տեսակի բաժնետոմսերի:

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2026թ. հունիսի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով:

Բանկի կանոնադրական հիմնադրամի մեծացումն իրականացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.4. Բանկի մասնաճյուղերը

Բանկն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գործող Գլխամասային գրասենյակում և թվով 18 մասնաճյուղերում:
Բանկի մասնաճյուղերի ցանկն ու հասցեները ներկայացված են ստորև բերված աղուսյակում.

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 44/2
Պարոնյան	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 15/3
Կասյան	ՀՀ, ք. Երևան, Վազգեն Առաջին Վեհափառի 5
Թումանյան	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 15
Ազատություն 12	ՀՀ, ք. Երևան, Ազատության 12
Գարեգին Նժդեհ	ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 9/45
Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 76
Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 32/8
Կիևյան	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 11ա
Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 134/8
Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 14/9
Երևան Մոլ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պող. 34/3
Հանրապետության	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 59
Աջափնյակ	ՀՀ, ք, Երևան, Աբելյան 2/1
Էվոկա Պրեմիում	ՀՀ, ք. Երևան, Զաքյան 10 շենք, 42 տարածք
Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Ռուսթավելի 63/1
Կոտայք	ՀՀ, ք. Աբովյան, Օգոստոսի 23 1/2
Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի 34
Դիլիջան	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Ա. Մյասնիկյան փողոց, 74 առևտրի սրահ

2.1.5. Բանկի կառավարման կազմակերպական կառուցվածքը

Բանկի գործող կառավարման կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.


ԲԱԺՆԵՏԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԽՈՐՀՈՒՐԴ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Աուդիտի կոմիտե
Ներքին աուդիտի վարչություն
Ռիսկերի և համապատասխանության կոմիտե
Ռազմավարության կոմիտե
Խորհրդի աշխատակազմ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Բիզնեսի գլխավոր տնօրեն, Վարչության նախագահի առաջին տեղակալ
ՄՌ և բրենդի կառավարման գլխավոր տնօրեն, Վարչության նախագահի տեղակալ
Բիզնեսի զարգացման և փոխակերպման գլխավոր տնօրեն
Գործառնությունների և վարկերի հաստատման գլխավոր տնօրեն, Վարչության նախագահի տեղակալ
Գլխավոր իրավաբանական տնօրեն
Գլխավոր ֆինանսական տնօրեն, Վարչության նախագահի տեղակալ
Գլխավոր հաշվապահ
Մանրածախ բիզնեսի տնօրեն
Կորպորատիվ բիզնեսի տնօրեն
Հաճախորդների սպասարկման տնօրեն
ՄՌ և մշակույթի տնօրեն
Տեխնոլոգիական տնօրեն
Գործառնական տնօրեն
Նեղորումային բիզնեսի վարչություն
Արժեքթղթերով գործառնությունների և թղթակիցների բաժին
Ներդրումային ծառայությունների բաժին
Գանձապետական վարչություն
Ֆինանսական շուկաների կառավարման բաժին
Թղթակցային բանկինգի բաժին
Կանխիկ միջոցների կառավարման բաժին
Մանրածախ պորտֆելների մշակման վարչություն
Մանրածախ վարկային պորտֆելների վերանայման բաժին
Մանրածախ բանկային պորտֆելների վերանայման բաժին
Մանրածախ բանկինգի վարչություն
Սպառողական վարկերի վաճառքի բաժին
Գրավոջքային վարկերի վաճառքի բաժին
Մանրածախ հաճախորդների հետ հաամագործակցությունների բաժին
Գնում-վաճառք և միջոցառ բանկինգի բաժին
Մանանաճառդների կառավարման բաժին
A
B
C
D..
Գրասայ բանկինգի վարչություն
Հաճախորդների սպասարկման վարչություն
Կոնտակտային կենտրոն
Սպասարկման կենտրոն
Կորպորատիվ պորտֆելների զարգացման վարչություն
Կորպորատիվ վարկային պորտֆելների զարգացման բաժին
Կորպորատիվ բանկային պորտֆելների զարգացման բաժին
ՓՄՁ բիզնեսի զարգացման վարչություն
ՓՄՁ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման բաժին
ՓՄՁ վաճառքների բաժին
ՓՄՁ թվային բիզնեսի զարգացման բաժին
Խոշոր կորպորատիվ բիզնեսի զարգացման վարչություն
Խոշոր կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման բաժին
Խոշոր կորպորատիվ համագործակցությունների բաժին
Առևտրի և հատուց ֆինանսավորման բաժին
Հաճախորդների սպասարկման վարչություն
Էլփոկա Պրեմիում Մանեջմենտ
Գրասայ հաճախորդների սպասարկման բաժին
Գեներալ Պրեմիում Մանեջմենտ
Գեներալ հաճախորդների սպասարկման բաժին
ՄՌ և մշակույթի զարգացման վարչություն
Տատանների ներգործության բաժին
ՄՌ գործառնությունների բաժին
Կատարողականի կառավարման բաժին
Ռեակցման և զարգացման բաժին
Մարքեթինգի և PR վարչություն
Մարքեթինգի բաժին
PR բաժին
Հատուկ նախագծերի բաժին
Հաճախորդների փորձի մշակման և ուսումնասիրության վարչություն
Հաճախորդների փորձի մշակման և վերլուծության բաժին
Հաճախորդների փորձի բարելավման բաժին
Կարոն զարգացման բաժին
Արհեստական բանականության կենտրոն
Ծրագրավորման վարչություն
Ծրագրային ապահովման և մշակման բաժին
Ենթակառուցվածքի բանկային համակարգերի մշակման բաժին
Որակի ապահովման բաժին
Ենթակառուցվածքների և գործառնությունների վարչություն
Գործառնական համակարգերի արդիականացման բաժին
SS ենթակառուցվածքների կառավարման բաժին
DevOps բաժին
SS սպասարկման բաժին
Համակարգերի վերլուծության բաժին
Նախագծերի կառավարման բաժին
Թվային պորտֆելների կառավարման վարչություն
Գործընթացների կառավարման և մեթոդաբանության վարչություն
Ռազմավարության և փոխակերպման բաժին
Գործառնական վարչություն
Վճարային գործառնությունների բաժին
Քլիրինգային և վճարահաշվարկային բաժին
Գանձապետական գործառնությունների բաժին
Աջակիների սպասարկման բաժին
Վարկային հետգործառնական վարչություն
Վարկային փաստաթղթավորման բաժին
Վարկային գործառնությունների և ավտոմատացման բաժին
Քարտերի և վճարային համակարգերի վարչություն
Քարտային տեխնոլոգիաների բաժին
Բանկոմատների և POS տերմինալների սպասարկման բաժին
Վճարային համագործակցությունների բաժին
Վճարային միջնորդների կառավարման բաժին
Տեսոնական բաժին
Վարկերի վերադիտարկման վարչություն
ՓՄՁ վարկերի վերադիտարկման բաժին
Կորպորատիվ վարկերի վերադիտարկման բաժին
Վարկերի հաստատման վարչություն
Մանրածախ վարկերի հաստատման բաժին
Կորպորատիվ վարկերի հաստատման բաժին
Ինդուստրիալ ակտիվների կառավարման վարչություն
Նախնատատական հավաքագրման բաժին
Հավաքագրման և կատարողական վարչություն
Մոնիթորինգի բաժին
Պայմանագրային աջակիության վարչություն
Կորպորատիվ պայմանագրերի բաժին
Հաճախորդների պայմանագրերի բաժին
Իրավական գործերի վարչություն
Բոնուսային ծրագրերի բաժին
Հատուկ ակտիվների կառավարման բաժին
Գնումների բաժին
Հաշվետվողական հաշվառման վարչություն
Հաշվետվողական հաշվառման և հարկերի կառավարման բաժին
ՏԻՀՄ հաշվեկշռային հոդվածների բաժին
Կարգավորող մարմինների հաշվետվությունների բաժին
Ֆինանսական արդյունքների, ակտիվների ու պատասխանատվությունների կառավարման վարչություն
Պլանավորման և կանխատեսման վերլուծության բաժին
Ծախսերի վերահսկման և շահութաբերության կառավարման բաժին
Ակտիվների, պատասխանատվությունների և կապիտալի կառավարման բաժին
Ծախսերի կառավարման վարչություն
Ծախսերի կառավարման և որակի ապահովման բաժին
Ծախսերի վերլուծման բաժին
Ծախսարդիության և մոդելավորման բաժին
Ինստիտուցիոնալ ֆինանսական կազմակերպման և ռազմավարական գործընկերությունների վարչություն
Ինստիտուցիոնալ ֆինանսական միջոցների ներգրավման և հարաբերությունների բաժին
Ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության բաժին
Միջազգային բիզնեսի ընդլայնման բաժին
Ռիսկերի կառավարման վարչություն
Ֆինանսական ռիսկերի կառավարման և մոդելավորման բաժին
Գործառնական և ՏԲ ռիսկերի կառավարման բաժին
Վարկային ռիսկի կառավարման բաժին
Մոդելների վալիդացիայի բաժին
ՆԹԻ և պատժամիջոցների համապատասխանության վարչություն
ՖԿՄՆ դեմ պայքարի և պատժամիջոցների համապատասխանության բաժին
Ձեղչարարության կանխարգելման բաժին
Կորպորատիվ անվտանգության և տեղեկատվության վարչություն
Ծախսերի ուսումնասիրության և անվտանգության ապահովման բաժին
Ֆիզիկական անվտանգության բաժին
Կարգավորող պահանջների համապատասխանության բաժին
Ներդրապահան և կիբերանվտանգության վարչություն
Ներդրատվական անվտանգության կառավարման բաժին
Կիբերանվտանգության և տեխնիկական անվտանգության բաժին
Կարդության աշխատակազմ
Գերատեսչական մարմինների հետ հարաբերությունների կառավարման բաժին

2.1.6. Բանկի համառոտ բիզնես նկարագիրը

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա մատուցում է ունիվերսալ բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին:

Բանկի հիմնական գործունեությունն է. ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկը հաճախորդների սպասարկումն իրականացնում է Գլխամասային գրասենյակի և 18 մասնաճյուղերի, ինչպես նաև հեռահար սպասարկման՝ EvocaOnline համակարգի և EvocaTouch բջջային հավելվածի միջոցով:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունն ու օրեցօր զարգացող տեմպերը ամբողջ աշխարհում, քայլելով ժամանակի պահանջներին համահունչ և լինելով նորարար բանկ՝ հաճախորդներին բանկային ծառայությունների մատուցումը պարզ, արագ և հարմարավետ դարձնելու նպատակով Բանկն աշխատում է mobile-first ձևաչափով:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլացված անդամ, Հայաստանի Ֆոնդային Բորսայի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, Հայաստանի Բանկերի Միության անդամ: 2023թ.-ին Բանկը միացել է նաև ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիային:

Հայաստանյան ֆինանսական շուկայում թվային և նորարարական լուծումների ներդրման և շուկայի զարգամանը խթանելու նպատակով, Բանկը անդամակցել է «ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի Մասնակիցների Ասոցիացիային: Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը ընդլայնելու նպատակով Բանկը սկսել է համագործակցել Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) հետ, իսկ, Բանկի հաճախորդներին մասնագիտացված լիզինգային ֆինանսավորման համար, համագործակցության պայմանագիր կնքել «Արմենիան Լիզինգ Քամփնի»-ի հետ:

Բանկը համագործակցում է նաև Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանահայկական Հիմնադրամի, Symbiotics S.A. և responsAbility շվեյցարական ներդրումային ընկերությունների հետ:

Բանկը ՀՀ-ում առաջին ֆինանսական կազմակերպությունն է, որ դարձել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային ասոցիացիայի (BACEE) լիիրավ անդամ:

Ֆինանսական միջոցների հասանելիությունն ընդլայնելու նպատակով 2022թ. Բանկը մեկնարկել է համագործակցությունը Համաշխարհային խմբի կազմում գործող Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ: Հետագայում համագործակցությունն աստիճանաբար ընդլայնվել է՝ նույն տարում ընդգրկելով շվեյցարական uSymbiotics ակտիվների կառավարչին, 2023թ.՝ շվեյցարական responsAbility ակտիվների կառավարչին, 2024թ.՝ արդեն միջազգային ֆինանսական կազմակերպություններին՝ Եվրոպական ներդրումային բանկ (EIB), ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամ (OFID), Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (BSTDB), 2025թ.՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (EBRD):

Ներկայում Բանկը համագործակցում է Հայաստանի բանկային համակարգում գործունեություն ծավալող գրեթե բոլոր միջազգային ֆինանսական կառույցների ու ազդեցության կառավարիչների (impact manager) հետ: Բացի այդ, Բանկը ներգրավված է Գերմանահայկական հիմնադրամի (GAF) կողմից և գերմանական Վերականգնման վարկերի բանկի (KfW) ու Եվրոպական ներդրումային բանկի (EIB) ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում:

Fitch Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը 2023թ. մայիսին Բանկին շնորհել է Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating) **«B»** վարկանիշ՝ **դրական** հեռանկարով և **«b»** Կենսունակության վարկանիշ (Viability Rating):

Հետագայում՝ 2024թ. փետրվարին, վարկանիշները բարելավվել են՝ սահմանվելով Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի **«B+»** վարկանիշ՝ կայուն հեռանկարով, և Կենսունակության **«b+»** վարկանիշ: Վարկանիշները վերահաստատվել են 2025թ. հունվարին:

2026թ.-ին Էվոկաբանկ-ը Moody’s Ratings-ի կողմից ստացել է Ba3 երկարաժամկետ տեղական արժույթով և արտարժույթով ավանդների և թողարկողի վարկանիշներ, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության (Ba3 positive) սուվերեն վարկանիշի նույն մակարդակում:
Բանկի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

Բանկի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

2.1.7. Բանկի տեսլականը, առաքելությունը, արժեքներն ու սկզբունքները

Բանկի տեսլականը. Լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու:

Բանկի առաքելությունը. Նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել ֆինանսական ծառայությունները պարզ, արագ, և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով:

Բանկի արժեքներն ու սկզբունքները.

Արժեքներ	Սկզբունքներ
Ազնվություն	Մենք ազնիվ ենք գործում բոլոր հարաբերություններում:
Նորարարություն	Մենք շարունակաբար ներդնում և կիրառում ենք նորարարություններ՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները:
Հուսալիություն	Մենք կայուն ենք և հուսալի թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների համար:
Թափանցիկություն	Մենք բաց ենք և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում:
Հաճախորդների վստահություն	Հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են. մենք գնահատում և ամուր ենք պահում հաճախորդների վստահությունը:
Հարմարավետություն	Մենք ձգտում ենք բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ
Գործարար հեղինակություն	Բարի համբավը մեր ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է:
Թիմային ոգի	Մենք համախմբել ենք լավագույն թիմը՝ մեր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար:

2.1.8. Բանկի ակտիվների համարժեքությունը, որակը և իրացվելիությունը.

Ակտիվների համարժեքություն

Ակտիվների համարժեքություն

30.06.2026թ.-ի կիսամյակային արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 8.0 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի

միջին մեծությանը)՝ 14,88%: Լևերիջի գործակիցը (Ակտիվների մեծության հարաբերակցությունն կապիտալի մեծությանը) կազմել է 7.1, իսկ կապիտալի համարժեքությունը (նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը) 17.78%:

Ակտիվների որակ

30.06.2026թ.-ի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը (ներառված չեն բանկերին տրված վարկեր) կազմել է 422 մլրդ ՀՀ դրամ, իսկ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում՝ 2.1%: Բանկի եկամուտ գեներացնող ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների 77.1%:

Ակտիվների իրացվելիություն

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների չկանխատեսված ընդհատման դեպքում: 30.06.2026թ.-ի դրությամբ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն (LCR) նորմատիվը կազմել է 173.5%, իսկ հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն (NSFR) նորմատիվը կազմել է 147.4%:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 30.06.2026թ.-ի դրությամբ	Փաստացի մեծություն 2025	Փաստացի մեծություն 2024	Փաստացի մեծություն 2023
$Ն_2^{1*}$	100%	173.5%	209.1%	509.4%	369.7%
$Ն_2^{2**}$	100%	147.4%	165.9%	171.5%	177.3%

* Բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն:

** Հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն:

2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոնների ի հայտ գալու դեպքում (որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա) դրանք ուղղակիորեն կանդրադառնան նաև պարտատոմսերի գնի և իրացվելիության վրա: Ստորև ներկայացված են պարտատոմսերում ներդրումների հետ կապված թողարկողին և պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի հիմնական տեսակները.

2.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Բանկն, ինչպես և ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից հատկապես կարևոր են ռիսկերի հետևյալ տեսակները.

- **Վարկային ռիսկ:** Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չէ կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ:
- **Շուկայական ռիսկ:** Շուկայական ռիսկը առաջանում է շուկայում տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկն իրենից ներկայացնում է արտարժութի, տոկոսադրույքի, գների փոփոխության հետ կապված ռիսկերի հանրագումար: Բանկը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերի կառավարմանը, որոնց անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասական հետևանք ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա և իրական վտանգ հանդիսանալ բանկային գործունեության ընթացքում:
- **Իրացվելիության ռիսկ:** Ռիսկի այս տեսակը կապված է ֆինանսական պարտավորությունները՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում, ժամանակին մարելու կարողության հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:
- **Տնտեսական ռիսկեր:** ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ բանկային համակարգի գործունեության վրա:
- **Օրենսդրական և նորմատիվային ռիսկեր:** Լինելով ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկը՝ իրականացվող օրենսդրական և նորմատիվային փոփոխությունները հնարովոր է թե դրական և թե բացասական ազդեցություն ունենան բանկերի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:
- **Գործառնական ռիսկեր:** Բանկի գործունեության հետևանքով առաջացող հնարավոր կորուստների ռիսկն է:

Բոլոր ռիսկային գործոնները անընդմեջ գտնվում են Բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը ուշադրության կենտրոնում և մշտապես մշակվում և ներդրվում են այդ հնարավոր ռիսկերի՝ ժամանակին բացահայտման, կառավարման, սահմանափակման և նվազեցման արդյունավետ մեխանիզմեր:

2.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկեր

- **Տոկոսադրույքի ռիսկ:** Շուկայում տոկոսադրույքների տատանումները կարող են էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գների վրա: Մասնավորապես,

տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, ինչը ենթադրում է, որ ներդրողը այդ պարտատոմսերի վաճառքի դեպքում կարող է չստանալ նախատեսվող շահույթը կամ նույնիսկ՝ կրել վնասներ:

Սակայն ներդրողը չի առնչվի նման ռիսկի հետ, եթե չի նախատեսում պարտատոմսերը վաճառել մինչև դրանց մարումը:

- **Իրացվելիության ռիսկ:** Չնայած նրան, որ Թողարկողը մշտապես իրականացնում է մի շարք միջոցառումներ իր կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելիությունը բարձրացնելու համար, այնուամենայնիվ չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները կարող են ցանկացած պահի իրացնել կամ ձեռք բերել իրենց համար շահավետ գներով:
- **Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացման կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:
- **Գնաճային ռիսկ:** Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում պահպանվում է գնաճը նպատակային մակարդակի սահմաններում, այնուամենայնիվ գոյություն ունի ռիսկ, որ ապագայում արտաքին կամ ներքին տնտեսական զարգացումները կարող են հանգեցնել գնաճի աճին: Գնաճի բարձրացումը կարող է նվազեցնել պարտատոմսերի եկամտայնության իրական արժեքը և ներդրողների կողմից ստացվող եկամուտների գնողունակությունը:
- **Գեոպոլիտիկ ռիսկ:** Հայաստանի Հանրապետությունը գտնվում է տարածաշրջանում, որտեղ առկա են որոշակի գեոպոլիտիկ անորոշություններ և պարբերաբար առաջացող լարվածություններ: Տարածաշրջանային կամ միջազգային քաղաքական զարգացումները կարող են բացասաբար ազդել երկրի տնտեսական միջավայրի, ֆինանսական կայունության և ներդրումային ռիսկերի վրա, ինչը իր հերթին կարող է անդրադառնալ նաև Թողարկողի գործունեության և թողարկված պարտատոմսերի եկամտաբերության վրա:
- **Արտարժույթային ռիսկ:** Երբ թողարկվող պարտատոմսերը արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել փոխարժեքի տատանումներից: Սույն ռիսկը հատկապես առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

2.3. Բանկի զարգացման միտումները

Բանկի հեռանկարային զարգացումը մշտապես գտնվել և շարունակում է գտնվել Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Այդ նպատակով Բանկում մշտապես հետևում են շուկայում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին և զարգացումներին՝ ձգտելով մշտապես համապատասխանել շուկայի նոր պահանջներին և միտումներին:

Այդ մասին են վկայում Բանկում իրականացված հիմնարար փոփոխությունները, որոնք ակնհայտ կերպով դրսևորվեցին վերջին տարիների ընթացքում:

Բանկը ներկայացավ ոչ միայն նոր բրենդով, այլև՝ նոր գաղափարախոսությամբ, նոր մշակույթով և նոր տեսլականով:

Գործելով տեղեկատվական տեխնոլոգիաների օրեցօր զարգացող ժամանակաշրջանում, կարևորելով թվային տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունները և ունենալով երկար տարիների փորձ բանկային համակարգում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա Բանկը ներդրեց հաճախորդների սպասարկման նոր մշակույթը: Հաճախորդների սպասարկումը պարզ, արագ և հարմարավետ դառնձնելու նպատակով, Բանկը սահուն անցում կատարեց mobile-first ֆորմատի:

Նոր ձևաչափում Բանկի գործունեության հաջողությունների մասին է վկայում այն փաստը, որ 7-րդ տարին անընդմեջ Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից Բանկը ճանաչվում է «Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում», «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում» (2022 և 2023թ.), ինչպես նաև՝ «Լավագույն կորպորատիվ թվային բանկը Հայաստանում» (2023թ.), Global Banking & Finance Review ամսագրի կողմից 4-րդ տարին անընդմեջ՝ «Լավագույն թվային բանկը Հայաստանում», իսկ Global Business & Finance Magazine հեղինակավոր ամսագրի կողմից Բանկը ճանաչվել է Ամենանորարար թվային բանկը Հայաստանում (2023 և 2024թ.), Ամենաարագ զարգացող բանկը Հայաստանում (2024թ.): Բանկը նաև Visa International-ի կողմից ստացել է մրցանակ՝ Strong Visa Premium Issuance-ի համար:

2023 թվականի մայիս ամսին Բանկը ներկայացրեց իր նոր՝ EvocaTOUCH հավելվածը՝ ժամանակակից, նորագույն թվային լուծումներով ու անսահմանափակ հնարավորություններով: Վերջինս Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է 2023թ.-ի Լավագույն սպառողական մոբայլ բանկային հավելվածը Հայաստանում:

2023թ. փետրվար ամսին Բանկը թողարկեց իր նոր թվային պրոդուկտը՝ EvocaINVEST ներդրումային հավելվածը, որի միջոցով Բանկի հաճախորդները հնարավորություն ունեն առանց բանկ այցելելու գնել և վաճառել ավելի քան 20 երկրների (ԱՄՆ, Եվրոպա, Ասիա) ֆինանսական շուկաներում շրջանառող բաժնետոմսեր, Ֆոնդի փայեր (ETFs) և պարտատոմսեր:

2025 թվականին Էվոկա բանկը շարունակեց իր հաջողությունների շարքը՝ հաստատելով իր առաջատար դերը ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի ֆինանսական շուկայում: The Digital Banker միջազգային հարթակը Բանկը ճանաչեց «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում 2025թ.», իսկ International Investor Magazine հեղինակավոր ամսագրի կողմից այն արժանացավ միանգամից երկու կարևոր մրցանակների՝ «Լավագույն բանկը Հայաստանում 2025թ.» և «Ամենանորարար ՓՄՁ վարկավորման գործընկերը»: Նույն թվականին Global Business &

Finance Magazine–ը կրկին բարձր գնահատեց Բանկի թվային ձեռքբերումները՝ պարգևատրելով նրան «Լավագույն բջջային բանկը Հայաստանում» և «Ամենանորարար թվային բանկը Հայաստանում» մրցանակներով: Բացի այդ, Mastercard միջազգային վճարային համակարգի կողմից Բանկը ճանաչվեց «Excellence in New Products Development» մրցանակի արժանացած, իսկ BACEE (Banking Association for Central and Eastern Europe) կազմակերպությունը Բանկին շնորհեց մրցանակ «Միջազգային բանկային համագործակցության զարգացման համար»:

2026 թվականը Evocabank-ի համար նշանավորվել է հերթական միջազգային հաջողություններով:
Evocabank-ը 2026 թվականին արժանացել է Mastercard-ի հեղինակավոր «Excellence in Travel Segment Innovation» մրցանակին՝ ճամփորդական սեգմենտում նորարարական լուծումներ ստեղծելու և հաճախորդների համար միջազգային մակարդակի ծառայություններ զարգացնելու համար: Սա բանկի առաջին միջազգային մրցանակն էր 2026 թվականին, որը ևս մեկ անգամ հաստատեց Evocabank-ի նորարարական մոտեցումն ու միջազգային ճանաչումը:

Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում 2026»՝ The Digital Banker-ի կողմից Evocabank-ը երկրորդ տարին անընդմեջ արժանացել է «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում» (Best SME Bank in Armenia) միջազգային մրցանակին, որը շնորհվում է հեղինակավոր The Digital Banker կազմակերպության կողմից: Այս բարձր գնահատականը վկայում է բանկի հետևողական աշխատանքի, երկարաժամկետ ռազմավարության և փոքր ու միջին բիզնեսների զարգացմանն ուղղված շարունակական աջակցության մասին:

Չնայած նոր ձևաչափում արդեն իսկ գրանցած հաջողություններին՝ ունենալով իր առջև դրված բարձր նշաձողեր՝ Բանկը շարունակում և շարունակելու է պահպանել և ավելի ամրապնդել իր դիրքերը որպես լավագույն թվային բանկ՝ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով թվային, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բլոկների զարգացումը:

Ինչ վերաբերում է արժեթղթերի շուկայում Բանկի ունեցած դիրքին և առաջիկա զարգացմանը՝ Բանկը մշտապես եղել է և շարունակում է մնալ արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից մեկը:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Բանկի գործունեությանը, ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից հրապարակվող շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման ցուցանիշների համաձայն, Բանկը եղել և շարունակում է մնալ ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Գործակալ չհանդիսացող մասնակիցներից ամենաբարձր ակտիվություն, հետևաբար նաև Գործակալ դառնալու առաջնահերթություն ունեցող մասնակիցներից մեկը:

Ներկայումս, Բանկը աշխատանքներ է կատարում կատարելագործելու EvocaINVEST հավելվածը, որպեսզի ներդրողներին համար առավել դյուրին լինի գործարքներ կատարել արտասահմանյան ֆինանսական շուկաներում շրջանառող արժեթղթերով:

2.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին

Բանկի 2023 և 2024 թվականներ ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից:

«Քեյ Փի Էմ Ջի Արմենիա»-ն հանդիսանում է KPMG International Cooperative կազմակերպությանն անդամակցող «Քեյ Փի Էմ Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: KPMG-ի միջազգային ցանցի կենտրոնական կազմակերպությունը՝ KPMG International Limited-ը, գրանցված է Անգլիայում, իսկ գլխավոր գրասենյակը գտնվում է Լոնդոնում: «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՍՊԸ-ի աուդիտորական կազմակերպության տնօրեն է հանդիսանում Իրինա Գևորգյանը:

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ. +374 10 595999 Կայք. http://www.kpmg.am/

Բանկի 2025 թվականներ ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «**Էրնսթ ընդ Յանգ**» ՓԲԸ-ի կողմից:

«**Էրնսթ ընդ Յանգ**» ՓԲԸ-ն հանդիսանում է Ernst & Young Global Limited-ի անդամ ընկերություն: 2013 թվականից գործում է EY ապրանքանիշի ներքո, որն իրենից ներկայացնում է ընկերության անվանման հապավումը: Գլխամասային գրասենյակը գտնվում է Լոնդոնում: «**Էրնսթ ընդ Յանգ**» ՓԲԸ-ի աուդիտորական կազմակերպության տնօրեն է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 2, «Կամար» բիզնես կենտրոն
Հեռ. +374 60 50 7777Կայք. www.ey.com/am

Բանկի 2026թ ֆինանսական գործունեության աուդիտը իրականացնելու է «Էրնսթ Ընդ Յանգ» ("EY") ՓԲԸ-ն:

2.5. Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը

Համաձայն Բանկի կանոնադրության, Բանկի կառավարման մարմիններն են.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի Խորհուրդը, որն ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Բանկի Վարչությունը,
- Բանկի Վարչության նախագահը:

2.5.1. Բանկի խոշոր բաժնետեր

Բանկի **ուղղակի նշանակալից մասնակիցը** Մարետա Ռուդիկի Գևորկյանն է, ում պատկանում են Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի 100%-ը, ինչպես նաև Բանկի՝ 2016թ.

թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 100%-ը, 2020թ. թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 99.95%-ը և 2022թ. թողարկման արտոնյալ բաժնետոմսերի 100%-ը:

2.5.2. Բանկի Խորհուրդը

Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում:

Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող գործունակ անձը, որը համապատասխանում է ՀՀ գործող օրենքների և ՀՀ ԿԲ իրավական ակտերի չափանիշներին: Խորհրդի անդամները ընտրվում են բաժնետերերի տարեկան ժողովի կամ խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից:

Սույն Ծրագրային ազդագրի կազմման պահին Բանկի Խորհուրդը բաղկացած է 7 անդամներից.

Պաշտոն	Անուն, Ազգանուն	Փորձառություն
Խորհրդի նախագահ	Վարուժան Ավետիքյան	18 տարի
Խորհրդի անդամ	Վազգեն Գևորկյան	31 տարի
Խորհրդի անդամ	Խոսե Մարիա Մորենո Դե Բարրեդա	34 տարի
Խորհրդի անդամ	Մարտա Էչարրի	20 տարի
Խորհրդի անդամ	Մարինա Բուկի	27 տարի
Խորհրդի անդամ	Արկադի Սանդլեր	27 տարի
Խորհրդի անդամ	Պիեր Կազիյակ	41 տարի

2.5.3. Բանկի Վարչությունը և Վարչության նախագահը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, իրականացնում են Բանկի Վարչությունը և Բանկի Վարչության Նախագահը:

Բանկի Վարչության անդամները նշանակվում են խորհրդի կողմից: Բանկի վարչության անդամների հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի վարչության նախագահը:

Բանկի Վարչության նախագահը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի վարչության նախագահի հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի խորհրդի նախագահը:

Բանկի Վարչությունը բաղկացած է Վարչության նախագահից և Վարչության 7 անդամներից:

Պաշտոն	Անուն, Ազգանուն	Փորձառություն
Վարչության նախագահ	Կարեն Եղիազարյան	26 տարի
Վարչության նախագահի առաջին տեղակալ	Արմեն Հակոբյան	34 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Տաթևիկ Խաչատրյան	15 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Հայկ Պետրոսյան	35 տարի
Վարչության նախագահի տեղակալ	Լիլիթ Գաբոյան	18 տարի
Գլխավոր հաշվապահ	Էմմա Ջանինյան	15 տարի
Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	Սմբատ Մարտիրոսյան	16 տարի
Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ	Միեր Սահակյան	23 տարի

Սույն ծրագրային ազդագրի լրացումը Կենտորնական բանկ մուտք անելու դրությամբ Բանկի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 704 աշխատակից:

2.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փոխարկելի, անբաժանելի պարտատոմսեր են:

Բնութագրիչի անվանումը	Հիմնական տվյալները	Հիմնական տվյալները	Հիմնական տվյալները
Արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Թողարկման ընդհանուր ծավալը	25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ	35,000,000 (երեսուն հինգ միլիոն) ԱՄՆ դոլար	15,000,000 (տասնհինգ միլիոն) Եվրո
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար)	100 (մեկ հարյուր)	100 (մեկ հարյուր)
Տեղաբաշխվող պարտատոմ-սերի ընդհանուր քանակը	2,500,000 հատ	350,000 հատ	150,000 հատ
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի

	տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մարման օրը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով	Ազատ շրջանառության իրավունքով	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	Առանց ապահովվածության	Առանց ապահովվածության	Առանց ապահովվածության
Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ)

	աշխատանքային օր առաջ	աշխատանքային օր առաջ	աշխատանքային օր առաջ

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար ԱՄՆ դոլարով, եվրոյով թողարկված պարտատոմսերի համար եվրոյով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ինչպես նաև Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները, վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.7. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

2.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանում (հազ. ՀՀ դրամ)	2026 I-ին կիսամյակ (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)	2023 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,033,448	21,393,883	14,609,195	11,035,980
Սեփական կապիտալի միջին մեծություն	107,988,428	94,704,653	76,831,458	65,198,159
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)*	14.88	22.59	19.01	16.93
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,033,448	21,393,883	14,609,195	11,035,980
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	733,374,732	643,977,561	498,934,868	396,833,688
Ակտիվների շահութաբերություն (ROA)*	2.19	3.32	2.93	2.78
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,033,448	21,393,883	14,609,195	11,035,980
Գործառնական եկամուտ	21,039,663	44,772,745	30,140,227	24,616,922
Զուտ շահույթի մարժա (NPM)	38.18	47.78	48.47	44.83
Գործառնական եկամուտ	21,039,663	44,772,745	30,140,227	24,616,922
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	733,374,732	643,977,561	498,934,868	396,833,688
Ակտիվների օգտագործման գործակից (AU)*	5.74	6.95	6.04	6.20

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	733,374,732	643,977,561	498,934,868	396,833,688
Սեփական կապիտալի միջին մեծություն	107,988,428	94,704,653	76,831,458	65,198,159
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.79	6.80	6.49	6.09
Զուտ տոկոսային եկամուտ	13,168,439	22,874,131	18,157,247	15,158,831
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	551,380,938	520,927,747	409,684,863	314,745,304
Զուտ տոկոսային մարժա (NIM)*	4.78	4.39	4.43	4.82
Տոկոսային եկամուտ	28,677,273	48,697,895	37,196,362	29,047,260
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	551,380,938	520,927,747	409,684,863	314,745,304
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն*	10.40	9.35	9.08	9.23
Տոկոսային ծախսեր	15,508,834	25,823,764	19,039,115	13,888,429
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	639,767,753	616,754,756	456,435,443	367,167,871
Տոկոսային ծախս առաջացնող պարտավորությունների ծախսատարություն*	4.85	4.19	4.17	3.78

Սպրեդ*	5.55	5.16	4.91	5.45
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի և արտոնյալ բաժնետոմսերի գծով կուտակված շահաբաժինների նվազեցումից հետո	8,033,448	21,393,883	14,609,195	11,035,980
Հասարակ բաժնետոմսերի միջին կշռված քանակ	172,500	172,500	172,500	172,500
Զուտ շահույթ մեկ հասարակ բաժնետոմսի հաշվով (EPS)*	93.14	124.02	84.69	63.98

*Աղյուսակում ներկայացված միջանկյալ եռամսյակային ցուցանիշները հաշվարկված են աուդիտ չանցած ցուցանիշների վրա

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Ռիսկային գործոններ

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոնների ի հայտ գալու դեպքում (որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա) դրանք ուղղակիորեն կանդրադառնան նաև պարտատոմսերի գնի և իրացվելիության վրա:

Իրացվելիության ռիսկը. Ի տարբերություն պետական պարտատոմսերի, որոնց համար առկա է համեմատաբար իրացվելի շուկա, կորպորատիվ պարտատոմսերի պարագայում, միշտ առկա է ռիսկ, որ ներդրողն ի վիճակի չի լինի վաճառել իր կորպորատիվ պարտատոմսերը հնարավորինս արագ և շահավետ գնով, քանի որ ելնելով տնտեսության վիճակից՝ շուկան կարող է լինել փոքր՝ կազմված միայն մի քանի վաճառողներից և գնորդներից: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը նախատեսում է ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում: Այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, սակայն դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք:

Արտարժութային ռիսկ. Երբ թողարկվող պարտատոմսերը արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել կապված փոխարժեքների տատանումների հետ: Սույն ռիսկը հատկապես առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքները և պարտատոմսերի գները իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ երբ շուկայում տոկոսադրույքները նվազում են պարտատոմսերի գները շուկայում աճման միտում ունեն, և հակառակը՝ երբ տոկոսադրույքներն աճում են, պարտատոմսերի գները նվազման միտում ունեն: Այդ իսկ պատճառով տոկոսադրույքների փոփոխությունները կարող են հանգեցնել թե՛ թողարկողների և թե՛ ներդրողների կողմից պարտատոմսերի համապատասխանաբար թողարկման և ներդրումների իրականացման մասով քաղաքականության վերանայման և փոփոխման:

Վերաներդրման ռիսկ. Հավանականությունը, որ թողարկողի պարտատոմսերում կատարված սկզբնական ներդրումից ստացվող եկամուտներն (արժեկտրոնային վճարումներ կամ պարտատոմսերի մարման ժամանակ ստացվող գումարներ) այլևս հնարավոր չի լինի առնվազն նույն եկամտաբերությամբ ներդնել: Նշյալ վերաներդրման ռիսկը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ներդրողների երկարաժամկետ ներդրումների վրա, սակայն էական գործոն չի կարող հանդիսանալ կարճաժամկետ ներդրումների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման,

արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Գնաճային ռիսկ. Երբ ներդրողը գնում է պարտատոմս, ի սկզբանկե ակնկալում է որոշակի եկամատաբերություն մինչև պարտատոմսի մարման ժամկետը կամ մինչև պարտատոմսն օտարելը, որը կարող է լինել ֆիքսված կամ փոփոխուն: Սակայն գնաճի բարձր մակարդակի դեպքում արաջարկվող պարտատոմսերի իրական եկամատաբերությունը կարող է դառնալ զրոյական կամ նույնիսկ բացասական:

3.2 Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակը միջոցների ներգրավումն է, որոնք ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը:

3.2.1 Թողարկման վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ներկայացվում են ՀՀ ԿԲ և հրապարակվում՝ տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Թողարկողը պարտավորվում է թողարկման վերջնական պայմանները հրապարակել իր ինտերնետային կայքում:

3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

3.3.1 Պարտատոմսերի տեսակը և դասը

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փոխարկելի, անբաժանելի պարտատոմսեր են: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

Թողարկվող պարտատոմսերը ապահովված չեն:

3.3.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3.3 Պարտատոմսերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական

Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, հեռ.՝ +374 60 61 55 55, ինտերնետային կայք՝ www.cda.am)՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

3.3.4 Պարտատոմսերի անվանական արժեքը և քանակը

Սույն ծրագրային ազդագրի շրջանակներում Բանկը նախատեսում է տեղաբաշխել 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ, 35,000,000 (երեսուն հինգ միլիոն) ԱՄՆ դոլար և 15,000,000 (տասնհինգ միլիոն) Եվրո անվանական ծավալով պարտատոմսեր:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար և եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) եվրո: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում կազմում է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) հատ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ, եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 150,000 (հարյուր հիսուն հազար) հատ:

3.3.5 Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո:

3.3.6 Տեղեկատվություն պարտատոմսերի դասակարգման վերաբերյալ

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- *առաջին*՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- *երկրորդ*՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- *երրորդ*՝ ՀՀ և օտարերկյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ մինչև 7 միլիոն դրամին համարժեք չափով: Ընդ որում՝ Բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում՝ տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք

չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող մասը՝ չորրորդ հերթով:

• *չորրորդ*՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

• *հինգերորդ*՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,

• *վեցերորդ*՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները,

• *յոթերորդ*՝ բանկի մասնակիցների պահանջները:

Յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Բանկի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են չորրորդ հերթով՝ բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են երրորդ հերթով: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով Բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

ա) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.

բ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է,

գ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամի չափով,

դ) եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային

բանկային ավանդը՝ յոթ միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս՝ առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:
Ավանդների հատուցումը երաշխավորում է Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամը (ՀՀ ք. Երևան, 0010 Մ. Խորոնացի 15, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, հեռ.՝ +374 10 58 35 14, ինտերնետային կայք՝ www.adgf.am):
Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):
Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է նրա առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում իր մասնաբաժնի հանրագումարը՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե ներդրողն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Խնդրահարույց պարտավորությունների տեսակները, հատուցման ենթակա ավանդի հաշվարկման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Երկու կամ ավելի ներդրողների համատեղ բանկային ավանդը համարվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ներդրողի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ներդրողների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդը ներդրողների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից միացող յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ներդրողին պատկանող ժամկետային ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ներդրողի բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 (հազար) հայկական դրամից:

3.3.7 Պարտատոմսերից բխող իրավունքները

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

1. ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իր սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
2. Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,
3. Եթե համապատասխան արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
4. Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
5. Բանկի կողմից պարտատոմսերի մարման գումարը և/կամ արժեկտրոնի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարմանն ուղղված օրենսդրությամբ թույլատրված գործողություններ,
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը,
7. «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,
8. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ, պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով
նախատեսված այլ պարտականություններ:

3.3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը, վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց վճարվելու է արժեկտրոնային տոկոսադրույք, որի մեծությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից

առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար ԱՄՆ դոլարով, եվրոյով թողարկված պարտատոմսերի համար եվրոյով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս հաշվեհամարներին համապատասխան դրամային փոխանցումների միջոցով: ՀՀ տարածքից դուրս գործող բանկերի հաշվեհամարներին փոխանցումների պարագայում միջազգային փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է տվյալ ներդրողը:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ սխալ լինելու դեպքում՝ գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվին՝ մինչև պարտատոմսի սեփականատիրոջ/անվանատիրոջ կողմից համապատասխան հանձնարարականի ստացումը:

Արժեկտրոնի կուտակումը իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV * \frac{C}{k} * \frac{DCS}{DCC}$$

AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է

C -տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը

Օրերի հաշվարկման պայմանականությունը թողարկվող պարտատոմսերի համար սահմանվում է **փաստացի/փաստացի** (Actual/Actual)-ը, ընդ որում

DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/կուտակման սկզբի ամսաթվից մինչև գործարքի կատարման օրը եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում **(D2M2Y2 - D1M1Y1)**

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրվա և գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում **(D3M3Y3 - D1M1Y1)**:

D1M1Y1 - գործարքի օրվան նախորդող արժեկտրոնի վճարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է
D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է
D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթիվն է:

3.3.9 Պարտատոմսերի մարման ժամկետը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերը մարվելու են անվանական արժեքով: ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտատոմսերի մարումն իրականացվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով, անկանխիկ եղանակով:

Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարումն իրականացվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ պարտատմոսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց բանկային հաշիվներին համապատասխան դրամային փոխանցումների միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ սխալ լինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի ստացումը:

Թողարկողի կողմից պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.10 Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ՝ սույն Ազդագրի **3.4.3.1** կետում բերված բանաձևի համաձայն:

3.3.11 Թողարման վերաբերյալ տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թիվ 11 որոշումն ընդունվել է 2026 թվականի օգոստոսի 8-ին, Բանկի Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների վերաբերյալ որոշումների կայացումը վերապահվել է Բանկի Վարչությանը:

3.3.12 Շրջանառության սահմանափակումները

ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ վաճառել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և/կամ առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով: Միևնույն ժամանակ ներդրողները պետք է ի նկատի ունենան, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից դուրս (ֆոնդային բորսա) վաճառել կարգավորվող շուկայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված արժեթղթերը:

3.3.13 Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկումը

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց դեպքում) և եկամտային հարկ (ֆիզիկական անձանց դեպքում)

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ներկա պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Բանկի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2025թ. Հունվարի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև տվյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առեւտրին թույլատրվել) են մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է որպես ֆիզիկական անձի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերություն: Ֆիզիկական անձանց պարագայում հարկման ենթակա է միայն պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտը: Ներկա պահին եկամտահարկի դրույքաչափը 10 տոկոս է: Բանկի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2025թ. Հունվարի 1-ից ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերը, որոնց մարման ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առեւտրին թույլատրվել) են մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

3.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են հրապարակային առաջարկի միջոցով, իսկ տեղաբաշխումը սկսելու օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.1 Առաջարկի ընդհանուր ծավալը

Սույն ծրագրային ազդագրի շրջանակներում Բանկը նախատեսում է տեղաբաշխել 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ, 35,000,000 (երեսուն հինգ միլիոն) ԱՄՆ դոլար և 15,000,000 (տասնհինգ միլիոն) Եվրո անվանական ծավալով պարտատոմսեր:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար և եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) եվրո: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում կազմում է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) հատ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ, եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 150,000 (հարյուր հիսուն հազար) հատ:

Տեղաբաշխումը կարող է իրականացվել մի քանի տրանշերով: Թողարման և տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

3.4.1.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից՝ Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման սկզբի ամսաթվերը համընկնում են: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են հրապարակային առաջարկի միջոցով:

Հրապարակային առաջարկի սկզբի օրվանից անվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս տվյալ տեղեկությունը կարող է հրապարակել, տարածել նաև այլ միջոցներով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):
Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ծրագրային ազդագրի լրացման հրապարակումից հետո:
Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային

եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:
ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում Ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ Հայտերում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Տեղաբաշխման ընթացքում Հայտերի բացակայությունը և պարտատոմսերով գործարքների չկատարումը պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչելու հիմք չեն:

3.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաշվի օպերատորներից որևէ մեկում ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:

Պոտենցյալ ներդրողները Պարտատոմսերի Ծրագրային ազդագրին կարող են ծանոթանալ Բանկի գործունեության վայրից՝ ՀՀ ք. Երևան, 0010, Հանրապետության 44/2, ինչպես նաև Բանկի ինտերնետային կայքից՝ www.evoca.am:

Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները պետք է պատշաճ կերպով լրացնեն և Բանկ ներկայացնեն սույն Ազդագրի Հավելված 1-ում (իրավաբանական անձանց համար) կամ Հավելված 2-ում (ֆիզիկական անձանց համար) ներկայացված պարտատոմսերի ձեռքբերման Հայտը (այսուհետ Հայտ), որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Հայտը պարտադիր պետք է պարունակի Ներդրողի բանկային հաշվեհամարի և արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկություններ: Հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում ժամը 09:30-16:30-ն ընկած ժամանակահատվածում:

Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի **3.4.3.1** կետում բերված բանաձևով) այդ նպատակով բացված բանկային հաշվին/հաշիվներին մուտքագրելուց հետո:

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով Բանկում բացված դրամային 1660043150805500, դոլարային 1660043125094401 և եվրոյի 1660000979710145 հաշվեհամարներին: Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարները թողարկման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին մուտքագրվում են կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում Ներդրողը Հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև (եթե տվյալ ներդրողը չի հանդիսանում Բանկի հաճախորդ) հայտում նշում է այլ բանկում ունեցած համապատասխան արժույթով հաշվի համար: Անկանխիկ եղանակով գումար փոխանցելու դեպքում Ներդրողը Հայտին կից պարտավոր է ներկայացնել նաև ձեռք բերման ենթակա Պարտատոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե տվյալ Ներդրողը Բանկի հաճախորդ չի հանդիսանում:
Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները թողարկողման նպատակով Բանկում բացված բանկային հաշվին/հաշիվներին մուտքագրվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված կհամարվեն տվյալ աշխատանքային օրը, իսկ եթե համապատասխան գումարները մուտքագրվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված կհամարվեն մուտքագրմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը կորոշվի այդ օրվա հաշվարկով: Ընդ որում, եթե Հայտում նշված Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը թողարկողման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին մուտքագրվում է մաս առ մաս, ապա Հայտի համապատասխան դրամական միջոցների մուտքագրման ժամ կհամարվի դրամական միջոցների վերջին մասի մուտքագրման ժամը:

Թողարկողման նպատակով Բանկում բացված հաշվին/հաշիվներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ին է ներկայացնում պարտատոմսերի փոխանցման հանձնարարական՝ Թողարկողի թողարկման հաշվից ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման համար:

Տեղաբաշխման ողջ ընթացքում, յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար թողարկողման նպատակով Բանկում բացված բանկային հաշվին/հաշիվներին հավաքագրված ողջ գումարը կարող է ազատ տնօրինվել Բանկի կողմից:

Բանկը մերժում է սույն բաժնով սահմանված կարգից շեղումներով ներկայացված Հայտերի կատարումը:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի Հայտեր:

3.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ Հայտի և/կամ Հայտերի մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ Հայտում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է Հայտը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված Հայտերի դեպքում, եթե այդ Հայտներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ Հայտերը բավարարվում են համամասնորեն՝ ըստ Հայտերում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր Հայտով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Չբավարարված/մասնակի բավարարված Հայտերի համապատասխան դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայտերում Ներդրողի կողմից նշված բանկային հաշվին/հաշիվներին փոխանցելու միջոցով:

3.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ Բանկից կամ իրենց սպասարկող Հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից:

Պարտատոմսերի ձեռքբերման Հայտի նարկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների Հայտերը համարվում են անվավեր:

Ներդրողը կարող է հետկանչել նախկինում ներկայացված Հայտը համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով՝ եթե տվյալ Հայտը մասնակի կամ ամբողջությամբ չի բավարարվել և տվյալ Հայտի հիման վրա գործարք չի կատարվել:

Հայտի հետկանչման դիմումը բավարարելու արդյունքում Ներդրողին վերադարձման ենթակա գումարը, Հայտում կամ Դիմումի մեջ նշված հաշվեհամարին փոխանցվում կամ կանխիկ տրամադրվում է Դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.1.6 Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.7 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով Բանկում բացված հաշվեհամարին:
Համապատասխան Հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց Հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

3.4.1.8 Առաջարկի արդյունքների հրապարակումը

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը, տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

3.4.1.9 Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման Հայտերի և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում Հայտի համաձայն վճարումը Թողարկման նպատակով Բանկում բացված հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

3.4.2 Տեղաբաշխման պլանը

3.4.2.1 Ներդրողների խմբերը

Սույն Ծրագրային ազդագրով ներկայացվող առաջարկն ուղղված է ներդրողների բոլոր խմբերին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և/կամ ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի:

3.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողն իր կողմից ներկայացված հայտի բավարարման մասին տեղեկանում է Թողարկողից, մինչև Հայտի ներկայացման աշխատանքային օրվա ավարտը հնարավոր սեղմ ժամկետներում: Ներդրողները արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կամ հաշվետվություն կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող պահառուից կամ Հաշվի օպերատորից: Հայտերի բավարարման մասին ներդրողը տեղեկացվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման Հայտը/Հայտերը:

3.4.3 Առաջարկի գինը:

3.4.3.1 Պարտատոմսերի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+\tau}} + \frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$\tau = \frac{DSN}{DCC}$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,
f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը
C - տարեկան արժեկտրոնը ***100*** միավոր անվանական արժեքի դիմաց
y - մինչև մարում եկամտաբերություն:

3.4.4 Տեղաբաշխումը

3.4.4.1 Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված չէ երաշխավորված տեղաբաշխում:

3.4.4.2 Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Սույն Ծրագրային ազդագրով նախատեսված պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն (լավագույն ջանքերի գործադրմամբ, չերաշխավորված եղանակով) իրականացնելու է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 44/2):

3.4.4.3 Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն է՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ տեղաբաշխողների խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

3.4.4.4 Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

3.4.4.5 Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Թողարկվող պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ում (ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 44/2) բացված հաշվեհամարին:

Թողարկվող պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարումն իրականացվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555, էլ.փոստ՝ info@amx.am) միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից («Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԲ ենթապահառու)՝ վերջինիս մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր է հանդիսանում «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԲ-ում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

3.5.1 Առևտրին թույտվությունը

Սույն Ծրագրային ազդագրում ներկայացված պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո հինգ աշխատանային օրվա ընթացքում Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ն կարող է չբավարարել Բանկի հայտը: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը համարվում է չեղյալ և համապատասխան գումարները Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում սույն Ծրագրային ազդագրի **3.4.1.2** կետում սահմանված կարգով:

Տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն չեղյալ ճանաչելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

Թողարկված պարտատոմսերը տրանշերով տեղաբաշխման դեպքում՝ յութաքանչյուր առանձին տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար:

3.5.2 Շուկաները

Տվյալ պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով առաջարկվող պարտատոմսերը որևէ շուկայում հրապարակային առևտրի թույլատրված չեն:

3.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը կարող է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր՝ երկրորդային շուկայում սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերի իրացվելությունն ապահովելու նպատակով:

Ներդրողները Թողարկողի պարտատոմսերի համար ներգրավված շուկա ստեղծող(ներ)ի մասին կարող են տեղեկանալ Հայաստանի ֆոնդային բորսայի կայքից՝ www.amx.am:

3.6 Լրացուցիչ տեղեկատվություն

3.6.1 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մասում ներկայացված տեղեկությունների հետ կապված խորհրդատու հանդես չի եկել:

3.6.2 Բացի սույն Ծրագրային ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ծրագրային ազդագրի Հավելված 6-ում:

3.6.3 Ծրագրային ազդագրի սույն մասում ներկայացված տեղեկատվության մեջ երրորդ անձանցից ստացված տեղեկություններ առկա չեն:

3.6.4 Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Անկախ աուդիտորները

Բանկի 2023 և 2024 թվականներ ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի կողմից:

«Քեյ Փի Էմ Ջի (KPMG)»-ն հանդիսանում է միջազգային աուդիտորական և խորհրդատվական ընկերությունների ցանց, որն աշխարհի խոշորագույն աուդիտորական կազմակերպություններից մեկն է: KPMG-ի միջազգային ցանցի կենտրոնական կազմակերպությունը՝ KPMG International Limited-ը, գրանցված է Անգլիայում, իսկ գլխավոր գրասենյակը գտնվում է Լոնդոնում:

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ. +374 10 595999 Կայք. http://www.kpmg.am/

Բանկի 2025 թվականներ ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «**Էրնսթ ընդ Յանգ** ՓԲԸ-ի կողմից: «**Էրնսթ ընդ Յանգ**» ՓԲԸ-ն հանդիսաում է բրիտանական աուդիտորական-խորհրդատվական ընկերություն, աշխարհի խոշորագույն աուդիտորական ընկերություններից մեկը (մտնում է աուդիտորական ընկերությունների «Մեծ քառյակի» մեջ): 2013 թվականից գործում է EY ապրանքանիշի ներքո, որն իրենից ներկայացնում է ընկերության անվանման հապավումը: Գլխամասային գրասենյակը գտնվում է Լոնդոնում:

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 2, «Կամար» բիզնես կենտրոն
Հեռ. +374 60 50 7777
Կայք. www.ey.com/am

Բանկի 2026թ ֆինանսական գործունեության աուդիտը իրականացնելու է «Էրնսթ Ընդ Յանգ» ("EY") ՓԲԸ-ն: Աուդիտորի փոփոխման հիմնական պատճառը հանդիսանում է կնքված պայմանագրի սակագների վերաբերյալ անհամաձայնությունները, ինչի հետևանքով Բանկի բաժնետերերի 14.04.2025թ.-ի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ որոշում է կայացվել փոփոխել ֆինանսական գործունեության աուդիտորին:

4.2 Ռիսկային գործոններ

Ներքոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման վատթարացմանը, ինչը հավանական է, որ կարող է հանգեցնել Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը, արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը և մարումը: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացում, որոնք հետագայում կարող են անցանկալի հետևանք ունենալ

Թողարկողի ֆինանսական վիճակի, արդյունքերի, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների (իրացվելիություն, եկամտաբերություն) վրա:

Բանկի գործունեությանն առնչվող հիմնական ռիսկերն են.

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը Բանկի վարկառուների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների ժամանակին և ամբողջական չկատարելու ռիսկն է, որը կարող է հանգեցնել բանկի շահույթի և/կամ կապիտալի նվազմանը: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Նշված ռիսկը կառավարելու համար Բանկը սահմանել է վարկային ռիսկի կենտրոնացման սահմանաչափեր առանձին փոխառուների և նրանց փոխկապակցված խմբերի, տնտեսության ճյուղերի և աշխարհագրական վայրերի նկատմամբ:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ ռիսկի դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

	Համախառն վարկային պորտֆելը	Չաշխատող վարկեր	Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում
30.06.2026թ.-ի դրությամբ	426,181,360	8,929,995	2.1%
2025	364,073,113	9,311,221	2.56%
2024	280,229,730	8,922,472	3.18%

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը Բանկի կողմից իր պարտավորությունները ժամանակին և ամբողջական կերպով չկատարելու ռիսկն է, որը կարող է առաջանալ ակնկալվող դրամական հոսքերի չստացման, անակնկալ կորուստների, օրենսդրական փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկն իր միջոցների մի մասը ներդնում է բարձր իրացվելի ակտիվներում, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն ու ծավալները և իրականացնում դրամական հոսքերի պարբերական մոնիթորինգ:

30.06.2026-ի դրությամբ իրացվելիության նորմատիվները (LCR, NSFR) կազմում են 173.5%, 147.4% համապատասխանաբար: Բարձր իրացվելի միջոցների սթրեսային արտահոսքի գնահատման համար կիրառվել է ՎաՌ մեթոդը՝ 99% վստահության մակարդակով, որի արդյունքում բազային սցենարում LCR-ի և NSFR-ի ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 120.1% և 130.5%՝ բարձր լինելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն մակարդակից:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Գնային ռիսկ: Նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է: Գրավների արժեզրկման ռիսկի կառավարման տեսակետից կիրառվում է վարկ/գրավ ցուցանիշի ճկուն կառավարում, գրավների կենտրոնացվածության կառավարում, ինչի արդյունքում չաշխատող ակտիվների կեսից ավելին վերադարձվում են առնվազն մեկ տարվա ընթացքում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը Բանկի՝ կորուստներ կրելու հավանականությունն է շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով: Նշված ռիսկի զսպման նպատակով Բանկում վերահսկվում է և պարբերաբար վերանայվում է ակտիվների գնագոյացման գործընթացը: Բանկում տոկոսադրույքի կառավարման նպատակով կիրառվում են եկամտաբերության կորի փոփոխության, տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ժամկետային անհամապատասխանության և շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների գծով ռիսկերի վերլուծություններ:

30.06.2026-ի դրությամբ, սթրես թեստերը ցույց են տալիս, որ շուկայական տոկոսադրույքների՝ միջինում 1.25 տ.կ. անբարենպաստ փոփոխության դեպքում նորմատիվային կապիտալի նկատմամբ տնտեսական կապիտալի նվազման ազդեցությունը չի գերազանցի 2.2%-ը:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Բանկը սահմանել է արտարժութային դիրքերի ներքին առավելագույն սահմանաչափեր և իրականացնում է դրանց պահպանման օրական վերահսկողություն:

Արտարժութային ռիսկի ազդեցությունը կապիտալի վրա գնահատվում է VaR մեթոդաբանության կիրառմամբ՝ 99% վստահության մակարդակով՝ հիմք ընդունելով հնարավոր առավելագույն տարեկան կորուստի և նորմատիվային կապիտալի հարաբերակցությունը: Առաջիկա երեք տարվա բազային սցենարի կանխատեսումների համաձայն՝ գնահատված արտարժութային կորուստը չի գերազանցի նորմատիվային կապիտալի 0.17%-ը՝ գտնվելով ռիսկի ախորժակից ցածր մակարդակում:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը ներքին գործընթացների և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է:

Բանկի գործառնական ռիսկերի կառավարումը և դրան վերաբերող գործընթացները կանոնակարգված են ներքին իրավական ակտերով և վերահսկվում են Ռիսկերի կառավարման վարչության կողմից: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես և մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տար են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն մեկ անձի կողմից հաստատումը, ներքին/արտաքին աուդիտորների կողմից իրականացվող պարբերական ստուգումները և այլն:

Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ: Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկերի առաջացման աղբյուր կարող են հադիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ: Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա: Բանկն իր մրցակցային դիրքերն ամրապնդելու նպատակով, ներդնում է բանկային նորարար, առաջատար տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակն ու մատչելիությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծառայությունների թվայնացմանը և շարունակաբար նոր թվային պրոդուկտների ներդրմանը:

Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի, որոնք Բանկը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը և մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխություններն ու դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ է իրականացնելու այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունն ու ապահովել հիմնական նպատակային ցուցանիշների կատարումը:

4.3 Տեղեկատվություն Բանկի մասին

4.3.1 Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,**

անգլերեն՝ **“EVOCABANK” OPEN JOINT STOCK COMPANY,**

ռուսերեն՝ **ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ЭВОКАБАНК»**

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ,**

անգլերեն՝ **“EVOCABANK” OJSC,**

ռուսերեն՝ **ОАО «ЭВОКАБАНК»**

2016թ. Բանկը փոխել է իր կազմակերպաիրավական ձևը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվելով փակ բաժնետիրական ընկերության: «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն հանդիսանում է «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ իրավահաջորդը: «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ մասնակիցների 29.09.2017թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ որոշվել է «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ն վերանվանել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի: 01.08.2025թ.-ի դրությամբ Բանկի կազմակերպական-իրավական ձևը փոխվել է՝ Փակ բաժնետիրական ընկերությունից դառնալով Բաց բաժնետիրական ընկերություն («ԲԲԸ»):

Բանկի ապրանքային նշանն է՝

4.3.2 Բանկի պետական գրանցման վայրը՝ **ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության 44/2**

Բանկի պետական գրանցման համարը՝ **27**:

4.3.3 Բանկը հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին որպես «Պրոմեթևս» Առևտրային Բանկ, այնուհետև գործունեություն է ծավալել որպես «Պրոմեթեյ բանկ» Փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: 2017թ. հոկտեմբերին Բանկը վերանվանվել է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ փոխելով իր ռազմավարությունը և բիզնես մոդելը՝ անցնելով mobile-first ֆորմատի: Բանկի Պետական գրանցման վկայականի համարն է՝ թիվ **0187**: 1991թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 27 լիցենզիան:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլացված անդամ, Հայաստանի Ֆոնդային Բորսայի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, Հայաստանի Բանկերի Միության անդամ:

2021թ., հայաստանյան ֆինանսական շուկայում թվային և նորարարական լուծումների ներդրման և շուկայի զարգամանը խթանելու նպատակով, Բանկը սկսել է անդամակցել «ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի Մասնակիցների Ասոցիացիային:

Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը ընդլայնելու նպատակով՝ Բանկը համագործակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC) հետ, իսկ, Բանկի հաճախորդներին մասնագիտացված լիզինգային ֆինանսավորման համար, համագործակցության պայմանագիր է կնքել «Արմենիան Լիզինգ Քամփնի»-ի հետ, ինչպես նաև անդամակցել է ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիային:

Բանկը համագործակցում է նաև Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանահայկական Հիմնադրամի, Symbiotics S.A. և responsAbility շվեյցարական ներդրումային ընկերությունների հետ:

Բանկը ՀՀ-ում առաջին ֆինանսական կազմակերպությունն է, որ դարձել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային ասոցիացիայի (BACEE) լիիրավ անդամ: BACEE-ն, որը ստեղծվել է 1996թ., տարածաշրջանային մասնագիտացված կազմակերպություն է, որը համախմբում է Եվրամիության, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Արևմտյան Բալկանների և Կովկասյան երկրների բանկերը՝ ձգտելով ամրապնդել իր անդամ-բանկերի գործարար հարաբերությունները միջազգային բանկային համակարգի հետ և նպաստել նրանց երկրներում համակարգի կայուն և երկարատև զարգացմանը:

Fitch Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը 2023թ. մայիսին Բանկին շնորհել է Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating) **«B»** վարկանիշ՝ **դրական** հեռանկարով և **«b»** Կենսունակության վարկանիշ (Viability Rating):

Հետագայում՝ 2024թ. փետրվարին, վարկանիշները բարելավվել են՝ սահմանվելով Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի **«B+»** վարկանիշ՝ կայուն հեռանկարով, և Կենսունակության **«b+»** վարկանիշ: Վարկանիշները վերահաստատվել են 2025թ. հունվարին:

Բանկի գործունեությունը կարգավորվում և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

4.3.4. Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության 44/2

Կապի միջոցները՝
Հեռախոս՝ +374 10 605555
Ինտերնետային կայք www.evoca.am
Էլեկտրոնային փոստ՝ hello@evoca.am
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 18 մասնաճյուղերից 14-ը գտնվում են Երևան քաղաքում, 4-ը՝ ՀՀ մարզերում: Բանկի մասնաճյուղերի ցանկն ու հասցեները ներկայացված են ստորև բերված աղուսյակում.

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 44/2
Պարոնյան	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 15/3
Կասյան	ՀՀ, ք. Երևան, Կասյան 5
Թումանյան	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 15
Ազատություն 12	ՀՀ, ք. Երևան, Ազատության 12
Գարեգին Նժդեհ	ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 9
Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 76
Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 32/8
Կիևյան	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 2
Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 134/8
Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 14/9
Երևան Մոլ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պող. 34/3
Հանրապետության	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության
Աջափնյակ	ՀՀ, ք, Երևան, Աբելյան 2/1
Էվոկա Պրեմիում	ՀՀ, ք. Երևան, Զաքյան 10 շենք, 42 տարածք
Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Ռուսթավելի 63/1
Կոտայք	ՀՀ, ք. Աբովյան, Օգոստոսի 23 1/2
Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի 34
Դիլիջան	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Ա. Մյասնիկյան փողոց, 74 առևտրի սրահ

4.3.5 Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել՝ դրամական միջոցների անհրաժեշտության դեպքում: 30.06.2026թ.-ի դրությամբ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն (LCR) նորմատիվը կազմել է 173.5%, իսկ հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն (NSFR) նորմատիվը կազմել է 147.4%:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Բանկային գործունեության վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների, մասնավորապես,

պոտենցիալ ներդրողների կողմից Բանկի իրացվելիության մասին գնահատական տալու համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 30.06.2026թ.-ի դրությամբ	Փաստացի մեծություն 2025	Փաստացի մեծություն 2024	Փաստացի մեծություն 2023
$Ն_2^{1*}$	**100%**	173.5%	209.1%	509.4%	369.7%
$Ն_2^{2**}$	**100%**	147.4%	165.9%	171.5%	177.3%

* Բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն:

** Հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցություն:

4.4 Բիզնեսի նկարագիրը

4.4.1. Բանկի հիմնական գործունեությունը

Հանդիսանալով ունիվերսալ առևտրային բանկ, ինչպես նաև առաջին թվային բանկը Հայաստանում՝ Բանկի հիմնական առաքելությունն է նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել ֆինանսական ծառայությունները պարզ, արագ և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով: Բանկը մշտապես կատարելագործում է իր կողմից մատուցվող ծառայությունները՝ փորձելով մարդկանց կյանքն ավելի հարմարավետ դարձնել: Բանկի տեսլականն է լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու:

Բանկը կարևորում է էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանումը՝ պարբերաբար ներկայացնելով նոր նախագծեր և իր ներդրումն ունենալով այս կարևոր գործում: Բանկի առաջնային նպատակներից է թղթի օգտագործման նվազեցումը, ինչի նպատակով մասնաճյուղերում թղթային բուկլետների փոխարեն տեղադրվել են թվային QR բուկլետներ: Բանկը նաև վերամշակում է իր գործունեության արդյունքում առաջացած թղթե և պլաստիկ թափոնները:

Բանկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է հետևյալ հիմնական արժեքներով և սկզբունքներով՝

Ազնվություն	Ազնիվ գործելաոճ բոլոր հարաբերություններում:

Նորարարություն	Նորարարությունների շարունակաբար ներդնումը և կիրառումը՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները:
Հաճախորդների վստահություն	Հաճախորդները մշտապես Բանկի գործունեության կենտրոնում են. Բանկը գնահատում և ամուր է պահում հաճախորդների վստահությունը:
Հուսալիություն	Կայունություն և հուսալիություն թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների շրջանակում:
Հարմարավետություն	Բանկը մշտապես ձգտում է բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ:
Գործարար հեղինակություն	Բարի համբավը Բանկիկ համար ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է:
Թափանցիկություն	Բանկը բաց է և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում:
Թիմային ոգի	Բանկը համախմբել է լավագույն թիմը՝ իր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար:

Բանկի բիզնես գործունեությունը նկարագրող հիմնական ծառայություններն են՝

- Բանկային հաշիվների բացում և սպասարկում,
- Դրամարկղային գործառնությունների իրականացում,
- Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
- Չհրկիզվող անհատական պահարանների վարձակալությամբ տրամադրում,
- Ներդրումային ծառայությունների մատուցում,
- Միջազգային առևտրի սպասարկում,
- Վճարային քարտերի տրամադրում և սպասարկում,
- Ժամկետային ավանդների ընդունում,
- Վարկերի և Բանկային երաշխիքների տրամադրում,
- Նոր և օգտագործված սարքավորումների, ժամանակակից տեխնիկայի և տրանսպորտային միջոցների լիզինգային ֆինանսավորում

Բանկը հաճախորդներին ծառայությունները մատուցում է ինչպես իր գործունեության վայրում, այնպես էլ «EvocaOnline» և «EvocaTouch» հեռակառավարման համակարգերի միջոցով:

Բանկի հիմնական ռազմավարական խնդիրն է զարգացնել հեռակառավարման համակարգերը, որի արդյունքում հնարավոր կլինի Բանկի կողմից առաջարկվող գրեթե բոլոր ծառայությունները մատուցել հեռակառավարման համակարգերի միջոցով:
Ներկայումս «EvocaTouch» հավելվածի միջոցով հնարավոր է՝

- Ներկայացնել բանկային հաշվի բացման հայտ և հաշված րոպեների ընթացքում բացել բանկային հաշիվ,
- Նոր քարտի պատվիրման հայտով պատվիրել Բանկի կողմից առաջարկվող քարտատեսակներից որևէ մեկը,
- Իրականացնել փոխանցումներ, այդ թվում միջազգային,
- Իրականացնել արտարժույթի փոխանակման գործարքներ,
- Կատարել բազմապիսի ծառայությունների դիմաց վճարումներ (բջջային կապ, կոմունալ վճարումներ, ինտերնետ, հեռուստատեսություն և այլն),
- Իրականացնել վարկերի դիմաց վճարումներ,
- Կնքել ԱՊՊԱ պայմանագիր
- Ստանալ տեղեկատվություն վարչական իրավախախտումների վերաբերյալ և կատարել վճարում
- Ներկայացնել բանկային ծառայությունների հետ կապված հայտեր (կանխիկի տրամադրման, տեղեկանքի, քաղվածքի և այլն),
- Կատարել բյուջետային փոխանցումներ և այլն:

Բանկի կողմից ռազմավարական խնդիրն իրականացնելու նպատակով ներդրվել են մի շարք նոր ծառայություններ, որոնցից հնարավոր է օգտվել «EvocaTouch» հավելվածով, մասնավորապես՝

- Հնարավորություն է ստեղծվել առցանց ռեժիմով «EvocaTouch» հավելվածի միջոցով րոպեների ընթացքում ձևակերպել Action online ակնթարթային վարկը,
- Առանց բանկ այցելելու ներդնել «Evoca Online» ավանդատեսակի ավանդ,
- «EvocaTouch» հավելվածի օգնությամբ իրականացնել անքարտ կանխիկացումներ Բանկի ավտոմատ գանձման սարքերից,
- «EvocaTouch» հավելվածին ինտեգրված տերմինալի միջոցով իրականացնել ավելի քան 200 տեսակի վճարում զանազան ծառայությունների դիմաց,
- Evoca Digital Visa և MasterCard միջազգային վճարային քարտերի պատվիրում:
- Evoca Gift Card՝ տարբերվող բրենդինգով բանկային նվեր քարտ, որը հասանելի է թե՛ մասնաճյուղերում և թե՛ օնլայն տարբերակով՝ «EvocaTouch» հավելվածով կամ www.evoca.am կայքում:

Օրեցօր ավելանում է «EvocaTouch» հավելվածի միջոցով տարատեսակ ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը:
Քայլելով ժամանակին համընթաց՝ Բանկը ներդրել է պարզ, արագ և անհպում վճարումների իրականացման Apple Pay և Google Pay գործիքները:

• 2025թ.-ի հուլիսին մեկնարկվել է Evoca Partners Club և Evoca Benefits նախագծերը: Այս նախաձեռնության միջոցով Evocabank-ի

• 2025թ.-ի հուլիսին vPOS համակարգը բացառիկ նոր հնարավորություն է ստացել. այժմ հնարավոր է կատարել օնլայն վճարումներ ոչ միայն քարտային տվյալներով, այլեւ Apple Pay օգտագործելով, մեկ հպումով:

- 2025թ.-ի սեպտեմբերին ներգրավվել է $5.5 մլն ստորադաս փոխառություն՝ նպատակ ունենալով ընդլայնել ՓՄՁ հատվածի ֆինանսավորման հնարավորությունները, հատկապես կանանց ղեկավարած ձեռնարկություններում:
- 2026թ.-ի հունվարին Evocabank-ը Mastercard-ի կողմից արժանացել է «Excellence in Travel Segment Innovation» միջազգային մրցանակին:
- 2026թ.-ի մայսին Evocabank-ը երկրորդ տարին անընդմեջ ճանաչվել է «Best SME Bank in Armenia»՝ The Digital Banker-ի կողմից:

4.4.2 Հիմնական շուկաները

4.4.2.1 Հիմնական շուկաները

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն ունիվերսալ առևտրային բանկ է, որը, լինելով դինամիկ և կայուն աճ արձանագրող ընկերություն, մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային (այդ թվում թվային) լուծումների ամբողջական փաթեթ: Բանկը որդեգրել է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից են անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին և նորարարությունը՝ համատեղած բարձր պրոֆեսիոնալիզմի և փորձի հետ՝ ստանձնելով բազմակողմանի և բարձրորակ ֆինանսական լուծումներ տրամադրող գործընկերոջ դերը իր հաճախորդների համար: Եվ այս մոտեցումը Բանկի հաջողության գրավականն է՝ թույլ տալով Բանկին դառնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը թվային բանկային ծառայությունների ոլորտում:

Բանկի ռազմավարության առանցքում են մի շարք հիմնարար սկզբունքներ՝ հաճախորդակենտրոնություն, նորարարական մոտեցում և պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակ: «Էվոկաբանկ»-ը որդեգրել է անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ՝ դառնալով վստահելի գործընկեր ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ բիզնեսների համար: Բանկը գործում է միաժամանակ մի քանի հիմնական շուկաներում՝ մանրածախ բանկինգ, ՓՄՁ ֆինանսավորում, կորպորատիվ բանկինգ և միջազգային գործընկերային ծրագրեր: Հատուկ ուշադրություն է դարձվում թվային լուծումների զարգացմանը, ինչի շնորհիվ հաճախորդներին հասանելի են արագ, պարզ և անվտանգ ֆինանսական գործիքներ:

Շեշտը դնելով ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վրա՝ Բանկը մշտապես ներդնում է նորարարական ծառայություններ. օնլայն ավանդներ և վարկեր, անքարտ կանխիկացման գործառույթներ, vPOS և e-commerce վճարային հարթակներ, ինչպես նաև Apple Pay և Google

Pay գործիքներ: Այսպիսով, «Էվոկաբանկ»-ը դարձյալ առաջիններից է, որ առաջարկում է համաշխարհային բանկային ոլորտում ընդունված թվային լուծումները:

Բանկի նորարարական գործունեությունն ու թվային ծառայությունների առաջատար դերը բազմիցս արժանացել են միջազգային ճանաչման: Մասնավորապես, «Էվոկաբանկ»-ը յոթ տարի անընդմեջ Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է «Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում», երկու տարի անընդմեջ՝ «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում», իսկ 2023թ. նաև՝ «Լավագույն կորպորատիվ թվային բանկը Հայաստանում»: Չորս տարի անընդմեջ ըստ Global Banking & Finance Review-ի՝ Բանկը ճանաչվել է «Լավագույն թվային բանկը Հայաստանում»: «Global Business & Finance Magazine»-ի կողմից 2023 և 2024թթ. Բանկը ստացել է «Ամենանորարար թվային բանկ» և «Ամենաարագ զարգացող բանկ» մրցանակները: Բացի այդ, Բանկը արժանացել է նաև Visa International-ի բարձր գնահատանքին՝ ստանալով «Strong Visa Premium Issuance» մրցանակը:2025 թվականին բանկը ճանաչվել է «Լավագույն Բանկը Հայաստանում»՝ ըստ Global Finance հեղինակավոր ամսագրի: Այս մրցանակը վկայում է բանկի շարունակական նորարարական մոտեցումների և թվային ծառայությունների բարձր որակի մասին:Բացի այդ, «Էվոկաբանկ»-ը ստացել է նաև BACEE (Բանկային համագործակցության և տնտեսական զարգացման ասոցիացիա) մրցանակ՝ որպես «Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում»: Այս մրցանակը ընդգծում է բանկի կարևոր դերը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ոլորտուԱյս նոր ձեռքբերումները ամրապնդում են «Էվոկաբանկ»-ի դիրքերը որպես առաջատար թվային բանկ՝ շարունակելով ներդնել նորարարական լուծումներ և ապահովելով հաճախորդների համար բարձրորակ ծառայություններ:

4.4.2.2 Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Հաշվի առնելով բանկային համակարգում առկա մրցակցությունը՝ Բանկը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություններ, շուկայում գործող ծառայությունների պայմանների և տոկոսադրույքների ուսումնասիրություններ: Բանկի մրցակցային դիրքի վերլուծությունները իրականացվել են՝ հիմք ընդունելով մասնաճյուղերի վճարային տերմինալների, բանկոմատների և այլ սպասարկման կետերի քանակը, առցանց սպասարկման հնարավորությունները, այդ թվում՝ հեռակառավարման համակարգերին առցանց գրանցման հնարավորությունը, ինտերֆեյսի գրավչությունը, օգտագործման պարզությունը, անվտանգությունը, գործարքների տեսակի բազմազանությունը և այլն:
Բանկն իր գործունեության ընթացքում առանձնակի ձգտում չի ցուցաբերել իր քանակական ցուցանիշներով բանկային համակարգում առաջատար դիրքեր զբաղեցնելու ուղղությամբ: Փոխարենը, Բանկը մշտապես ձգտել է առաջատար դիրքեր գրավել և պահպանել այդ դիրքերը բարձրակարգ բանկային ծառայությունների որակական հատկանիշների ապահովմամբ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծառայությունների թվայնացմանը և շարունակաբար նոր թվային պրոդուկտների ներդրմանը:

Հաշվի առնելով վերջին տարիներին բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների թվայնացման աննախադեպ միտումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Բանկի մրցակից հանդիսացող բանկերից շատերը նույնպես որդեգրել են բանկային ծառայությունների թվայնացման ուղին, Բանկն իր մրցակցային դիրքն ամրապնդելու համար կշարունակի առանձնակի ուշադրություն դարձնել թվային և առցանց ծառայությունների ակտիվացմանն ու զարգացմանը, ինչպես նաև անձնակազմի շարունակական վերապատրաստմանը:
Բանկի մրցակցային առավելություններն են.

- Բանկի հեղինակությունը
- Սպասարկման որակը
- Մատուցվող ծառայությունների բազմազանությունը և շարունակական թվայնացումը
- Յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցումը

4.5 Բանկի կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.06.2025թ. որոշման համաձայն՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (վերջինիս իրավահաջորդը «Էվոկաբանկ» ԲԲԸ-ն է) և «Վիլկո» ՍՊԸ-ն որակվել (ճանաչվել) են որպես հայկական բանկային ցածր ռիսկային ֆինանսական խումբ՝ «ԷՎՈԿԱ» անվանմամբ, և Բանկը նշանակվել է որպես «ԷՎՈԿԱ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:

Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Հավելված 3-ում:

Բանկի հասարակ բաժնետոմսերի 100%-ին տիրապետում է Մարետա Ռուդիկի Գևորկյանը:

4.6 Զարգացման վերջին միտումները

Բանկի զարգացման հաջորդ փուլը հանդիսանալու է հաճախորդների ծառայությունների մատուցման նոր ձևերի առաջարկումը, նոր տեխնոլոգիական հարթակը և Բանկի անձնակազմի հետագա զարգացումը, որը հնարավորություն կընձեռի ապահովել հարմարավետ սպասարկում:

Բանկը շարունակում է 2017թ.-ին որդեգրած ռազմավարությունը՝ շեշտը դնելով օնլայն պրոդուկտերի մշակման ու ներկայացման վրա՝ պահպանելով իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում որպես լավագույն թվային սպառողական բանկ:
Աճի տեմպերը շարունակում են մնալ երկնիշ՝ հիմնական շեշտը դնելով մանրածախ և ՓՄՁ սեգմենտների ընդլայնման վրա հավասարակշռելով ռիսկերը:
2026թ. Բանկը շարունակելու է իրականացնել թվային տրամսֆորմացիա, որի արդյունքում նախատեսվում է ավելացնել օնլայն իրականացվող գործարքների կշիռը ընդհանուր գործարքների մեջ՝ վերահաստատելով առաջատար թվային Բանկի կարգավիճակը:

4.7 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

4.7.1 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով
- Բանկի խորհուրդ,
- Վարչություն
- Վարչության նախագահ

4.7.2 Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

4.7.2.1 Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների ու լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- Բանկի վերակազմակերպումը,
- Բանկի լուծարումը,
- Ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման, և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ
- Հայտարարված բաժնետոմսերի ծավալի, ինչպես նաև Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման առավելագույն չափի սահմանումը,
- Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- Օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը,
- Ընդհանուր ժողովի վարման կարգի մասին հաստատումը,

- Օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),
- Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը:

4.7.2.2 Բանկի խորհուրդը

Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Բանկի խորհրդի կողմից: Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում վերջինիս որոշած ժամկետով, Բանկի բաժնետերերի կողմից կումուլյատիվ քվեարկության սկզբունքով: Բանկի խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև բաժնետեր չհանդիսացող անձիք:

Բանկի խորհրդի քանակական կազմը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ոչ պակաս 5 (հինգ) և ոչ ավելի 15 (տասնհինգ) անդամներից: Սույն Ծրագրային ազդագրի կազմման պահին Բանկի Խորհուրդը բաղկացած է 7 անդամից:

Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
- Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
- Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- Շահութաբաժինների վճարման վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացումը.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.
- Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
- Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- Բանկի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
- Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
- Բանկի վերակազմակերպման, դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դուստր կամ կախյալ ընկերությունների մասնակցության, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրման, առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցության, խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանման հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.
- Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
- Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
- Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.
- Լիազորում է Բանկի վարչության նախագահին՝ կնքելու աշխատանքային պայմանագրեր վարչության անդամների հետ:
- Օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Բանկի խորհրդի անդամներն են՝

Անուն Ազգանուն, պաշտոն	Տեղեկատվություն
Վարուժան Ավետիքյան Խորհրդի նախագահ	Կրթություն 1998թ. - ավարտել է Կիպրոսի Նիկոսիայի համալսարանը (Բիզնես կառավարման բակալավրի աստիճան) 2004թ. - ավարտել է Միացյալ Թագավորության Leicester

	համալսարանը (Եվրոմիության առևտրային իրավունքի մագիստրոսի աստիճան) 2005թ. – ավարտել է Բոստոնի Համալսարանի Իրավագիտության ֆակուլտետը (Ֆինանսական և բանկային իրավունքի մագիստրոսի աստիճան - LL.M.) 2009թ. – ավարտել է Հարվարդի համալսարանը - Harvard Kennedy School (Պետական կառավարման մագիստրոսի աստիճան) Կարիերա 2008-2009թթ. - աշխատել է Հարվարդի համալսարանի Քեննեդու անվան դպրոցում՝ որպես դասախոսի օգնական 2015-2018թթ. - աշխատել է Christ's College-ում (Քեմբրիջ, ՄԹ)՝ որպես հրավիրված դասախոս Ֆինանսական կարգավորման և կենտրոնական բանկերի Բանկային Հրապարակումների գծով 2000թ. - աշխատում է Հայաստանում Ֆրանսիական համալսարանում՝ որպես ֆինանսական իրավունքի և բիզնես իրավունքի հրավիրված պրոֆեսոր 2019թ. - աշխատում է Հայաստանում Ամերիկյան Համալսարանում՝ որպես Պայմանագրային իրավունքի և ֆինանսական կարգավորման (LL.M.) և ադապտիվ առաջնորդության (MBA) հրավիրված պրոֆեսոր 2018-2020թթ. - աշխատել է Տնօրենների Հայկական Ինստիտուտում՝ որպես գործադիր տնօրեն, ղեկավարել է Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման թիմը 2020թ. - Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հիմնադրամի հոգաբարձու 2017-2021թթ. - հանդիսացել է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի տնօրեն 2020, 2021 և 2022թթ. - ճանաչվել է միջազգային ֆինանսական իրավունքի պատվավոր իրավաբան International Financial Law Review ամսագրի կողմից 2006-2018թթ. - աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ որպես գլխավոր իրավաբան, Իրավաբանական վարչության պետ 2018թ. - աշխատում է Արժույթի Միջազգային Հիմնադրամի Իրավաբանական վարչությունում, Վաշինգտոն, ԱՄՆ՝ որպես կարճաժամկետ փորձագետ 2018թ. - հանդիսանում է Կառավարող գործընկեր Andersen in Armenia-

	ում 2023թ. - ստացել է European Board diploma European Confederation of Directors' Associations (ecoDa)-ի կողմից 2022-2024թ.թ.- հանդիսացել է Էվոկաբանկի Խորհրդի անդամ 2024թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի նախագահ:
Խոսե Մարիա Մորենո Դե Բարրեդա, Խորհրդի անդամ	Կրթություն 1987 – 1992թթ. սովորել է Իսպանիայի UNIVERSIDAD SAN PABLO CEU համալսարանում և ստացել Եվրոպական իրավունքի և բիզնես վարչարարության դիպլոմ: 1987-1993թթ. սովորել է UNIVERSIDAD COMPLUTENSE Իսպանիայում և ստացել իրավագիտության բակալավրի աստիճան: 1995-1996թթ. սովորել է Լոնդոնի համալսարանի KING'S COLLEGE-ում և ստացել իրավագիտության մագիստրոսի աստիճան (Միջազգային բիզնեսի իրավունք): 2001թ. փետրվարից դեկտեմբեր սովորել է Իսպանիայի IE BUSINESS SCHOOL-ում և ստացել բիզնես վարչարարության մագիստրոսի աստիճան: 2016-2022թթ. սովորել է Իսպանիայի UNIVERSIDAD DE SALAMANCA-ում, ուսումնասիրության թեման՝ Թվային տեխնոլոգիաների միջոցով ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում: Ստացել է դոկտորի աստիճան: 2014 հունվարից մինչև հոկտեմբեր անցել է Իսպանիայի UNIVERSIDAD POLITECNICA DE VALENCIA-ի Եվրոպական ֆինանսական խորհրդատվության դասընթացը: 2016թ. հունվարից մինչև հունիս Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում անցել է դասընթաց՝ «Գլոբալ աղքատության մարտահրավերները» թեմայով: 2018թ. նա Տնօրենների ինստիտուտի կողմից ստացել է առանց գործադիր լիազորությունների ընկերության Խորհրդի անդամի հավաստագիր Միացյալ Թագավորությունում: Կարիերա 1992թ. հունիսից մինչև 1993թ. փետրվար աշխատել է Citibank-ում Իսպանիայում, որպես իրավաբանական հարցերով կրտսեր խորհրդատու: 1993թ. փետրվարից մինչև նոյեմբեր աշխատել է ROYAL ARTILLERY CORPS որպես աշխատակազմի ղեկավարի օգնական: 1997թ. հունվարից մինչև 2000թ. ապրիլ աշխատել է PRICEWATERHOUSECOOPERS-ում (Իսպանիա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ) որպես ավագ խորհրդատու: 2000թ. մայիսից մինչև 2001թ. դեկտեմբեր ամիսը աշխատել է ACCENTURE-ում Իսպանիայում, որպես ավագ խորհրդատու:

	2002թ. հունվարից մինչև 2004թ. մայիս աշխատել է NEORIS-ում (Իսպանիա, Մեքսիկա) ռազմավարական հարցերով խորհրդատվության ոլորտում որպես մենեջեր: 2006թ. հունվարից մինչև 2012թ. հունվար աշխատել է EY ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (նախկինում՝ Greenwich Consulting) EMEA/LAC/ASIAPAC որպես Հիմնադիր ավագ գործընկեր և գործադիր տնօրեն: 2012թ. հունվարից մինչև 2015թ. դեկտեմբեր աշխատել է CREATIA CONSULTING (EMEA/LAC/ASIA) որպես ավագ գործընկեր և գործադիր տնօրեն: 2013թ. սեպտեմբերից մինչև 2014թ. սեպտեմբեր աշխատել է MFO & Partners-ում Իսպանիայում՝ Միաձուլումներ և ձեռքբերումներ և մասնավոր սեփական կապիտալ ոլորտներում որպես ավագ խորհրդատու: 2014թ. մինչ օրս աշխատում է ՄՖԿ-ում (Համաշխարհային բանկի խումբ)՝ Թվային ֆինանսական ծառայությունների ոլորտում որպես Գլոբալ թվային ֆինանսների մասնագետ: 2022-2024թ.թ.- հանդիսացել է Էվոկաբանկի Խորհրդի նախագահ 2024թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի անդամ:
Վազգեն Գևորկյան Խորհրդի անդամ	Կրթություն 1993թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետը: 1994 – 1998թթ. - ընդունվել է ՌԴ Ժողովրդական տնտեսության ակադեմիա՝ 1998թ. ավարտելով այն «Կորպորատիվ կառավարման ժամանակից մեթոդները» մասնագիտությամբ: 2003թ. - ավարտել է ՌԴ Ժողովրդական տնտեսության ակադեմիայի ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008թ. - ստացել է MBA որակավորում: Կարիերա Աշխատանքային գործունեությունը սկսել է 20 տարեկանում՝ «Պրոմեթեյ» ԲԲԸ-ում: 1994թ. - աշխատել է «ՋՆԳՍ-Պրոմեթեյ» ԲԲԸ ներկայացուցչություն՝ որպես արտասահմանյան ընկերությունների հետ աշխատող մասնագետ: 10 տարվա ընթացքում զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ:

	2001թ. - նշանակվել է «ԶՆԳՍ-Պրոմեթեյ» ԲԲԸ Խորհրդի նախագահի տեղակալ: 2003թ. - ստանձնել է «Զակնեֆտեգազստրոյ Պրոմեթեյ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը: 2004 - 2009թթ. - եղել է «Զակնեֆտեգազստրոյ Պրոմեթեյ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ: 2009 - 2018թթ. - եղել է «Զակնեֆտեգազստրոյ Պրոմեթեյ» ՍՊԸ-ի Գլխավոր տնօրենի առաջին խորհրդական: 2018 - 2024թթ. - եղել է «Պրոմեթեյ Սիթի» ՍՊԸ Գլխավոր տնօրենի առաջին խորհրդական: 2019թ. հուլիս - 2019թ. սեպտեմբեր - եղել է «Էվոկաբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ: 2019 - 2022թթ. - եղել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահ: 2025թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի անդամ
Մարտա Էչարրի Խորհրդի անդամ	Կրթություն 2003թ. - ավարտել է ESSEC Փարիզի բիզնեսի դպրոցը: 2001 - 2005թթ. -սովորել է Northeastern University և ICADE (E4)-ում՝ Միջազգային բիզնեսի կառավարում Երկաստիճան ծրագրի շրջանակներում՝ ստանալով մասնագիտացում Միջազգային բիզնես, ֆինանսներ և շուկայավարում ոլորտում: 2019թ. - մասնակցել է IE university-ի՝ Հաքերության էքսպոնենցիալ աճ 1-շաբաթյա դասընթացին: 2020թ. - մասնակցել է ISDI Dibex: Թվային բիզնես ղեկավարների համար ծրագրին: 2023թ. - ավարտել է Singularity University կրթական ծրագիրը՝ նախատեսված ղեկավարների համար: Ներկայումս նույն համալսարանում հանդիսանում է հյուր-խոսնակ միջազգային գագաթնաժողովների համար: Ունի հավաստագրեր ֆինանսական ոլորտում՝ series 7 և series 63 հավաստագրեր, Հարվարդի համալսարանի Բանակցելու հմտություններ դասընթաց, Բլումբերգի դասընթաց NYC ընկերության գլխամասային գրասենյակում, պորտֆելի կառավարում IEB, Մադրիդ համալսարանում, Հարկեր և իրավաբանական նորություններ

	Իսպանիայում՝ Deloitte and Garrigues, տարբեր բանկային դասընթացներ Լոնդոնում, Նյու Յորքում և Ժնևում՝ J.P.Morgan-ի գրասենյակներում: Կարիերա 2005 - 2008թթ. - աշխատել է UBS Bank S.A.-ում՝ որպես Հարստության կառավարման վերլուծաբան: 2008 - 2012թթ. -աշխատել է J.P.MORGAN International Bank Ltd. Sucursal en Espana-ում՝ որպես Ասոցիացված անհատական բանկիր: 2012 – 2015թթ. - զբաղեցրել է J.P.MORGAN International Bank Ltd. Sucursal en Espana-ի Փոխնախագահ-անհատական բանկիրի պաշտոնը: 2015 - 2019թթ. - զբաղեցրել է J.P.MORGAN International Bank Ltd. Sucursal en Espana –ի Գործադիր տնօրեն- անհատական բանկիրի պաշտոնը: 2019 – 2020թթ. -աշխատել է LOMBARD ODIER GROUP –ում՝ որպես Ավագ փոխնախագահ - անհատական բանկիր: 2020 - 2023թթ.- աշխատել է N26 BANK Gmbh, Sucursal en Espana-ում՝ որպես Իսպանիայի և Պորտուգալիայի հարցերով գլխավոր մենեջեր: 2023 - 2024թթ. – զբաղեցրել է WESTERN UNION միջազգային բանկի՝ Եվրոպայում թվային բանկինգի ստորաբաժանման ղեկավարի և Western Union միջազգային բանկի գործադիր տնօրենին փոխարինողի պաշտոնները: 2024թ. - հանդիսանում է MUSE MOVEMENT SL-ի հիմնադիր: 2024թ. - հրապարակախոսում է որպես Տեխնոլգիաների ռազմավարագետ և հիմնական զեկուցող նորարարական ֆորումներում, ինչպիսիք են The Future is Now (Մադրիդ), TedxIE (Մադրիդ): 2025թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի անդամ
Մարինա Բուկի Խորհրդի անդամ	Կրթություն 1993թ. - ավարտել է Հունաստանի University of Patras-ում՝ ստանալով Մաթեմատիկական գիտությունների բակալավրի աստիճան: 1998թ. - Էդինբուրգ, Միացյալ Թագավորությունում ավարտել է Herriot Watt University-ն՝ ստանալով Ակտուարական գիտությունների

	մագիստրոսի աստիճան: 2001թ.- Միացյալ Թագավորությունում Ակտուարների Ֆակուլտետի անդամ (Fellow) 2005թ.- Նյու Յորք, ԱՄՆ-ում ավարտել է Կոլումբիայի բիզնես դպրոցը՝ Բիզնեսի կառավարման մագիստրոսի (MBA) կոչումով 2022թ. - մասնակցել է St. Gallen Board Practice Սեմինարին: 2025 թ. - մասնակցել է Օքսֆորդի արհեստական բանականության ծրագրին Կարիերա 1998-2000թթ.. – աշխատել է Էդինբուրգի Standard Life կազմակերպությունում՝ որպես ակտուարական վերլուծաբան: 2000-2004թթ.. –աշխատել է Լոնդոնի Towers Perrin կազմակերպությունում՝ որպես ակտուարական վերլուծաբան: 2005–2021թթ.. -աշխատել է Morgan Stanley-ում, London, որպես ներդրումային բանկիր Financial Institutions Group (FIG)-ում. Այնուհետև FIG-ի Գլխավոր տնօրեն (2015–2021) 2022-2025թթ.. - Ավագ խորհրդատու Delphos-ում 2023թ. - Խորհրդատու Bain & Company-ում 2023թ. - հանդիսանում է Halcyon Equity Partners ընկերության Ներդրումային կոմիտեի ոչ գործադիր, անկախ անդամ: 2024-2025թթ.. - Ծառայել է որպես ոչ գործադիր խորհրդի անդամ Aegean Baltic Bank(ABB) –ում 2025թ. - Խորհրդի անկախ անդամ NBG AM MFMC-ում 2025թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի անդամ
Արկադի Սանդլեր Խորհրդի անդամ	1998–2000թթ. – հիմնել է Simpo ծրագրային ապահովման մշակմամբ և տեղեկատվական տեխնոլոգիաների խորհրդատվությամբ զբաղվող ընկերությունը (ձեռք է բերվել «АГЕНТСТВО КОНТАКТ» ընկերության կողմից): 2000–2004թթ. – զբաղեցրել է AGENTSTVO KONTAKT ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների գծով տնօրենի (Chief Information Officer) պաշտոնը: 2004–2005թթ. – հիմնել է KeyStaff Solutions ընկերությունը, որը զբաղվում էր արհեստական բանականության հիման վրա

	հավաքագրման տեխնոլոգիաների մշակմամբ (ձեռք է բերվել HeadHunter Group ընկերության կողմից): 2006–2008թթ. – զբաղեցրել է HeadHunter Group-ի կորպորատիվ զարգացման և փոխակերպման ղեկավարի պաշտոնը (դարձել է Mail.Ru Group-ի մաս): 2008–2010թթ. – աշխատել է DST Advisors-ում (DST-ն հետագայում վերանվանվել է Mail.Ru Group)՝ որպես պորտֆելի կառավարիչ և ավագ խորհրդատու: 2010–2013թթ. – հիմնել և ղեկավարել է Essential Commerce Ltd. ընկերությունը՝ զբաղեցնելով գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը: 2013–2017թթ. – զբաղեցրել է Nanosemantics Lab-ի գլխավոր գործադիր տնօրենի և պրոդուկտի կառավարման ղեկավարի պաշտոնը: 2017–2021թթ. – զբաղեցրել է MTS Group-ի արհեստական բանականության գծով տնօրենի (Chief Artificial Intelligence Officer) պաշտոնը: 2019թ. – մասնակցել է «Արհեստական բանականության ազգային ռազմավարություն 2030»-ի զարգացմանը, Դաշնային AI ծրագրին և հանդիսացել է AI Alliance-ի համահիմնադիրներից մեկը: 2022–2024թթ. – զբաղեցրել է DOCET TI ընկերության կառավարման գործընկերոջ պաշտոնը: 2022թ. – հանդիսանում է SKB Kontur ընկերության նորարարությունների հարցերով խորհրդատու: 2022թ. – հանդիսանում է True Click Technologies ընկերության հիմնադիրը: 2024թ. – հանդիսանում է MARSHALL ընկերության տնօրենների խորհրդի նախագահ: 2026 թ. – Հանդիսանում է «Բայթ Տրանզիտ» ընկերության Տեխնոլոգիական կոմիտեի նախագահ: 2026թ. – հանդիսանում է «Էվոկաբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ:
Պիեր Կազիյակ Խորհրդի անդամ	Կրթություն 1982 - 1984թթ.- սովորել է ESSEC բիզնեսի դպրոցում: 1979 - 1982թթ.– սովորել է Mines de Saint-Etienne համալսարանում՝ ստանալով քաղաքացիական ինժեների որակավորում: Կարիերա

	1984 - 1985թթ. - աշխատել է Banque Indosuez-ում՝ որպես վարկային վերլուծաբան Կորպորատիվ բանկինգի վարչությունում: 1986 - 1987թթ. - աշխատել է Banque BNP Paribas-ում՝ որպես Տնօրենի օգնական: 1988 - 1989թթ. - աշխատել է Credit Commercial de France-ում՝ որպես հաշվի ավագ մենեջեր: 1990 - 1992թթ. - աշխատել է Union Europeenne De CIC-ում: 1992 - 1997թթ. - Banque CPR-ում զբաղեցրել է սկզբնական բաց բաժանորդագրության միջոցով արժեթղթերի տեղաբաշխման, բաժնետոմսերի թողարկման և բաժնետոմսերով ածանցյալ գործիքների հարցերով տնօրենի տեղակալի պաշտոնը: 1997 - 2004թթ. - Natexis Banques Populaires/Natexis Bleichroeder-ում զբաղեցրել է Սկզբնական կապիտալի շուկայի ստորաբաժանման ղեկավարի, բրոքերային ընկերության խորհրդի անդամի պաշտոնները: 2004 - 2007թթ. - հանդիսացել է Global Equities ներդրումային ընկերության գործընկեր /մասնակից, զարգացրել է կորպորատիվ ֆինանսների բիզնեսը: 2006 - 2009թթ. - Aquila-ում զբաղեցրել է անկախ տնօրենի պաշտոնը: 2007 - 2009թթ. - Grant Thornton Corporate Finance ընկերությունում նախաձեռնել է և իրականացրել է սկզբնական բաց բաժանորդագրության միջոցով արժեթղթերի տեղաբաշխում: 2010 - 2016թթ. - Pax Corporate Finance (M&A մասնագիտացված ընկերություն)/APL Finance –ի գործընկեր է եղել: 2006 - 2019թթ. - Auctus Finance ներդրումային հիմնադրամում զբաղեցրել է գործադիր տնօրենի պաշտոնը: 2019թ. - Partners/BDO խորհրդատվական ընկերությունում աշխատում է որպես ավագ խորհրդատու: 2025թ. - հանդիսանում է Էվոկաբանկի Խորհրդի անդամ

4.7.2.3 Բանկի վարչությունը

Բանկի Վարչությունը Բանկի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, մասնավորապես՝

- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, մասնաճյուղերի կանոնադրությունները,

- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը,
- ապահովում է բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,
- գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը 1 (մեկ) անգամ,
- վերահսկում է օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահպանումը Բանկում,
- իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, միջնորդավճարների չափը,
- իր իրավասության շրջանակներում սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,
- քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը,
- հաստատում է Բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,
- քննարկում է վարչության նախագահի, վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված հարցեր,
- կազմակերպում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի մշակումը և քննարկումը, քննարկում է Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները, դրանց կատարողականները:

Բանկի Վարչության անդամներն են՝

Անուն Ազգանուն, պաշտոն	**Տեղեկատվություն**
Կարեն Եղիազարյան, Վարչության նախագահ	Կարեն Եղիազարյանը ծնվել է 1979թ. Երևանում: 2000թ. - ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը 2009թ. - վերապատրաստվել է Լոնդոնում (City of London International Banking School-ի «Ակտիվների և պարտավորությունների կառավարում» դասընթաց) 2010թ. - անցել է Ֆրանկֆուրտի Commerzbank AG-ի ուսումնական կենտրոնում կազմակերպված հատուկ դասընթացը 2012թ. - ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանը (Master of Business Administration - MBA որակավորում) 2013թ. - անցել է Նյու Յորքի Deutsche Bank New York-ում կազմակերպված Global Transaction Banking դասընթացը 2022թ. - ստացել է Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան (PhD) ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի մասնագիտական խորհրդի կողմից

	2023թ. - անցել է Harvard Business School-ի կողմից կազմակերպված Executive Education, Advanced Management Program դասընթացը Կարիերա 2000-2002թթ. - աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես մասնագետ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, այնուհետև՝ Թղթակցային հարաբերությունների և հաճախորդների սպասարկման վարչության պետի տեղակալ - Հաճախորդների սպասարկման բաժնի պետ 2002-2003թթ. - աշխատել է «Անելիք Բանկ» ՍՊԸ-ում պայմանագրային հիմունքներով 2003թ. - աշխատել է «Շարմ» ՓԲԸ-ում՝ որպես Ֆինանսական բաժնի պետ 2003-2006թթ.- աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Միջազգային հարաբերությունների ֆինանսական շուկաներում գործառնությունների և պլաստիկ քարտերի բաժնի պետ 2005-2007թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես «Տիգրան Մեծ», «Կասյան» և «Երվանդ Քոչար» մասնաճյուղերի կառավարիչ՝ համատեղության կարգով 2006-2008թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Միջազգային հարաբերությունների ֆինանսական շուկաներում գործառնությունների և պլաստիկ քարտերի վարչության պետ 2008-2017թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ, Միջազգային հարաբերությունների ֆինանսական շուկաներում գործառնությունների և վճարային քարտերի վարչության պետ) 2009-2013թթ. - դասավանդել է «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամում 2013-2017թթ. - դասավանդել է «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամում 2017թ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ 2017-2019թթ. - աշխատել է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ 2019թ. - աշխատում է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահ 2019թ. - հանդիսանում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռիփորթինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ 2022թ. - դասավանդում է Երևանի պետական համալսարանում
Արմեն Հակոբյան, Վարչության նախագահի առաջին տեղակալ	Արմեն Հակոբյանը ծնվել է 1971թ. Երևանում: 1993թ. - ավարտել է Երևանի անասնաբուծա-անասնաբուժական ինստիտուտը (Ինժեներ-տեխնոլոգի որակավորում) 1996թ. - վերապատրաստվել է Ժնևում (Trusban Finance and Management s.a.-ի Basic Banking ֆինանսական դասընթաց) 1998թ. - ստացել է Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան

	(PhD) ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի մասնագիտական խորհրդի կողմից 2009թ. - վերապատրաստվել է Լոնդոնում (City of London International Banking School-ի «Ակտիվների և պարտավորությունների կառավարում» դասընթաց) Կարիերա 1992-1993թթ. – աշխատել է Երևանի հրուշակեղենի կոմբինատում 1993-1996թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարկա-պլանային վարչության 1-ին կարգի մասնագետ 1996-2005թթ. – աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարկա-պլանային վարչության պետ 2005-2006թթ. – աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Ակտիվների և պարտավորությունների վարչության պետ 2006-2017թթ. – աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի առաջին տեղակալ, Վարչության անդամ 2017թ. – աշխատում է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահի առաջին տեղակալ, Վարչության անդամ
Տաթևիկ Խաչատրյան Վարչության նախագահի տեղակալ	Տաթևիկ Խաչատրյանը ծնվել է 1988թ. Երևանում: 2009թ. – ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2011թ. – ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանը (Master of Business Administration - MBA որակավորում) 2017թ. – վերապատրաստվել է Դուբայում (Digital Marketing Track դասընթաց) 2020թ. - ստացել է Project Management Professional-ի PMP® միջազգային որակավորում Project Management Institute-ի կողմից 2022թ. – ավարտել է Harvard Business School Online-ի Organizational Leadership դասընթացը Կարիերա 2011թ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Մարքեթինգի մասնագետ, այնուհետև՝ Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ 2017թ. - աշխատել է Evocabank-ում՝ որպես Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ 2017թ. - դասավանդել է Global Bridge բիզնես դպրոցում 2018թ. – աշխատել է Evocabank-ում՝ որպես Վարչության անդամ 2019թ. – աշխատում է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ 2022թ. – աշխատում է Project Management Institute Armenia-ում՝ որպես PMI Armenia-ի փոխնախագահ

	2023թ. – հանդիսանում է Fab Lab Armenia կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամ
Հայկ Պետրոսյան, Վարչության նախագահի տեղակալ	Հայկ Պետրոսյանը ծնվել է 1970թ. Երևանում: 1991թ. - ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (Տնտեսագետի որակավորում) 1997թ. - ավարտել է Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտը (Իրավագետ-միջազգայնագետի որակավորում) Կարիերա 1991-2001թթ. – աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես մասնագետ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, այնուհետև՝ Ներքին աուդիտի վարչության պետ 2001-2002թթ. – աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես Ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչության պետ 2002-2003թթ. - աշխատել է «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պետի տեղակալ – Թղթակցային հարաբերությունների և հաճախորդների սպասարկման վարչության պետ 2003-2007թթ. - աշխատել է «Վ.Ի.Պ.Ս.Կ» ՍՊԸ-ում՝ որպես ֆինանսական գծով փոխտնօրեն 2007-2008թթ.- աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար 2008-2017թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ 2017թ. – աշխատում է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ, Վարչության անդամ
Լիլիթ Գաբոյան, վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով	Լիլիթ Գաբոյանը ծնվել է 1987թ.-ին Երևանում: 2008թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանը 2010թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանը (Մագիստրոսի որակավորման աստիճան) 2012թ. - ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանը (Գործարար կառավարման մագիստրոսի որակավորում - MBA) Հանդիսանում է Ֆինանսական վերլուծողների արտոնագրված ինստիտուտի որակավորման հավակնորդ (CFA level III candidate) Կարիերա 2008-2010թթ. - աշխատել է ԿՈԿԱ-ԿՈԼԱ Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա ՓԲԸ-ում՝ որպես կառավարման համակարգերի մասնագետ 2010-2012թթ. - աշխատել է ՊրոԿրեդիտ Բանկ ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ, այնուհետև՝ Պլանավորման և վերահսկողության բաժնի վերլուծաբան 2012-2019թթ. - աշխատել է Ամերիաբանկ ՓԲԸ-ում՝ որպես Կառավարչական հաշվետվությունների և ֆինանսական պլանավորման

	բաժնի ավագ վերլուծաբան, այնուհետև՝ բաժնի պետ 2019թ. - աշխատում է Evocabank-ում՝ որպես Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով, վարչության անդամ
Էմմա Ջանինյան Գլխավոր հաշվապահ	Էմմա Ջանինյանը ծնվել է 1988թ. Լոռու մարզի Օձուն գյուղում: 2009թ. - ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2011թ. – ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանը (Master of Business Administration - MBA որակավորում) 2014թ. – ստացել է Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան (PhD) ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի տնտեսագիտության մասնագիտական խորհրդի կողմից 2017թ. - հանդիսանում է Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) լիիրավ անդամ 2022թ. – անցել է ESMT Berlin-ի կողմից Matena International School of Leadership and Professional Development-ի հետ համատեղ կազմակերպված Data-Driven Strategy դասընթացը Կարիերա 2011-2019թթ. - աշխատել է «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՍՊԸ-ում՝ որպես Աուդիտոր, այնուհետև՝ Ավագ աուդիտոր 2019թ. - աշխատում է Evocabank-ում՝ որպես Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
Սմբատ Մարտիրոսյան Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	Սմբատ Մարտիրոսյանը ծնվել է 1987թ. Երևանում: 2008թ. - ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը (Բակալավրի որակավորում) 2010թ. - ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը (Մագիստրոսի որակավորում) Կարիերա 2010-2016թթ. - աշխատել է «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ում՝ որպես առաջատար իրավախորհրդատու, իրավաբանական վարչության պայմանագրաիրավական բաժնի պետ, իրավաբանական վարչության պետի տեղակալ, այնուհետև՝ Իրավաբանական վարչության պետ 2013-2015թթ. - դասավանդել է «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամում 2016-2019թթ. - աշխատել է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեում՝ որպես Քարտուղարության վարչության պետ 2019թ. - աշխատել է «Արմենիան տոբակո Քոմփանի» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան 2019-2021թթ. - աշխատել է Evocabank-ում՝ որպես Իրավաբանական բաժնի պետ 2022թ. – աշխատում է Evocabank-ում՝ որպես Իրավաբանական վարչության պետ, Վարչության անդամ

Միեր Սահակյան Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ	Միեր Սահակյանը ծնվել է 1981թ. Նոր Հաճնում: 2002թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանը (Մեխանիկայի բակալավրի աստիճան) 2004թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանը (Մեխանիկայի մագիստրոսի աստիճան) ԿԱՐԻԵՐԱ 2003-2016թթ. - աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ Նոր Հաճն մասնաճյուղում, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ SS բաժնի ադմինիստրատորների խմբում, այնուհետև՝ Ծրագրավորման բաժնի պետ 2016-2017թթ. - աշխատել է «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Ծրագրավորման բաժնի պետ 2017-2018թթ. – աշխատել է Evocabank-ում՝ որպես Ծրագրավորման բաժնի պետ 2018-2020թթ. – աշխատել է Evocabank-ում՝ որպես Ծրագրավորման բաժնի պետ, Վարչության անդամ 2020թ. - աշխատում է Evocabank-ում՝ որպես Ծրագրավորման և Գործառնական Համակարգերի Վարչության պետ, Վարչության անդամ

4.7.2.4 Բանկի վարչության նախագահը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ վարչության նախագահը: Վարչության նախագահը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի վարչության նախագահի հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի խորհրդի նախագահը:

Բանկի վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Վարչության նախագահի իրավասությանը:

4.7.3 Սույն Ծրագրային ազդագրի կազմման պահին Բանկի ոչ մի մասնաճյուղ չէր կենտրոնացրել Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը:

4.7.4 Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև սույն Ծրագրային ազդագիրը գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

4.8 Հսկող անձինք

	Անուն ազգանուն	Հսկողության տեսակ	Մեկնաբանություն	Նույնականացման տվյալներ

1.	Մարետա Գևորկյան	Ուղղակի	Տիրապետում է Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի 100 %-ին	Բնակության վայրը՝ Շվեյցարիա, Պյուի 1009, Ջեներալ պողոտա, Գուիսան 45Ա Անձնագիր՝ FA0777676, տրված 05.12.2022թ.

4.9 Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ

4.9.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2025, 2024 և 2023 թվականների աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները, 2026 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներակայացված են Ազդագրի Հավելված 6-ում: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ https://www.evoca.am/hy/auditors-opinion/:

4.9.2 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Սույն Ծրագրային ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

4.9.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն փաստաթղթի պատրաստմանը նախորդող 12 ամսիների ընթացքում Բանկը ներգրավված է թվով 1 (մեկ) դատական վարույթում:
Հիմք ընդունելով այն փաստը, որ թիվ ՎԴ/16635/05/25 վարչական գործով և թիվ ԵԴ2/11528/02/25 քաղաքացիական գործով որպես հայցի ապահովում դատարանի համապատասխան որոշումներով կիրառվել են (կիրառված են) հայցի ապահովում, ուստի սույն «Ծրագրային ազդագրի» շրջանակներում նշված դատական վարույթի վերաբերյալ նկարագիր ներկայացնելը սահմանափակված է դատական ակտերի ուժով:

4.10 Էական պայմանագրեր

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

4.11 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

1. Սույն Ծրագրային ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:
2. Թողարկողը չունի երրորդ անձ փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:
3. Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 6-ում:

4.12 Այլ տեղեկատվություն

Բանկի Կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am:
Սույն Ծրագրային ազդագրի էլեկտրոնային տարբերակը կիրառության ողջ ժամկետի ընթացքում տեղադրված է լինելու բանկի ինտերնետային կայքում՝ www.evoca.am:
Ներդրողը անվճար կարող է ձեռք բերել սույն Ծրագրային ազդագիրը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Բանկի Գլխամասային գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության 44/2 հասցեում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

Հավելված 1 «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ (իրավաբանական անձանց համար)

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը _____

(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____

գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Բանկի թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից	
Ձեռք բերվող պարտպատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտպատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով**
Ստորագրություն	
Անուն Ազգանուն	(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտպատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները _____ հաշվին են մուտքագրվում մինչև պարտպատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

<u>Հավելված 1</u> «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ (իրավաբանական անձանց համար)

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ թողարկած արտարժութային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման Հայտ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____
(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՄ 9-ի և մասնակիորեն՝ ՖՀՄՄ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՄ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՄ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Բանկը դասակարգում է որպես այլ գործառնական ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

– ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

– ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

– արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
– ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
– արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և կորուստներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այդ ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այդ բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

– պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
– ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
– բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
– ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
– նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:
Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այսդիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

– պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
– լծակավորման հատկանիշը,
– վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
– պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
– հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այդ հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այդ վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այդպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում

Երբ ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում փոխվում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքը, Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումը պահանջում է պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

– փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխման ուղղակի հետևանք և

– պայմանագրային դրամական հոսքերը որոշելու նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին, այսինքն՝ անմիջապես նախքան փոփոխությունը գործող հիմքին:

Եթե ի լրումն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունների կատարվում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության այլ փոփոխություններ, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղնեիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Այնուհետև Բանկը լրացուցիչ փոփոխությունների նկատմամբ կիրառում է վերափոխումների հաշվառմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները:

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

– վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
– մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի վերափոխումը չի դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում է գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

– ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
– գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
– ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխումը կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այդ մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում՝ վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար

ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Վերափոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն ինարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 29 (գ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալություններում,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 29 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 29 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 29 (գ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալություններում պարտքային առումով արժեզրկված լինելու

տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Դա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այդ ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի

աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այդ գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այդ ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- հաճախորդներին տրված վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության

հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերը: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

(ii) Վերագնահատում

Հողը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների փոփոխություններից: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(h) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Արտոնյալ բաժնետոմսեր

Չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ նախատեսում են հայեցողական շահաբաժինների վճարում, չեն ներառում դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելու պարտականություններ և չեն պահանջում Բանկի փոփոխական թվով բաժնային գործիքների մարում: Այդ բաժնետոմսերի գծով հայեցողական շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Բանկի բաժնետերերի հաստատմամբ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(l) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

(խ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ և ներդրումային բանկային ծառայություններ (2025թ-ին՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ և ներդրումային բանկային ծառայություններ):

(ծ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք

առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

5 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Հաճախորդներին տրված վարկեր	20,713,557	14,866,831	10,903,918	7,617,378
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,579,227	3,293,728	1,598,237	1,703,211
Հակադարձ ռեպո գործառնություններ	2,345,396	1,899,578	1,234,935	1,026,454
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	796,928	948,349	323,498	553,394
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,116,977	1,411,138	544,396	622,310
Այլ	125,188	5,263	61,295	2,565
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**28,677,273**	**22,424,887**	**14,666,279**	**11,525,312**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	10,595,497	7,511,592	5,508,624	3,998,418
Ռեպո գործառնություններ	387,368	523,131	242,560	221,823
Ստորադաս փոխառություն	308,966	174,630	142,878	86,878
Այլ փոխառություններ	3,027,134	2,297,728	1,505,658	1,185,893
Թողարկված պարատոմսեր	834,365	1,075,695	368,509	539,027

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	259,692	251,039	158,785	148,407
Տոկոսային ծախս վարձակալության գծով	95,812	73,278	52,879	37,020
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**15,508,834**	**11,907,093**	**7,979,893**	**6,217,466**

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծախսեր	605,114	1,132,164	396,026	686,474
Վճարային քարտերով գործառնություններ	3,321,290	2,668,557	1,799,683	1,230,607
Դրամական փոխանցումներ	975,417	780,317	532,911	359,066
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	442,399	342,784	247,007	191,529
Այլ	106,896	88,092	55,801	51,537
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	57,309	114,862	38,437	70,332
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**5,508,425**	**5,126,776**	**3,069,865**	**2,589,545**
Վճարային քարտերով գործառնություններ	3,193,425	2,069,878	1,777,304	877,043
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծախսեր	446,238	2,086,483	279,790	1,174,326
Դրամական փոխանցումներ	245,899	158,767	144,106	84,810
Այլ	20,193	63,245	7,578	53,741
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**3,905,755**	**4,378,373**	**2,208,778**	**2,189,920**

7 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	5,169,650	10,276,418	4,047,879	5,728,651
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	625,212	3,656,286	(190,159)	2,247,787
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**5,794,862**	**13,932,704**	**3,857,720**	**7,976,438**

8 Այլ գործառնական եկամուտ

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ստացված տույժեր և տուգանքներ	194,897	191,889	104,045	55,329
Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	8,007	25	17	(4,942)
Դատական տուրքերի վերադարձ	10,657	9,885	6,852	5,135
Այլ	95,019	75,796	61,333	50,181
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**308,580**	**277,595**	**172,247**	**105,703**

9 Ուղղակի բանկային ծախսեր

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	374,705	388,394	200,332	197,019
Վարկերի վաղաժամկետ մարումից վերադարձման ծախսեր	2,484	2,786	1,362	1,238
Ինկասացիոն ծախսեր	84,937	56,687	68,213	34,365
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	36,786	27,611	18,393	13,805
Վարկային ռեգիստրի և այլ գործառնական համակարգերի օգտագործման ծախսեր	80,875	74,680	41,018	39,957

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Քարտերի անվանագրման և առաքման ծախսեր	19,568	17,463	7,603	8,870
Վարկերի զիջման ծախսեր	1,578	85	1,565	28
Բրոքերային ծառայությունների գծով ծախսեր	14,395	17,035	6,307	8,756
Պահառուական ծառայությունների գծով ծախսեր	25,482	17,867	10,663	9,569
Այլ	245,328	198,747	120,929	109,369
Ընդամենը ուղղակի բանկային ծախսեր	**886,138**	**801,355**	**476,385**	**422,976**

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(21)	(5,852)	34	(4,081)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(1,283)	(14,197)	(273)	(15,501)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(13,124)	(64,399)	(3,221)	(34,610)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(7,998)	19,569	10,097	10,566
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(11,071)	(66,362)	(6,970)	(21,578)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	580,847	265,542	355,065	218,712
Այլ ակտիվներ	22,797	36,301	(2,033)	(1,551)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	469	223	(1,937)	(5,139)
Ընդամենը արժեզրման ծախս	**570,616**	**170,825**	**350,762**	**146,818**

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	5,524,044	5,895,950	2,769,442	3,109,566
Անձնակազմի ուսուցման ծախսեր	53,932	85,509	30,729	33,752
Անձնակազմի գծով այլ ծախսեր	189,061	104,069	102,189	50,448
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**5,767,037**	**6,085,528**	**2,902,360**	**3,193,766**

12 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Գովազդ և հասարակայնության հետ կապեր	1,887,318	641,744	1,051,108	304,862
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	79,427	63,442	39,914	33,518
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	245,816	165,169	98,444	84,098
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	72,204	57,215	36,638	29,895
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	441,586	398,353	230,307	188,850
Անվտանգության գծով ծախսեր	112,950	73,891	57,381	37,032
Գրասենյակային ծախսեր	55,674	50,293	29,321	26,089
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	317,317	154,267	202,635	92,712
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	413,417	130,323	220,291	105,412
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	83,894	62,486	45,139	32,490
Ապահովագրության գծով ծախսեր	18,181	42,797	9,459	22,070
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	62,409	43,895	37,848	22,073
Այլ	68,678	50,691	45,121	29,128
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	**3,858,871**	**1,934,566**	**2,103,606**	**1,008,229**

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	2026թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	2,208,568	1,929,998	1,408,707	950,122
Հետաձգված հարկ	(267,030)	349,189	(262,406)	252,546
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**1,941,538**	**2,279,187**	**1,146,301**	**1,202,668**

2026թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի հարկի դրույքաչափը կազմում է 18% (2025թ. համեմատ փոփոխություն տեղի չի ունեցել):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում հունիսի 30-ին ավարտված ժամանակահատվածի համար

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**9,974,986**		**15,725,651**	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	1,795,497	18.0	2,830,617	18.0
Չնվազեցվող ծախսեր	260,450	2.6	106,701	0.7
2026թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1 բանկ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: Այդ մնացորդների հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 10,901,577 հազար ՀՀ դրամ:

23 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Ռեպո համաձայնագրեր ԿԲ-ի հետ	32,644,404	42,061,232
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	11,299,777	-
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**43,944,181**	**42,061,232**

(ա) Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կենտրոնացում

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկը բացի ՀՀ ԿԲ-ից չունի պայմանագրային կողմ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝չունի), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

24 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	96,052,466	118,398,512
Ժամկետային ավանդներ	72,313,488	63,797,798
	168,365,954	**182,196,310**
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	85,941,831	66,631,759
Ժամկետային ավանդներ	208,991,972	185,221,182
	294,933,803	**251,852,941**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**463,299,757**	**434,049,251**

2026թ. հունիսի 30-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ներառում են 29,628,102 հազար դրամի չափով ավանդները (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 24,282,767 հազար դրամ), որոնք ծառայում են որպես ապահովություն հաճախորդներին տրված վարկերի, տրված երաշխավորությունների և պայմանական պարտավորությունների հետ կապված այլ գործարքների համար: Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկն ունի 4 հաճախորդ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4 հաճախորդ), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2026թ. հունիսի 30-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 72,197,936 հազար դրամ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 60,051,115 հազար դրամ):

25 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Թողարկված պարտքային արժեթղթեր	17,146,828	30,342,305
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**17,146,828**	**30,342,305**

2024թ. հուլիսի 25-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը 10.25% և 5.25% է, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը կազմում է 36 ամիս:

2024թ. սեպտեմբերի 30-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը 10% և 5% է, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը կազմում է 36 ամիս:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

26 Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Փոխառություններ վարկային կազմակերպություններից	23,218,772	23,341,162
Փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	3,582,434	4,350,040
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	58,779,412	51,208,875
Ընդամենը այլ փոխառություններ	**85,580,618**	**78,900,077**

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պայմանները բավարարող վարկառուներին: Վարկերի մշտադիտարկումն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից: Այդ վարկերը դիտարկվում են որպես շուկայի առանձին սեգմենտի վարկեր:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի կազմում ներառված են 23,218,772հազար դրամ գումարով վարկերը (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 23,341,162 հազար դրամ), որոնք ըստ պայմանավորվածության Բանկի կողմից տրամադրվելու են որպես հիփոթեքային վարկեր համապատասխան պայմանները բավարարող վարկառուներին: Տնտեսության որոշակի ճյուղերում գործող փոքր և միջին չափի ձեռնարկություններին աջակցելու և հիփոթեքային շուկան զարգացնելու նպատակով տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող այս տեսակի ֆինանսավորման համար փաստացի շուկա չի գործում: Այդ վարկերի համար գործում է ՀՀ ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը և դրանք իրենցից ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ:

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկն ունի երկու պայմանագրային կողմ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու պայմանագրային կողմ), որոնցից ստացված փոխառությունների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2026թ. հունիսի 30-ի դրությամբ այդ փոխառությունները կազմում են 27,235,899 հազար դրամ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 28,816,809 հազար դրամ):

(բ) Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Ֆիզիկական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություն	3,732,225	3,869,638
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից կողմի ստացված ստորադաս փոխառություն	2,004,828	2,077,012
Ընդամենը ստորադաս փոխառություններ	**5,737,053**	**5,946,650**

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության պայմանագիր, որը Բանկի անվճարունակության կլինի երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների, այդ թվում՝ ավանդների և այլ պարտքային գործիքների գծով պարտավորությունների նկատմամբ:

2016թ. ընթացքում Բանկը ստացել է 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն՝ 2031թ-ին մարման ժամկետով:
2025թ. ընթացքում Բանկը ստացել է 5,500 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն՝ 2031թ-ին մարման ժամկետով:

(գ) Սահմանափակումներ (կովենանտներ)

Բանկը պարտավոր է համապատասխանել որոշակի սահմանափակումների փոխառության պայմանագրերի հետ կապված: 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը համապատասխանում էր բոլոր սահմանափակումներին:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Պարտավորություններ շահաբաժինների գծով	-	646,000
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ֆինանսական	57,040	56,571
Վճարվելիք գումարներ	3,216,670	3,736,723
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**3,273,710**	**4,439,294**
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	1,205,135	1,757,082
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	3,133,895	869,436
Ակտիվներին վերաբերող շնորհներ	32,190	33,240
Այլ	29,894	49,887
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**4,401,114**	**2,709,645**
Ընդամենը այլ պարտավորություններ	**7,674,824**	**7,148,939**

28 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ

2026թ. հունիսի 30-ի Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 23,000,000 հազար դրամ: Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը բաղկացած է 172,500 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով և 57,500 չմարվող արտոնյալ բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով:

2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ տարեկան շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 10-12%-ի չափով Բանկի հայեցողությամբ և չունեն քվեարկելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը: Այդ գումարը նվազեցվում է կորստի պահուստի գումարի չափով: Պարտքային գործիք հանդիսացող ակտիվի ապաճանաչումից հետո պահուստի համապատասխան մասը վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Հողի և շենքերի վերագնահատումից աճ

Հողի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հողի և շենքերի արժեքի կուտակային դրական փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը: Մաշվածությունը հաշվառվում է չբաշխված շահույթի միջոցով:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

Օրենսդրության պահանջների համաձայն՝ Բանկը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթի հաշվին՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար:

Ֆինանսական հաշվետվություններում 2026թ. հունիսի 30-ին և 2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանների համար արտոնյալ շահաբաժիններ չեն կուտակվել:

Ֆինանսական հաշվետվություններում 2026թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար հասարակ բաժնետոմսերի գծով կուտակվել են 5,000,000 հազար ՀՀ դրամի չափով շահաբաժիններ(2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար՝ 2,500,000 հազար ՀՀ դրամի չափով):

29 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող պորդուկտների և ծառայությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026			31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7.2	4.5	-	7.4	4.6	17.9
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	8.1	12.6	-	7.8	16.5
Ներդրումային արժեթղթեր	10.0	7.7	-	10.5	7.8	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13.8	8.0	10.5	13.8	7.9	9.5
Տոկոսաբեր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2.5-6.0	0.75-3	0-1	2.5-.0	0.75-3	0-1
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	.3	3.6	-	6.9	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	10.0	4.3	5.8	10.0	4.3	5.8
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.5	5.2	-	10.8	5.1	-
Վարձակալության գծով պարտավորություններ	10.3	-	-	10.3	-	-
Այլ փոխառություններ	8.3	7.9	-	8.4	8.4	-
Ստորադաս փոխառություններ	-	10.3	-	-	10.3	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական

ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի -ի դրությամբ դիրքերի հիման վրա:

	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
100 բկ զուգահեռ աճ	167,687	132,484
100 բկ զուգահեռ նվազում	(167,687	(132,484)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
100 բկ զուգահեռ աճ	(2,404,526)	(1,993,595)
100 բկ զուգահեռ նվազում	2,404,526	1, 993,595

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2026թ. հունիսի 30-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,816,032	37,216,302	6,214,741	57,247,075
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	106,368,995	3,048,316	-	109,417,311
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	1,039,233	48,755,109	6,032,704	55,827,046
Ներդրումային արժեթղթեր	84,008,203	9,327,449	-	93,335,652

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	238,586,317	182,044,094	1,297,121	421,927,532
Այլ ֆինանսական ակտիվներ	2,955,350	206,473	110,871	3,272,694
Ընդամենը	**446,774,130**	**280,597,743**	**13,655,437**	**741,027,310**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,864,331	21,555,245	639,740	24,059,316
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	37,650,924	6,293,257	-	43,944,181
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	261,604,408	191,873,563	9,821,786	463,299,757
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,056,655	11,090,173	-	17,146,828
Այլ փոխառություններ	40,141,027	45,439,591	-	85,580,618
Ստորադաս փոխառություններ	-	5,737,053	-	5,737,053
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,998,407	816,498	401,765	3,216,670
Ընդամենը	**349,315,752**	**282,805,380**	**10,863,291**	**642,984,423**
Զուտ Դիրք	97,458,378	(2,207,637)	2,792,146	98,042,887
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	96,000	3,192,688	(3,288,688)	-
Զուտ Դիրք	**97,554,378**	**985,051**	**(496,542)**	**98,042,887**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,816,792	54,797,577	9,689,254	122,303,623
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	63,947,313	2,484,074	1,221,041	67,652,428
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	3,190,238	49,290,170	1,985,929	54,466,337
Ներդրումային արժեթղթեր	100,651,558	8,341,002	-	108,992,560

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	197,687,604	161,048,461	1,279,162	360,015,227
Այլ ֆինանսական ակտիվներ	1,981,180	573,978	6,225	2,561,383
Ընդամենը	**425,274,685**	**276,535,262**	**14,181,611**	**715,991,558**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,883,358	23,488,624	83,259	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,061,232	-	-	42,061,232
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	236,431,068	184,245,847	13,372,336	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,064,030	22,278,275	-	30,342,305
Այլ փոխառություններ	41,629,436	37,270,641	-	78,900,077
Ստորադաս փոխառություններ	-	5,946,650	-	5,946,650
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,318,125	995,438	69,160	4,382,723
Ընդամենը	**333,387,249**	**274,225,475**	**13,524,755**	**621,137,479**
Զուտ Դիրք	91,887,436	2,309,787	656,856	94,854,079
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(35,000)	155,553	(120,553)	-
Զուտ Դիրք	**91,852,436**	**2,465,340**	**536,303**	**94,854,079**

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց հետ կապված Բանկը ենթարկվում է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գոծառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Պարտազանցման հավանականության	*Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Պարտքի գումարը պարտազանցման պահին	*Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:
Կորուստը պարտազանցման դեպքում	*Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկն խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է

պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Բանկը ներդրել է իր սեփական ներքին վարկանիշային մոդելն անհատական հիմունքով խոշոր վարկերի համար, որոնք կազմում են իրավաբանական անձանց տրված վարկերի ընդհանուր պորտֆելի մոտ 47%-ը: Բանկը վարկանիշները շնորհում է «Moody's» գործակալության վարկանիշայի սանդղակի համաձայն և կիրառում է համապատասխան վարկանիշին համապատասխանող «Moody's» գործակալության պարտազանցման հավանականության դրույքները

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը՝ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ փուլի ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի տեսանկյունից:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Պարտազանցման պահին պարտքի գումարը որոշելու համար հիմք են ընդունվում վարկերի առանձին մարման ժամանակացույցերը:

Կորուստը պարտազանցման դեպքում

Ֆիզիկական անձանց տրված՝ գրավով չապահովված 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները պարտազանցված բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է պարտազանցված վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ և այլն): 1-ին, 2-րդ և 3-րդ փուլեր դասված մնացած վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, այդ թվում՝ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը: 2026թ. հունիսի 30-ի դրությամբ անհատական հիմունքով գնահատվող իրավաբանական անձանց տրված վարկերի համար պարտազանցման դեպքում առաջացող կորուստը կազմում էր 5%-53.7% (2025թ-ին՝ 5%-53.7%):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված այլ վարկերի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- անհատական հիմունքով վարկանշավորված վարկերի ներքին վարկանիշը նվազել է երկու կամ ավելի մակարդակով:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- ՀՆԱ-ի իրական աճը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից, ՀՀ ֆինանսների նախարարությունից):

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և

ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով: Գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2026թ. հունիսի 30-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	109,417,311	-	109,417,311	(109,417,311)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**109,417,311**	**-**	**109,417,311**	**(109,417,311)**	**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(43,944,181)	-	(43,944,181)	43,944,181	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(43,944,181)	**-**	(43,944,181)	43,944,181	**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ

պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	67,652,428	-	67,652,428	(67,652,428)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**67,652,428**	**-**	**67,652,428**	**(67,652,428)**	**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(42,061,232)	-	(42,061,232)	42,061,232	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(42,061,232)**	**-**	**(42,061,232)**	**42,061,232**	**-**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

– դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
– ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
– պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
– պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
– բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
– իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
– օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ: Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեստեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ: Այնուամենայնիվ, Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	22,573,051	-	-	-	22,573,051	24,059,316
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	43,955,076	-	-	-	43,955,076	43,944,181
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	197,216,128	156,680,290	132,065,009	96,243	486,057,670	463,299,757

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Թողարկված պարտքային արժեթղթեր	149,303	1,023,828	17,329,983	-	18,503,114	17,146,828
Այլ փոխառություններ	1,808,058	20,063,968	69,007,392	10,761,033	101,640,451	85,580,618
Ստորադաս փոխառություններ	16,454	546,604	2,255,957	5,932,908	8,751,923	5,737,053
Վարձակալության գծով պարտավորություններ	44,624	480,786	1,312,744	853,143	2,691,297	1,908,378
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,216,670	-	-	-	3,216,670	3,216,670
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**268,979,364**	**178,795,476**	**221,971,085**	**17,643,327**	**687,389,252**	**644,892,801**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**33,649,632**	**-**	**-**	**-**	**33,649,632**	**33,649,632**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	25,455,241	-	-	-	25,455,241	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,099,516	-	-	-	42,099,516	42,061,232
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	207,994,758	120,380,319	125,576,665	119,715	454,071,457	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	151,956	14,077,795	18,336,181	-	32,565,932	30,342,305
Այլ փոխառություններ	347,272	18,928,931	64,225,429	12,116,768	95,618,400	78,900,077
Ստորադաս փոխառություններ	17,992	565,667	2,339,498	6,438,467	9,361,624	5,946,650
Վարձակալության գծով պարտավորություններ	41,719	437,765	1,258,950	517,889	2,256,323	1,672,835
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,090,723	646,000	-	-	3,736,723	4,382,723
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**279,845,177**	**155,036,477**	**211,736,723**	**19,192,839**	**665,811,216**	**622,810,314**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**25,622,618**	**-**	**-**	**-**	**25,622,618**	**25,622,618**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

Հազար ՀՀ դրամ

	30 հունիսի 2026						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,247,075	-	-	-	-	-	57,247,075
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	109,417,311	-	-	-	-	-	109,417,311
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	9,667,422	-	6,210,510	-	39,949,114	-	55,827,046
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	40,141	14,984,020	46,538,921	9,553,121	-	-	71,116,203
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	-	12,660,214	4,986,076	4,573,159	-	-	22,219,449
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	31,775,395	65,326,012	200,012,299	119,205,436	-	5,608,390	421,927,532
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	13,442,905	-	13,442,905
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,688,714	-	1,688,714
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	2,582,039	-	2,582,039
Այլ ակտիվներ	3,272,694	-	-	-	2,427,526	-	5,700,220
Ընդամենը ակտիվներ	**211,420,038**	**92,970,246**	**257,747,806**	**133,331,716**	**60,090,298**	**5,608,390**	**761,168,494**
Պարտավորություններ							

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
				30 հունիսի 2026			
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	24,059,316	-	-	-	-	-	24,059,316
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	43,944,181	-	-	-	-	-	43,944,181
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	196,923,571	146,694,936	119,618,363	62,887	-	-	463,299,757
Թողարկված պարտքային արժեթղթեր	109,667	461	17,036,700	-	-	-	17,146,828
Այլ փոխառություններ	1,763,211	15,445,129	58,960,376	9,411,902	-	-	85,580,618
Ստորադաս փոխառություններ	16,454	37,521	-	5,683,078	-	-	5,737,053
Վարձակալության գծով պարտավորություններ	26,391	318,195	900,071	663,721	-	-	1,908,378
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	1,303,248	-	-	-	-	1,303,248
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	2,825,836	-	2,825,836
Այլ պարտավորություններ	6,350,565	-	-	-	1,324,259	-	7,674,824
Ընդամենը պարտավորություններ	**273,193,356**	**163,799,490**	**196,515,510**	**15,821,588**	**4,150,095**	**-**	**653,480,039**
Զուտ Դիրք	**(61,773,318)**	**(70,829,244)**	**61,232,296**	**117,510,128**	**55,940,203**	**5,608,390**	**107,688,455**

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2025

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	122,303,623	-	-	-	-	-	122,303,623
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	67,652,428	-	-	-	-	-	67,652,428
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	4,217,638	1,515,984	6,442,933	-	42,289,782	-	54,466,337
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	6,916	20,892,431	51,411,682	14,972,514	-	-	87,283,543
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	-	5,854,876	11,341,646	4,512,495	-	-	2,170,9017
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	24,858,114	72,595,353	157,320,892	99,273,925	-	5,966,943	360,015,227
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	12,456,087	-	12,456,087
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,506,666	-	1,506,666
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	2,099,864	-	2,099,864
Այլ ակտիվներ	2,561,383	-	-	-	3,674,575	-	6,235,958
Ընդամենը ակտիվներ	**221,600,102**	**100,858,644**	**226,517,153**	**118,758,934**	**62,026,974**	**5,966,943**	**735,728,750**
Պարտավորություններ							
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	25,455,241	-	-	-	-	-	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,061,232	-	-	-	-	-	42,061,232
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	207,419,700	111,975,178	111,975,178	76,025	-	-	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	114,114	12,787,391	17,440,800	-	-	-	30,342,305

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
31 դեկտեմբերի 2025							
Այլ փոխառություններ	301,665	14,367,749	53,644,515	10,586,148	-	-	78,900,077
Ստորադաս փոխառություններ	17,240	39,449	-	5,889,961	-	-	5,946,650
Վարձակալության գծով պարտավորություններ	26,985	294,246	931,151	420,453	-	-	1,672,835
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	1,733,550	-	-	-	-	1,733,550
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	3,212,171	-	3,212,171
Այլ պարտավորություններ	4,606,159	646,000	-	-	1,896,780	-	7,148,939
Ընդամենը պարտավորություններ	**280,002,336**	**141,843,563**	**186,594,814**	**16,972,587**	**5,108,951**	**-**	**630,522,251**
Զուտ Դիրք	**(58,402,234)**	**(40,984,919)**	**39,922,339**	**101,786,347**	**56,918,023**	**5,966,943**	**105,206,499**

30 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետոմսերի ֆոնդային բորսայի արժեքն առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների և իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2025թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 11%: 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբեր ամսվա համար:

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025
Ընդամենը ընդհանուր կապիտալ	106,179,830	102,867,314
Ռիսկով կշռված ակտիվներ	597,330,029	576,103,526
Կապիտալի համարժեքության նորմատիվ	17.78%	17.86%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով սահմանված չափանիշներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

31 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այդ պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Վարկային գծերի չօգտագործված մաս	27,491,800	22,400,110
Տրամադրված երաշխավորություններ	6,157,832	3,222,508
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**33,649,632**	**25,622,618**
Արժեզրկումից պահուստներ	(57,040)	(56,571)

2026թ. հունիսի 30-ի դրությամբ 157,085 հազար ՀՀ դրամ գումարով ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասված են 3-րդ փուլ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 157,085 հազար ՀՀ դրամ), մնացած ֆինանսական փոխատվության հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ:

Չօգտագործված վարկերի գծով հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են ՖՀՄՄ 9-ի համաձայն և ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է երաշխավորությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2026թ. հունիսի 30-ին և 2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	621		55,950	56,571
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	469	-	-	469
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունիսի 30-ի դրությամբ	**1,090**		**55,950**	**57,040**

Հազար ՀՀ դրամ	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	22,315	-	55,901	78,216
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	223	-	-	223
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունիսի 30-ի դրությամբ	**22,538**	**-**	**55,901**	**78,439**

32 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի հետևանքով առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

33 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը հունիսի 30-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան-ջան	2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան-ջան
Աշխատավարձ և պարգևատրումներ	445,805	505,408
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**445,805**	**505,408**

Այդ գումարները ներառում են առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումները, որոնք հաշվառված են համապատասխան ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան-ջան		2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան-ջան	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	20,096,044	290,969	2,989,344	315,061
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	579	260,576	6,313,178	101,355
Տարվա ընթացքում մարված վարկեր	(245,403)	(156,000)	(3,096,784)	(48,749)
Վարկերի մնացորդը հունիսի 30-ի դրությամբ, համախառն	**19,851,220**	**395,545**	**6,205,738**	**367,667**
Արժեզրկումից պահուստ	(10,926)	(4,074)	(2,099)	(1,312)
Վարկերի մնացորդը հունիսի 30-ի դրությամբ	**19,840,294**	**391,471**	**6,203,639**	**366,355**

Հազար ՀՀ դրամ

	2026թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան		2025թ. հունիսի 30-ին ավարտված վեցամսյա ժամանակաշրջան	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ				
Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	15,860,478	4,053,154	1,116,601	1,941,015
Տարվա ընթացքում ստացված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	18,160,951	4,260,868	99,897,056	5,228,819
Տարվա ընթացքում վճարված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	(18,061,810)	(4,239,152)	(86,434,182)	(4,912,385)
Ավանդների մնացորդը հունիսի 30-ի դրությամբ	15,959,619	4,074,870	14,579,475	2,257,449
Ստորադաս փոխառություններ	3,732,225	-	3,900,804	-
Շահույթի *կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն*				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	772,071	17,308	244,163	17,188
Արժեզրկման (ծախս)/ հակադարձում	(1,855)	430	51,807	(30)
Տոկոսային ծախսեր ավանդների գծով	(465,950)	(112,099)	(67,036)	(61,923)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների գծով	(55,154)	-	(174,630)	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(56)	(3,282)	(56)	(2,585)

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը կազմում է 9%, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

34 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական

տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները:

Հազար ՀՀ դրամ **30 հունիսի 2026**	**Հաշվեկշռային արժեք**	**Իրական արժեք**	**Տարբերություն**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	421,927,532	428,547,618	(6,620,086)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,219,449	23,618,671	(1,399,222)
Ընդամենը	**444,146,981**	**452,166,289**	**(8,019,308)**

Հազար ՀՀ դրամ **31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)**	**Հաշվեկշռային արժեք**	**Իրական արժեք**	**Տարբերություն**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	360,015,227	366,566,030	(6,550,803)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	21,709,017	22,989,904	(1,280,887)
Ընդամենը	**381,724,244**	**389,555,934**	**(7,831,690)**

Ստորև բերվող աղյուսակներում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2026թ. հունիսի 30-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	30 հունիսի 2026			
	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր	-	70,657,405	-	70,657,405
Բաժնային գործիքներ	-	-	458,798	458,798
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	428,547,618	428,547,618
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	23,618,671	-	23,618,671
Ընդամենը ակտիվներ	**-**	**94,276,076**	**429,006,416**	**523,282,492**

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2025(աուդիտ անցած)			
	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր	-	86,974,078	-	86,974,078
Բաժնային գործիքներ	-	-	309,465	309,465
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	366,566,030	366,566,030
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	22,989,904	-	22,989,904
Ընդամենը ակտիվներ	**-**	**109,963,982**	**366,875,495**	**476,839,477**

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոփերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար: 2-րդ մակարդակ դասված ֆինանսական գործիքների համար Բանկն օգտագործում է

նմանատիպ գործիքների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք համարվում են գրեթե ոչ գործող:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 7.1%-13.5% զեղչման դրույքներ՝ արտարժույթով արտահայտված վարկերի համար և 8.5%-12.5% զեղչման դրույքներ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 8.2%-10.5% դրույքներ և արտարժույթով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 6.0%-7.1% դրույքներ:

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

31/03/2026

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն.....2
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն.....4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն.....6
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն.....8
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն (եռամսյակային).....12
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....15

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	14,010,994	10,899,575
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(7,528,941)	(5,689,627)
Զուտ տոկոսային եկամուտներ		**6,482,053**	**5,209,948**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	6	2,438,560	2,537,231
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	6	(1,696,977)	(2,188,453)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		**741,583**	**348,778**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7	1,937,142	5,956,266
Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		1,041,013	114
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		3,117	(72,946)
Այլ գործառնական եկամուտներ	8	136,333	171,892
Ուղղակի բանկային ծախսեր	9	(409,753)	(378,379)
Գործառնական եկամուտ		**9,931,488**	**11,235,673**
Արժեզրկման ծախս	10	(219,854)	(24,007)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(2,864,677)	(2,891,762)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	(417,996)	(364,079)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	(1,755,265)	(926,337)
Շահույթ մինչև հարկումը		**4,673,696**	**7,029,488**
Շահութահարկի գծով ծախս	13	(795,237)	(1,076,519)
Շահույթ ժամանակաշրջանի համար		**3,878,459**	**5,952,969**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են որպես շահույթ կամ վնաս			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում		95,659	388,254
- Շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		(892,216)	(93)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		**(796,557)**	**388,161**
Այլ համապարփակ ֆինանսական օգուտ/(վնաս) ժամանակաշրջանի համար հարկումից հետո		**(796,557)**	**388,161**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար		**3,081,902**	**6,341,130**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025(աուդիտ անցած)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		54,277,048	122,303,623
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14	71,088,107	67,652,428
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	15	57,936,033	54,466,337
Ներդրումային արժեթղթեր	16	104,029,189	108,992,560
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	386,565,847	360,015,227
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	12,996,933	12,456,087
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	19	1,426,031	1,506,666
Բռնագանձված ակտիվներ	20	2,582,038	2,099,864
Այլ ակտիվներ	18	14,679,744	6,235,958
Ընդամենը ակտիվներ	21	**705,580,970**	**735,728,750**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		14,435,102	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	22	28,194,402	42,061,232
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	23	427,148,382	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	24,227,820	30,342,305
Այլ փոխառություններ	25	76,561,280	78,900,077
Ստորադաս փոխառություններ	26	5,937,659	5,946,650
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	26	2,065,499	1,733,550
Հետաձգված հարկային պարտավորություն		3,036,664	3,212,171
Վարձակալության գծով պարտավորություններ	14	1,613,882	1,672,835
Այլ պարտավորություններ	20	14,071,879	7,148,939
Ընդամենը պարտավորություններ	27	**597,292,569**	**630,522,251**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		23,000,000	23,000,000
Գլխավոր պահուստ	28	3,500,000	3,500,000
Շենքերի և հողի վերագնահատումից աճ		3,737,152	3,764,820
Իրական արժեքի պահուստ		2,721,103	3,517,660
Չբաշխված շահույթ		75,330,146	71,424,019
Ընդամենը սեփական կապիտալ		**108,288,401**	**105,206,499**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**705,580,970**	**735,728,750**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	23,000,000	3,500,000	3,517,660	3,764,820	71,424,019	105,206,499
Տարվա շահույթ	-	-	-	-	3,878,459	3,878,459
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	95,659	-	-	95,659
- Շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(892,216)	-	-	(892,216)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**(796,557)**	**-**	**3,878,459**	**3,081,902**
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(27,668)	27,668	-
Հաշվեկշիռը 2026թ. մարտի 31-ի դրությամբ	**23,000,000**	**3,500,000**	**2,721,103**	**3,737,152**	**75,330,146**	**108,288,401**

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	23,000,000	3,500,000	761,851	3,875,488	53,065,468	84,202,807
Տարվա շահույթ	-	-	-	-	5,952,969	5,952,969
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	388,254	-	-	388,254
- Շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(93)	-	-	(93)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**388,161**	**-**	**5,952,969**	**6,341,130**
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	(27,667)	27,667	-
Հաշվեկշիռը 2025թ. մարտի 31-ի դրությամբ	**23,000,000**	**3,500,000**	**1,150,012**	**3,847,821**	**59,046,104**	**90,543,937**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան



Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	4,673,696	7,029,488
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	417,996	364,079
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	231	819
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	38,056	30,523
Արժեզրկման ծախս	219,854	24,007
Զուտ օգուտ ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(815,371)	(1,408,499)
Ստացվելիք տոկոսներ	(1,894,225)	(2,163,893)
Վճարվելիք տոկոսներ	1,844,863	147,621
***Դրամական միջոցների* հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները**	**4,485,100**	**4,024,145**
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(3,500,731)	(3,711,865)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(3,625,140)	(22,277,060)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(28,991,561)	(9,281,832)
Բռնագանձված ակտիվներ	(4,196)	(27,833)
Այլ ակտիվներ	(8,629,639)	550,752
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(9,310,173)	21,118,883
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(13,831,178)	18,840,653
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(5,542,320)	15,068,860
Այլ պարտավորություններ	7,043,400	(1,033,350)
Գործառնական (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը	**(61,906,438)**	**23,271,353**
Վճարված շահութահարկ	(467,912)	(440,848)
Գործառնական (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(62,374,350)**	**22,830,505**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի վաճառք/(առք)	4,489,276	(5,320,220)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(866,040)	(430,272)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**3,623,236**	**(5,750,492)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(5,772,000)	-
Ստացված այլ փոխառու միջոցներ	959,663	5,344,603
Այլ փոխառու միջոցների մարում	(2,813,310)	(1,985,500)

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Վարձակալության գծով պարտավորություններ	(71,351)	(70,325)
Ֆինանսական (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(7,696,998)**	**3,288,778**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(66,448,112)**	**20,368,791**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ (ծանոթ 14)	122,303,623	83,157,459
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,578,518)	2,279,094
Պարտքային վնասի գծով պահուստի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	55	1,771
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ 14)	**54,277,048**	**105,807,115**
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	12,116,769	8,735,682
Վճարված տոկոսներ	(5,684,078)	(5,505,748)

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան



Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն (եռամսյակային)

01/01/2026-31/03/2026

Հազար ՀՀ դրամ

Նորմատիվներ

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	23,000,000	1,000,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	102,557,298	30,000,000	Խախտում առկա չէ
Ն11 Առաջին մակարդակի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	14.33%	6.20%	Խախտում առկա չէ
Ն12 Առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	15.28%	8.30%	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	16.98%	11.00%	Խախտում առկա չէ
Ն21 Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	36.79%	15.00%	Խախտում առկա չէ
Ն211 Առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.70%	4.00%	Խախտում առկա չէ
Ն212 ԱՄՆ դոլարով, եվրոյով և երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով, տվյալ երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	x	4.00%	Խախտում առկա չէ
Ն22 Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	136.50%	60.00%	Խախտում առկա չէ
Ն221 Առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	89.67%	10.00%	Խախտում առկա չէ
Ն222 ԱՄՆ դոլարով, եվրոյով և երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով, տվյալ երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավո-րությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	x	10.00%	Խախտում առկա չէ

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Ն23 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	172.44%	100.00%	Խախտում առկա չէ
Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	139.74%	100.00%	Խախտում առկա չէ
Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	x	100.00%	Խախտում առկա չէ
Ն24 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	153.50%	100.00%	Խախտում առկա չէ
Ն24 (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	140.60%	100.00%	Խախտում առկա չէ
Ն24(FX)1 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	x	100.00%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	14.87%	20.00%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	56.67%	500.00%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	2.67%	5.00%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	5.03%	20.00%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	2.91%	10.00%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	3.37%	5.00%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը			
ՀՀ դրամով	x	4.00%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով	x	15% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ

	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Եվրոյով		15% Եվրոյով	Խախտում առկա չէ
Այլ արժույթով	x	15% ԱՄՆ դոլարով	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝	2.58%	10.00%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով	x	7.00%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.16%	7.00%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	x	7.00%	Խախտում առկա չէ
Այլ արժույթով	2.43%	7.00%	Խախտում առկա չէ

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ՝ Էմմա Ջանինյան



Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և գործունեությունը

«Էվոկաբանկ» ԲԲԸ-ն (նախկին «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն) (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի 2025 թվականի հուլիսի 29-ի որոշման՝ «Էվոկաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվել է որպես «Էվոկաբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: Բանկի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Բանկն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից 1991թ. հոկտեմբերի 2-ին տրված թիվ 27 լիցենզիայի համաձայն:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամի, Հայաստանի բանկերի միության, ԱրՔա և Master Card վճարային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունն ավանդների ընդունումն է և վարկերի տրամադրումը, Հայաստանում և արտերկիր փոխանցումների, արտարժույթի փոխարկման գործարքների իրականացումն է և այլ բանկային ծառայությունների մատուցումն է իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկին իր գործունեությունն իրականացնում է գլխամասային գրասենյակի և 16 մասնաճյուղերի միջոցով, որոնք գտնվում են Երևանում, Գյումրիում, Աբովյանում և Վանաձորում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության փ. 44/2:

Բանկի աշխատակիցների թիվը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմում է 671:

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026		31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Գեվորկյան Մարետա Ռուդիկի	22,999,300	100.0	22,999,300	100.0
Այլ բաժնետերեր	700	0.0	700	0.0
	23,000,000	**100.0**	**20,000,000**	**100.0**

Բանկի վերջնական հսկող անձն է Մարետա Գևորկյանը, ով իրավունք ունի կառավարել Բանկի գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մի շարք մասնակցություններ ուներ Բանկի հետ առնչություն չունեցող այլ կազմակերպություններում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Բանկի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 377.16 դրամ և 382.36 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և համապատասխանաբար 432.19 դրամ և 449.01 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4(ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն – Ծանոթագրություն 29(գ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ վերականգնվող դրամական հոսքերը գնահատելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները և ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 29 (գ):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Բանկը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2026թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են

ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու համար: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՄ 9-ի և մասնակիորեն՝ ՖՀՄՄ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՄ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՄ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Բանկը դասակարգում է որպես այլ գործառնական ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

– ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

– ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

– արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
– ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
– արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և կորուստներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այդ ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այդ բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

– պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
– ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
– բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
– ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
– նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:
Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այսդիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

– պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
– լծակավորման հատկանիշը,
– վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
– պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
– հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական

արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այդ հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այդ վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այդպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում

Երբ ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում փոխվում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքը, Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումը պահանջում է պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխման ուղղակի հետևանք և
- պայմանագրային դրամական հոսքերը որոշելու նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին, այսինքն՝ անմիջապես նախքան փոփոխությունը գործող հիմքին:

Եթե ի լրումն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունների կատարվում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության այլ փոփոխություններ, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Այնուհետև Բանկը լրացուցիչ փոփոխությունների նկատմամբ կիրառում է վերափոխումների հաշվառմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները:

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի վերափոխումը չի դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում է գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխումը կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այդ մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում՝ վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Վերափոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 29 (գ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալություններում,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 29 (գ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,

- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 29 (գ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 29 (գ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալություններում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների

հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Դա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

– *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
– *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
– *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
– *իրական արժեքով*՝ *այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այդ ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այդ գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

– արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
– արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
– արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
– արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի

ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այդ ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- հաճախորդներին տրված վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերը: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

(ii) Վերագնահատում

Հողը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների փոփոխություններից: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(ի) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Արտոնյալ բաժնետոմսեր

Չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ նախատեսում են հայեցողական շահաբաժինների վճարում, չեն ներառում դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելու պարտականություններ և չեն պահանջում Բանկի փոփոխական թվով բաժնային գործիքների մարում: Այդ բաժնետոմսերի գծով հայեցողական շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Բանկի բաժնետերերի հաստատմամբ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(լ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

(խ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ և ներդրումային բանկային ծառայություններ (2025թ-ին՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ և ներդրումային բանկային ծառայություններ):

(ծ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և

ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

5 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Հաճախորդներին տրված վարկեր	9,809,639	7,249,453
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,980,990	1,590,517
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,110,461	873,124
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	473,430	394,955
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	572,581	788,828
Այլ	63,893	2,698
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**14,010,994**	**10,899,575**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	5,086,873	3,513,174
Ռեպո գործառնություններ	144,808	301,308
Ստորադաս փոխառություն	166,088	87,752
Այլ փոխառություններ	1,521,476	1,111,835
Թողարկված պարատոմսեր	465,856	536,668
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	100,907	102,632
Տոկոսային ծախս վարձակալության գծով	42,933	36,258
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**7,528,941**	**5,689,627**

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծախսեր	209,088	445,690
Վճարային քարտերով գործառնություններ	1,521,607	1,437,950
Դրամական փոխանցումներ	442,506	421,251
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	195,392	151,255
Այլ	51,095	36,555
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	18,872	44,530
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**2,438,560**	**2,537,231**
Վճարային քարտերով գործառնություններ	1,416,121	1,192,835
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծախսեր	166,448	912,157
Դրամական փոխանցումներ	101,793	73,957
Այլ	12,615	9,504
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**1,696,977**	**2,188,453**

7 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	1,121,771	4,547,767
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	815,371	1,408,499
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**1,937,142**	**5,956,266**

8 Այլ գործառնական եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ստացված տույժեր և տուգանքներ	90,852	136,560
Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	7,990	4,967
Դատական տուրքերի վերադարձ	3,805	4,750
Այլ	33,686	25,615
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**136,333**	**171,892**

9 Ուղղակի բանկային ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	174,373	191,375
Վարկերի վաղաժամկետ մարումից վերադարձման ծախսեր	1,122	1,548
Ինկասացիոն ծախսեր	16,724	22,322
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	18,393	13,806
Վարկային ռեգիստրի և այլ գործառնական համակարգերի օգտագործման ծախսեր	39,857	34,723
Քարտերի անվանագրման և առաքման ծախսեր	11,965	8,593
Վարկերի զիջման ծախսեր	13	57
Բրոքերային ծառայությունների գծով ծախսեր	8,088	8,279
Պահառուական ծառայությունների գծով ծախսեր	14,819	8,298
Այլ	124,399	89,378
Ընդամենը ուղղակի բանկային ծախսեր	**409,753**	**378,379**

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(55)	(1,771)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(1,010)	1,304
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(9,903)	(29,789)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(18,095)	9,003
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(4,101)	(44,784)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	225,782	46,830
Այլ ակտիվներ	24,830	37,852
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	2,406	5,362
Ընդամենը արժեզրման ծախս	**219,854**	**24,007**

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	2,754,602	2,786,384
Անձնակազմի ուսուցման ծախսեր	23,203	51,757
Անձնակազմի գծով այլ ծախսեր	86,872	53,621
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**2,864,677**	**2,891,762**

12 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Գովազդ և հասարակայնության հետ կապեր	836,210	336,882
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	39,513	29,924
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	147,372	81,071
Ակտիվների կարճաժամկետ վարձակալության ծախսեր	35,566	27,320
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	211,279	209,503
Անվտանգության գծով ծախսեր	55,569	36,859
Գրասենյակային ծախսեր	26,353	24,204
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	114,682	61,555
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	193,126	24,911
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	38,755	29,996
Ապահովագրության գծով ծախսեր	8,722	20,727
Վարկերի վերադարձման գծով ծախսեր	24,561	21,822
Այլ	23,557	21,563
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	**1,755,265**	**926,337**

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա համանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	799,861	979,876
Հետաձգված հարկ	(4,624)	96,643
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**795,237**	**1,076,519**

2026թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի հարկի դրույքաչափը կազմում է 18% (2025թ. համեմատ փոփոխություն տեղի չի ունեցել):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում մարտի 31-ին ավարտված ժամանակահատվածի համար

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**4,673,696**		**7,029,488**	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	841,265	18.0	1,265,308	18.0
(Չհարկվող եկամուտներ)/Չնվազեցվող ծախսեր	100,739	2.2	64,741	0.9
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	(146,767)	(3.1)	(253,530)	(3.6)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**795,237**	**17.0**	**1,076,519**	**15.3**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ և զուտ հետաձգված հարկային պարտավորություններ համապատասխանաբար 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2026թ. մարտի 31-ին և 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

Հազար ՀՀ դրամ				31 մարտի 2026		
	1 հունվարի 2026	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(28,440)	4,019	-	(24,421)	-	(24,421)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(873)	(2,425)	-	(3,298)	-	(3,298)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպությունների ն տրված վարկեր և փոխատվություններ	(10,144)	(56,343)	-	(66,487)	-	(66,487)

Հազար ՀՀ դրամ

	1 հունվարի 2026	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
				31 մարտի 2026		
Ներդրումային արժեթղթեր	(745,590)	(592)	170,883	(575,299)	-	(575,299)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(1,369,386)	(76,433)	-	(1,445,819)	-	(1,445,819)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(1,013,335)	10,199	-	(1,003,136)	-	(1,003,136)
Այլ ակտիվներ	(17,761)	8,588	-	(9,173)	-	(9,173)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(79,177)	(4,109)	-	(83,286)	-	(83,286)
Այլ փոխառություններ	(103,026)	(46,244)	-	(149,270)	-	(149,270)
Այլ պարտավորություններ	155,561	167,964	-	323,525	323,525	-
Հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**(3,212,171)**	**4,624**	**170,883**	**(3,036,664)**	**323,525**	**(3,360,189)**

Հազար ՀՀ դրամ

	1 հունվարի 2025	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
				31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(8,481)	(19,959)	-	(28,440)	-	(28,440)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,535	(2,408)	-	(873)	-	(873)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	(2,359)	(7,785)	-	(10,144)	-	(10,144)
Ներդրումային արժեթղթեր	(114,451)	(17,082)	(614,057)	(745,590)	-	(745,590)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(1,107,211)	(262,175)	-	(1,369,386)	-	(1,369,386)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(1,039,806)	26,471	-	(1,013,335)	-	(1,013,335)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)					
	1 հունվարի 2025	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Այլ ակտիվներ	(28,524)	10,763	-	(17,761)	-	(17,761)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(75,068)	(4,109)	-	(79,177)	-	(79,177)
Այլ փոխառություններ	(56,781)	(46,245)	-	(103,026)	-	(103,026)
Այլ պարտավորություններ	94,113	61,448	-	155,561	155,561	-
Հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**(2,337,034)**	**(261,081)**	**(614,057)**	**(3,212,171)**	**155,561**	**(3,367,732)**

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Բանկը կկարողանա օգտագործել դրանցից ստացված օգուտները:

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	14,061,184	44,714,957
Դրամական միջոցներ դրամարկղում	16,622,516	12,745,022
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
Aa1-ից Aa3 վարկանիշով	725,330	2,312,182
A1-ից A3 վարկանիշով	7,279,279	5,635,646
Baa1-ից Baa3 վարկանիշով	368,020	275,790
Ba1-ից Ba3 վարկանիշով	2,541,269	3,373,851
B1 -ից ցածր վարկանիշով	253,352	268,100
վարկանիշ չունեցող	2,424,979	3,964,960
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**13,592,229**	**15,830,529**
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	10,001,370	49,013,421
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**54,277,299**	**122,303,929**
Պարտքային կորստի գծով պահուստ	(251)	(306)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**54,277,048**	**122,303,623**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2026թ. մարտի 31-ի դրությամբ Բանկը չունի տեղաբաշխված միջոցներ որևէ բանկում, բացի ՀՀ ԿԲ-ից, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 16) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2026թ. մարտի 31-ին և 2025թ. մարտի 31-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	306	25,789
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(306)	(25,789)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	251	24,018
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ մարտի 31-ի դրությամբ	**251**	**24,018**

15 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Հակադարձ հետգնման պայմանագրեր բանկերի հետ	18,297,519	14,287,710
Հակադարձ հետգնման պայմանագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ	52,792,053	53,367,193
	71,089,572	**67,654,903**
Արժեզրկումից պահուստներ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների գծով	(1,465)	(2,475)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**71,088,107**	**67,652,428**

Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2026թ. մարտի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին 73,343,837 հազար դրամ իրական արժեքով պետական արժեթղթերը (2025թ. դեկտեմբերի 31-ին՝ 73,784,114 հազար դրամ):

2026թ. մարտի 31-ի դրությամբ Բանկը ունի մեկ պայմանագրային կողմ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2025թ. դեկտեմբերի 31-ին՝ մեկ պայմանագրային կողմ): Այդ մնացորդների համախառն հաշվեկշռային արժեքը 2026թ. մարտի 31-ի դրությամբ կազմում է 13,975,227 հազար ՀՀ դրամ(2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,011,247 հազար ՀՀ դրամ):

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները վերագրելի են խոշոր հայկական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2026թ. մարտի 31-ին և 2025թ. մարտի 31-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան-ջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան-ջան
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	2,475	15,072
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	(2,334)	(14,880)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	1,324	16,184
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ մարտի 31-ի դրությամբ	**1,465**	**16,376**

16 Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	947,500	3,117,500
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	39,693,940	39,005,997
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց այլ ֆինանսական կազմակերպություններում	173,920	175,070

Հազար ՀՀ դրամ	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Այլ բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և ավանդներ		
Բանկերին տրամադրված վարկեր	7,959,512	8,048,986
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ժամկետային և ցպահանջ ավանդներ	4,167,079	1,852,575
Այլ ստացվելիք գումարներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	2,261,471	975,685
Կանոնավոր գնման պայմանագրեր – սփոթ գործարքներ արտարժույթով	2,781,417	1,349,233
	57,984,839	**54,525,046**
Արժեզրկումից պահուստ	(48,806)	(58,709)
Ընդամենը բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	**57,936,033**	**54,466,337**

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները: Բանկի գնահատմամբ վարկանիշ չունեցող հայկական բանկերին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկը մոտավորապես համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության B1 վարկանիշին

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող պորդուկտների և ծառայությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման

կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026			31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7.3	4.6	-	7.4	4.6	17.9
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	7.8	-	-	7.8	16.5
Ներդրումային արժեթղթեր	10.4	7.8	-	10.5	7.8	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13.8	7.9	10.5	13.8	7.9	9.5
Տոկոսաբեր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2.5-6.0	0.75-3	0-1	2.5-6.0	0.75-3	0-1

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026			31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6.9	2.8	-	6.9	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	10.0	4.3	5.8	10.0	4.3	5.8
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.5	5.1	-	10.8	5.1	-
Վարձակալության գծով պարտավորություններ	10.3	-	-	10.3	-	-
Այլ փոխառություններ	8.4	8.4	-	8.4	8.4	-
Ստորադաս փոխառություններ	-	10.3	-	-	10.3	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի -ի դրությամբ դիրքերի հիման վրա:

	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
100 բկ զուգահեռ աճ	197,019	132,484
100 բկ զուգահեռ նվազում	197,019)	(132,484)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
100 բկ զուգահեռ աճ	(1,826,183)	(1,993,595)
100 բկ զուգահեռ նվազում	1,826,183	1, 993,595

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2026թ. մարտի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,534,784	24,311,558	7,430,706	54,277,048
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	67,810,149	3,277,958	-	71,088,107
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	1,037,471	61,008,441	(4,109,879)	57,936,033
Ներդրումային արժեթղթեր	95,714,366	8,314,823	-	104,029,189
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	219,617,754	166,948,093	-	386,565,847
Այլ ֆինանսական ակտիվներ	1,634,760	10,375,574	3,820	12,014,154
Ընդամենը	**408,349,284**	**274,236,447**	**3,324,647**	**685,910,378**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,870,259	12,385,348	179,495	14,435,102
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	26,033,289	2,161,113	-	28,194,402
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	236,420,501	179,572,640	11,155,241	427,148,382
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,057,072	18,170,748	-	24,227,820
Այլ փոխառություններ	41,143,385	35,417,895	-	76,561,280
Ստորադաս փոխառություններ	-	5,937,659	-	5,937,659

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,398,576	3,486,595	5,221,035	11,106,5306
Ընդամենը	**313,923,182**	**257,131,998**	**16,555,771**	**587,610,951**
Զուտ Դիրք	**94,426,102**	**17,104,449**	**(13,231,124)**	**98,299,427**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(15,000)	(13,476,546)	13,491,546	-
Զուտ Դիրք	**94,411,102**	**3,627,903**	**260,422**	**98,299,427**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,816,792	54,797,577	9,689,254	122,303,623
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	63,947,313	2,484,074	1,221,041	67,652,428
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	3,190,238	49,290,170	1,985,929	54,466,337
Ներդրումային արժեթղթեր	100,651,558	8,341,002	-	108,992,560
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	197,687,604	161,048,461	1,279,162	360,015,227
Այլ ֆինանսական ակտիվներ	1,981,180	573,978	6,225	2,561,383
Ընդամենը	**425,274,685**	**276,535,262**	**14,181,611**	**715,991,558**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,883,358	23,488,624	83,259	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,061,232	-	-	42,061,232
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	236,431,068	184,245,847	13,372,336	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,064,030	22,278,275	-	30,342,305
Այլ փոխառություններ	41,629,436	37,270,641	-	78,900,077
Ստորադաս փոխառություններ	-	5,946,650	-	5,946,650

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,318,125	995,438	69,160	4,382,723
Ընդամենը	**333,387,249**	**274,225,475**	**13,524,755**	**621,137,479**
Զուտ Դիրք	**91,887,436**	**2,309,787**	**656,856**	**94,854,079**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(35,000)	155,553	(120,553)	-
Զուտ Դիրք	**91,852,436**	**2,465,340**	**536,303**	**94,854,079**

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց հետ կապված Բանկը ենթարկվում է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը

հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Պարտազանցման հավանականության	*Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Պարտքի գումարը պարտազանցման պահին	*Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:
Կորուստը պարտազանցման դեպքում	*Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկն խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի

	վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:
Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Բանկը ներդրել է իր սեփական ներքին վարկանիշային մոդելն անհատական հիմունքով խոշոր վարկերի համար, որոնք կազմում են իրավաբանական անձանց տրված վարկերի ընդհանուր պորտֆելի մոտ 47%-ը: Բանկը վարկանիշները շնորհում է «Moody's» գործակալության վարկանիշայի սանդղակի համաձայն և կիրառում է համապատասխան վարկանիշին համապատասխանող «Moody's» գործակալության պարտազանցման հավանականության դրույքները

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը՝ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ փուլի ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի տեսանկյունից:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Պարտազանցման պահին պարտքի գումարը որոշելու համար հիմք են ընդունվում վարկերի առանձին մարման ժամանակացույցերը:

Կորուստը պարտազանցման դեպքում

Ֆիզիկական անձանց տրված՝ գրավով չապահովված 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները պարտազանցված բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է պարտազանցված վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ և այլն): 1-ին, 2-րդ և 3-րդ փուլեր դասված մնացած վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, այդ թվում՝ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը: 2026թ. մարտի 31-ի դրությամբ անհատական հիմունքով գնահատվող իրավաբանական անձանց տրված վարկերի համար պարտազանցման դեպքում առաջացող կորուստը կազմում էր 5%-53.7% (2025թ-ին՝ 5%-53.7%):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված այլ վարկերի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- անհատական հիմունքով վարկանշավորված վարկերի ներքին վարկանիշը նվազել է երկու կամ ավելի մակարդակով:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- ՀՆԱ-ի իրական աճը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետազոտությունների բաժնից, ՀՀ ֆինանսների նախարարությունից):

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով: Գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2026թ. մարտի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության / ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	71,088,107	-	71,088,107	(71,088,107)		-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**71,088,107**	**-**	**71,088,107**	**(71,088,107)**		**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(28,194,402)	-	(28,194,402)	28,194,402		-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(28,194,402)**	**-**	**(28,194,402)**	**28,194,402**		**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության / ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	67,652,428	-	67,652,428	(67,652,428)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**67,652,428**	**-**	**67,652,428**	**(67,652,428)**	**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(42,061,232)	-	(42,061,232)	42,061,232	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(42,061,232)**	**-**	**(42,061,232)**	**42,061,232**	**-**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

– դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
– ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
– պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
– պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
– բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
– իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
– օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ: Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեստեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ: Այնուամենայնիվ, Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	14,435,102	-	-	-	14,435,102	14,435,102
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,200,297	-	-	-	28,200,297	28,194,402
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	179,985,701	138,706,258	130,156,046	82,382	448,930,387	427,148,382
Թողարկված պարտքային արժեթղթեր	151,129	7,912,941	17,908,492	-	25,972,562	24,227,820
Այլ փոխառություններ	1,035,505	19,538,583	59,971,069	11,481,118	92,026,275	76,561,280
Ստորադաս փոխառություններ	15,939	561,089	2,313,361	6,282,162	9,172,551	5,937,659
Վարձակալության գծով պարտավորություններ	40,538	436,015	1,186,445	492,068	2,155,066	1,613,882
Այլ ֆինանսական պարտավորություններ	9,814,306	646,000			10,460,306	10,460,306
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**233,678,517**	**167,800,886**	**211,535,413**	**18,337,730**	**631,352,546**	**589,224,833**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**41,351,765**	**-**	**-**	**-**	**41,351,765**	**41,351,765**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	25,455,241	-	-	-	25,455,241	25,455,241
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,099,516	-	-	-	42,099,516	42,061,232
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	207,994,758	120,380,319	125,576,665	119,715	454,071,457	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	151,956	14,077,795	18,336,181	-	32,565,932	30,342,305
Այլ փոխառություններ	347,272	18,928,931	64,225,429	12,116,768	95,618,400	78,900,077

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025					
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ստորադաս փոխառություններ	17,992	565,667	2,339,498	6,438,467	9,361,624	5,946,650
Վարձակալության գծով պարտավորություններ	41,719	437,765	1,258,950	517,889	2,256,323	1,672,835
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,090,723	646,000			3,736,723	4,382,723
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**279,845,177**	**155,036,477**	**211,736,723**	**19,192,839**	**665,811,216**	**622,810,314**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**25,622,618**	-	-	-	**25,622,618**	**25,622,618**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,277,048	-	-	-	-	-	54,277,048
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	70,595,169	492,938	-	-	-	-	71,088,107
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,748,267	-	6,374,156	-	40,813,610	-	57,936,033
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	17,867,078	2,784,565	51,698,529	9,506,455	-	-	81,856,627
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	2,170,215	3,840,132	11,528,963	4,633,252	-	-	22,172,562
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	33,539,682	71,813,808	165,738,687	108,885,904	-	6,587,766	386,565,847
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	12,996,933	-	12,996,933
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,426,031	-	1,426,031
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	2,582,038	-	2,582,038
Այլ ակտիվներ	12,014,154	-	-	-	2,665,590	-	14,679,744
Ընդամենը ակտիվներ	**201,211,613**	**78,931,443**	**235,340,335**	**123,025,611**	**60,484,202**	**6,587,766**	**705,580,970**
Պարտավորություններ							
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	14,435,102	-	-	-	-	-	14,435,102
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	28,194,402	-	-	-	-	-	28,194,402

Հազար ՀՀ դրամ

	31 մարտի 2026						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	179,600,835	129,685,411	117,806,492	55,644	-	-	427,148,382
Թողարկված պարտքային արժեթղթեր	111,414	6,801,606	17,314,800	-	-	-	24,227,820
Այլ փոխառություններ	988,876	15,055,345	50,516,667	10,000,392	-	-	76,561,280
Ստորադաս փոխառություններ	15,939.00	96,651.00	-	5,825,069.00	-	-	5,937,659
Վարձակալության գծով պարտավորություններ	26,844	298,457	877,877	410,704	-	-	1,613,882
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	2,065,499	-	-	-	-	2,065,499
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	3,036,664	-	3,036,664
Այլ պարտավորություններ	12,485,072	646,000	-	-	940,807	-	14,071,879
Ընդամենը պարտավորություններ	**235,858,484**	**154,648,969**	**186,515,836**	**16,291,809**	**3,977,471**	**-**	**597,292,569**
Զուտ Դիրք	**(34,646,871)**	**(75,717,526)**	**48,824,499**	**106,733,802**	**56,506,731**	**6,587,766**	**108,288,401**

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	122,303,623	-	-	-	-	-	122,303,623
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	67,652,428	-	-	-	-	-	67,652,428
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	4,217,638	1,515,984	6,442,933	-	42,289,782	-	54,466,337
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	6,916	20,892,431	51,411,682	14,972,514	-	-	87,283,543
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները	-	5,854,876	11,341,646	4,512,495	-	-	2,170,9017
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	24,858,114	72,595,353	157,320,892	99,273,925	-	5,966,943	360,015,227
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	12,456,087	-	12,456,087
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,506,666	-	1,506,666
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	2,099,864	-	2,099,864
Այլ ակտիվներ	2,561,383	-	-	-	3,674,575	-	6,235,958
Ընդամենը ակտիվներ	**221,600,102**	**100,858,644**	**226,517,153**	**118,758,934**	**62,026,974**	**5,966,943**	**735,728,750**
Պարտավորություններ							
Բանկերի նկատմամբ պարտավորություններ	25,455,241	-	-	-	-	-	25,455,241

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2025						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	42,061,232	-	-	-	-	-	42,061,232
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	207,419,700	111,975,178	111,975,178	76,025	-	-	434,049,251
Թողարկված պարտքային արժեթղթեր	114,114	12,787,391	17,440,800	-	-	-	30,342,305
Այլ փոխառություններ	301,665	14,367,749	53,644,515	10,586,148	-	-	78,900,077
Ստորադաս փոխառություններ	17,240	39,449	-	5,889,961	-	-	5,946,650
Վարձակալության գծով պարտավորություններ	26,985	294,246	931,151	420,453	-	-	1,672,835
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	1,733,550	-	-	-	-	1,733,550
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	3,212,171	-	3,212,171
Այլ պարտավորություններ	4,606,159	646,000	-	-	1,896,780	-	7,148,939
Ընդամենը պարտավորություններ	**280,002,336**	**141,843,563**	**186,594,814**	**16,972,587**	**5,108,951**	**-**	**630,522,251**
Զուտ Դիրք	**(58,402,234)**	**(40,984,919)**	**39,922,339**	**101,786,347**	**56,918,023**	**5,966,943**	**105,206,499**

30 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետոմսերի ֆոնդային բորսայի արժեքն առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների և իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2025թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 11%: 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբեր ամսվա համար:

Հազար ՀՀ դրամ	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025
Ընդամենը ընդհանուր կապիտալ	102,557,298	102,867,314
Ռիսկով կշռված ակտիվներ	603,992,458	576,103,526
Կապիտալի համարժեքության նորմատիվ	16.98%	17.86%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով սահմանված չափանիշներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

31 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այդ պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

Հազար ՀՀ դրամ	31 մարտի 2026	31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)
Վարկային գծերի չօգտագործված մաս	35,143,888	22,400,110
Տրամադրված երաշխավորություններ	6,207,877	3,222,508
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**41,351,765**	**25,622,618**
Արժեզրկումից պահուստներ	(58,977)	(56,571)

2026թ. մարտի 31-ի դրությամբ 157,085 հազար ՀՀ դրամ գումարով ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասված են 3-րդ փուլ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 157,085 հազար ՀՀ դրամ), մնացած ֆինանսական փոխատվության հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ:

Չօգտագործված վարկերի գծով հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են ՖՀՄՄՍ 9-ի համաձայն և ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է երաշխավորությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2026թ. մարտի 31-ին և 2025թ. մարտի 31-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	621		55,950	56,571
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	2,406	-	-	2,406
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ մարտի 31-ի դրությամբ	**3,027**		**55,950**	**58,977**

Հազար ՀՀ դրամ	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	22,315	-	55,901	78,216
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում ներառյալ մարումները	5,362	-	-	5,362
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ մարտի 31-ի դրությամբ	**27,677**	**-**	**55,901**	**83,578**

32 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի հետևանքով առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

33 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը մարտի 31-ին ավարտված ժամանակահատվածների համար:

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան
Աշխատավարձ և պարգևատրումներ	245,773	218,240
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**245,773**	**218,240**

Այդ գումարները ներառում են առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումները, որոնք հաշվառված են համապատասխան ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան		2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	20,096,044	290,969	7,686,383	362,316
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	503	132,780	3,381,769	35,421

Հազար ՀՀ դրամ

	2026թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան		2025թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջան	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Տարվա ընթացքում մարված վարկեր	(175,036)	(73,836)	(100,929)	(58,990)
Վարկերի մնացորդը մարտի 31-ի դրությամբ, համախառն	**19,921,511**	**349,913**	**10,967,223**	**338,747**
Արժեզրկումից պահուստ	(10,926)	(4,195)	(81,016)	(996)
Վարկերի մնացորդը մարտի 31-ի դրությամբ	**19,910,585**	**345,718**	**10,886,207**	**337,751**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ				
Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	15,860,478	4,053,154	1,498,452	3,293,297
Տարվա ընթացքում ստացված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	8,055,173	1,225,634	10,965,028	2,139,874
Տարվա ընթացքում վճարված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	(8,214,971)	(1,626,809)	(9,568,261)	(1,315,772)
Ավանդների մնացորդը մարտի 31-ի դրությամբ	**15,700,680**	**3,651,979**	**2,895,219**	**4,117,399**
Ստորադաս փոխառություններ	3,824,972	-	3,970,922	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	386,801	7,121	103,858	8,437
Արժեզրկման (ծախս)/ հակադարձում	(1,855)	309	(50,326)	45
Տոկոսային ծախսեր ավանդների գծով	(231,840)	(58,057)	(17,700)	(34,156)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների գծով	(83,963)	-	(87,752)	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(27)	(265)	-	(482)

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը կազմում է 9%, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

34 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2026թ. մարտի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները:

Հազար ՀՀ դրամ **31 մարտի 2026**	**Հաշվեկշռային արժեք**	**Իրական արժեք**	**Տարբերություն**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	386,565,847	392,694,950	(6,129,103)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,172,562	23,503,838	(1,331,276)
Ընդամենը	**408,738,409**	**416,198,788**	**(7,460,379)**

Հազար ՀՀ դրամ **31 դեկտեմբերի 2025 (աուդիտ անցած)**	**Հաշվեկշռային արժեք**	**Իրական արժեք**	**Տարբերություն**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	360,015,227	366,566,030	(6,550,803)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	21,709,017	22,989,904	(1,280,887)
Ընդամենը	**381,724,244**	**389,555,934**	**(7,831,690)**

Ստորև բերվող աղյուսակներում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2026թ. մարտի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 մարտի 2026			
Հազար դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր	-	81,443,118	-	81,443,118
Բաժնային գործիքներ	-	-	413,509	413,509
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	392,694,950	392,694,950
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	23,503,838	-	23,503,838
Ընդամենը ակտիվներ	**-**	**104,946,956**	**393,108,459**	**498,055,415**

	31 դեկտեմբերի 2025(աուդիտ անցած)			
Հազար դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր	-	86,974,078	-	86,974,078
Բաժնային գործիքներ	-	-	309,465	309,465
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	366,566,030	366,566,030
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	22,989,904	-	22,989,904
Ընդամենը ակտիվներ	**-**	**109,963,982**	**366,875,495**	**476,839,477**

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական

արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոփերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար: 2-րդ մակարդակ դասված ֆինանսական գործիքների համար Բանկն օգտագործում է նմանատիպ գործիքների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք համարվում են գրեթե ոչ գործող:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 7.1%-13.5% զեղչման դրույքներ՝ արտարժույթով արտահայտված վարկերի համար և 8.5%-12.5% զեղչման դրույքներ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 8.2%-10.5% դրույքներ և արտարժույթով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 6.0%-7.1% դրույքներ:

«Էվոկաբանկ» ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 4
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 5-85

Վստահորեն
կերտելով ապագան

Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.
Kamar Business Center
Yerevan, 0010, Armenia
Tel.: +374 60 50 7777
ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էվոկաբանկ» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էվոկաբանկ» բաց բաժնետիրական ընկերության («Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք պահպանել ենք նաև էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Վստահորեն
կերտելով ապագան

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես են ստորև նշված հարցերը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում, այդ թվում այդ հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց	**Ինչպես է աուդիտի առանցքային հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում**
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստ	
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների էականության, այնպես էլ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով: Պորտֆելային հիմունքով ԱՊԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՊԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից:	Մենք ձեռք ենք բերել պատկերացում, իրականացրել ենք ընթացակարգեր և գնահատել ենք ԱՊԿ գծով հիմնական վերահսկողության միջոցների նախագծումը և գործարկման արդյունավետությունը և գնահատել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը: Պորտֆելային հիմունքով ԱՊԿ որոշելու նպատակով մենք վերլուծել ենք պարտքային ռիսկի մոդելներ և ենթադրություններ: Մենք՝ մասնագետի ներգրավմամբ, վերլուծել ենք, դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՊԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Մենք գնահատել ենք պարտքային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են՝ վարկերի ժամկետանց օրերը, շուկայական արժեքը և այս վարկերի գծով գրավադրված գրավի տեսակները, որոնք դիտարկվում են դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստների հաշվարկում: Մենք տրամադրվել են վարկային և գրավի պայմանագրեր, կադաստրային վկայականներ,

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է աուդիտի առանցքային հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում
Այդ գնահատումը էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից: Նշանակալի անհատականորեն գնահատված հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համար անհատական հիմունքով ԱՊԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի շուկայական արժեքի գնահատում: Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՊԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 18-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» և Ծանոթագրություն 29-ում՝ «Ռիսկերի կառավարում»:	որոնք հաստատում են գրավի սեփականության և գրանցման մանրամասները, ինչպես նաև անկախ գնահատողների հաշվետվությունները, որոնք հիմնավորում են գրավի արժեքը այն դեպքերում, երբ գրավի իրացումից ականկալվող դրամական հոսքերը ազդեցություն են ունենում ԱՊԿ-ների գնահատման վրա: Մեր գնահատման մասնագետների ներգրավմամբ մենք իրականացրել ենք գրավի գնահատում: Մենք գնահատել ենք ԱՊԿ վերաբերող բացահայտումների համարժեքությունը և նպատակահարմարությունը՝ ՖՀՄՍ պահանջներին համապատասխանության գծով:

Այլ հանգամանք

Բանկի 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. ապրիլի 15-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Բանկի 2025թ. Ներդրողների շնորհանդեսի մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի 2025թ. Ներդրողների շնորհանդեսի մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Բանկի 2025թ. Ներդրողների շնորհանդեսն ակնկալվում է, որ մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Վստահորեն
կերտելով ապագան

Ղեկավարության և Աուդիտի հանձնաժողովի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Աուդիտի հանձնաժողովին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտի հանձնաժողովին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանն ու անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Աուդիտի հանձնաժողովին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Վստահորեն
կերտելով ապագան

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր՝ Ելենա Ադամյան

2026թ. ապրիլի 16

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծան.	2025թ.	2024թ.
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	5	**47,546,574**	36,525,153
Այլ տոկոսային եկամուտ	5	**1,151,321**	671,209
Տոկոսային ծախս	5	**(25,823,764)**	(19,039,115)
Զուտ տոկոսային եկամուտ		**22,874,131**	18,157,247
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	6	**10,215,737**	12,252,254
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	6	**(7,659,357)**	(9,838,459)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**2,556,380**	2,413,795
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		**23,995**	37,842
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7	**20,481,013**	10,436,785
Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից		**14,275**	11,144
Այլ գործառնական եկամուտ	8	**468,109**	568,990
Բանկային ուղղակի ծախսեր	9	**(1,645,158)**	(1,485,576)
Գործառնական եկամուտ մինչև արժեզրկում և այլ վարչական ծախսեր		**44,772,745**	30,140,227
Ֆինանսական գործքիների արժեզրկումից զուտ (կորուստներ)/վերականգնում	10	**(278,955)**	467,264
Անձնակազմի գծով ծախսեր	11	**(11,973,506)**	(7,855,157)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	**(1,591,406)**	(1,243,123)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	**(5,573,534)**	(3,717,741)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**25,355,344**	17,791,470
Շահութահարկի գծով ծախս	13	**(3,961,461)**	(3,182,275)
Շահույթ տարվա համար		**21,393,883**	14,609,195
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվելու հետագայում որպես շահույթ կամ վնաս			
Հողի և շինությունների վերագնահատում		–	712,379
Բաժնային գործիքների իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ		–	49,483
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվելու հետագայում որպես շահույթ կամ վնաս		–	761,862
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություն՝			
– իրական արժեքի զուտ փոփոխություն		**2,767,515**	1,426,780
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		**(11,706)**	(9,138)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		**2,755,809**	1,417,642
Այլ համապարփակ եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի		**2,755,809**	2,179,504
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**24,149,692**	16,788,699

Ստորագրվել և հավերժացվել է Բանկի Ղեկավարության կողմից.

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՕԱՀ
REPUBLIC OF ARMENIA "EVOCABANK" OJSC
evocaBANK
00001182

Կարեն Եղիազարյան
Վարչության նախագահ

Էմմա Ջանինյան
Գլխավոր հաշվապահ,
Վարչության անդամ

2026թ. ապրիլի 16

Կից 1-ից 35 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Առ 31 դեկտեմբերի 2025թ.

հազ. դրամ	**Ծան.**	**2025թ.**	2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	**122,303,623**	83,157,459
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	**67,652,428**	45,723,768
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15		
–Բանկի կողմից պահվող		**42,957,180**	44,682,897
–Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		**44,326,363**	17,910,915
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	15		
–Բանկի կողմից պահվող		**21,709,017**	31,401,936
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15	**–**	106,807
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	16	**54,466,337**	33,996,173
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	**360,015,227**	276,906,446
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	**12,456,087**	10,457,343
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	20	**1,506,666**	1,128,778
Առգրավված ակտիվներ	18	**2,099,864**	1,360,456
Այլ ակտիվներ	21	**6,235,958**	5,393,393
Ընդամենը ակտիվներ		**735,728,750**	552,226,371
Պարտավորություններ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ	22	**25,455,241**	20,003,897
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	27	**42,061,232**	17,023,540
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	23	**434,049,251**	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	**30,342,305**	32,862,442
Այլ փոխառու միջոցներ	25	**78,900,077**	53,018,275
Ընթացիկ հարկային պարտավորություն		**1,733,550**	1,217,295
Հետաձգված հարկային պարտավորություն	13	**3,212,171**	2,337,034
Վարձակալության գծով պարտավորություն	20	**1,672,835**	1,246,879
Ստորադաս փոխառություններ	25	**5,946,650**	4,023,289
Այլ պարտավորություններ	26	**7,148,939**	6,786,913
Ընդամենը պարտավորություններ		**630,522,251**	468,023,564
Սեփական կապիտալ	28		
Բաժնետիրական կապիտալ		**23,000,000**	23,000,000
Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի աճ		**3,764,820**	3,875,488
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		**3,517,660**	761,851
Չբաշխված շահույթ		**74,924,019**	56,565,468
Ընդամենը սեփական կապիտալ		**105,206,499**	84,202,807
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**735,728,750**	552,226,371

Կից 1-ից 35 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	**Ծան.**	**2025թ.**	2024թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		**25,355,344**	17,791,470
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով՝			
Ամորտիզացիայի և մաշվածության մասհանումներ		**1,591,406**	1,243,123
Զուտ (օգուտ)/վնաս հիմնական միջոցների դուրսգրումից		**820**	9,578
Զուտ վնաս/ (օգուտ) այլ ակտիվների օտարումից		**–**	(16,616)
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների հակադարձում/(արժեզրկումից կորուստներ)		**278,955**	(467,264)
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախս		**–**	123,915
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից՝ ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	7	**(5,503,390)**	(1,218,697)
Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի նվազում		**–**	18,471
Ստացվելիք տոկոսներ		**(1,208,302)**	(803,859)
Վճարվելիք տոկոսներ		**2,375,429**	1,573,929
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**22,890,262**	18,254,050
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		**(21,977,414)**	(15,508,130)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		**(17,005,257)**	2,946,503
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		**(85,648,445)**	(67,839,784)
Առգրավված ակտիվներ		**106,793**	258,323
Այլ ակտիվներ		**(730,402)**	(1,022,938)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		**4,808,070**	12,750,222
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		**24,968,288**	11,030,733
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		**103,254,882**	52,797,746
Այլ պարտավորություններ		**(440,929)**	2,254,609
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		**30,225,848**	15,921,334
Վճարված շահութահարկ		**(3,184,125)**	(2,919,808)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**27,041,723**	13,001,526
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		**(26,943,016)**	(31,716,846)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		**6,939,282**	7,838,355
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		**(486,162)**	(15,570,729)
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից		**10,112,768**	32,831,906
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		**(3,269,892)**	(1,346,604)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(13,647,020)**	(7,963,918)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ	28	**(3,146,000)**	(2,046,000)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	24	**–**	17,632,230
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	24	**(2,000,000)**	(5,872,900)
Ստացված այլ փոխառու միջոցներ	25	**39,179,157**	23,739,722
Այլ փոխառու միջոցների մարում	25	**(13,010,507)**	(13,996,699)
Ստորադաս փոխառություններից մուտքեր	25	**2,084,452**	–
Վարձակալության գծով պարտավորություններ	20	**(270,533)**	(342,138)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**22,836,569**	19,114,215
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**36,231,272**	24,151,823
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		**2,889,409**	(1,921,322)
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը		**25,483**	(10,775)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		**83,157,459**	60,937,733
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	14	**122,303,623**	83,157,459

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	**Բաժնետի-րական կապիտալ**	**Ներդրու-մային արժեթղթեր ի իրական արժեքի փոփոխությ ան գծով պահուստ**	**Հողի և շենքերի վերագնա-հատումից արժեքի աճ**	**Չբաշխ-ված շահույթ**	**Ընդամենը սեփական կապիտալ**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	23,000,000	(705,274)	3,270,974	43,894,408	69,460,108
Տարվա շահույթ	–	–	–	14,609,195	14,609,195
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հողի և շենքերի վերագնահատում՝ առանց շահութահարկի	–	–	712,379	–	712,379
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
– իրական արժեքի զուտ փոփոխություն, ներառյալ ԱՊԿ, առանց շահութահարկի	–	1,476,263	–	–	1,476,263
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար, առանց շահութահարկի	–	(9,138)	–	–	(9,138)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	–	1,467,125	712,379	14,609,195	16,788,699
Հիմնական միջոցների մաշվածության կամ օտարման գծով պահուստի ճշգրտում	–	–	(107,865)	107,865	–
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ *(Ծան. 28)*	–	–	–	(2,046,000)	(2,046,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	–	–	–	(2,046,000)	(2,046,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**23,000,000**	**761,851**	**3,875,488**	**56,565,468**	**84,202,807**
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**23,000,000**	**761,851**	**3,875,488**	**56,565,468**	**84,202,807**
Տարվա շահույթ	**–**	**–**	**–**	**21,393,883**	**21,393,883**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
– իրական արժեքի զուտ փոփոխություն, ներառյալ ԱՊԿ, առանց շահութահարկի	**–**	**2,767,515**	**–**	**–**	**2,767,515**
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար, առանց շահութահարկի	**–**	**(11,706)**	**–**	**–**	**(11,706)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**–**	**2,755,809**	**–**	**21,393,883**	**24,149,692**
Հիմնական միջոցների մաշվածության կամ օտարման գծով պահուստի ճշգրտում	**–**	**–**	**(110,668)**	**110,668**	**–**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ *(Ծան. 28)*	**–**	**–**	**–**	**(3,146,000)**	**(3,146,000)**
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**–**	**–**	**–**	**(3,146,000)**	**(3,146,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**23,000,000**	**3,517,660**	**3,764,820**	**74,924,019**	**105,206,499**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ա) Կառուցվածքը և գործունեությունը

«Էվոկաբանկ» ԲԲԸ-ն (նախկին «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն) (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) 2025թ. հունիսի 29-ի որոշման համաձայն «Էվոկաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվել է և այժմ գործում է որպես «Էվոկաբանկ» բաց բաժնետիրական ընկերություն Բանկի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Բանկն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ԿԲ կողմից 1991թ. հոկտեմբերի 2-ին տրված թիվ 27 լիցենզիայի համաձայն:

Բանկը Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամի, Հայաստանի բանկերի միության, ԱրՔա և Master Card վճարային համակարգերի անդամ է:

Բանկի հիմնական գործունեությունն ավանդների ընդունումն է և վարկերի տրամադրումը, Հայաստանում և արտերկիր փոխանցումների, արտարժույթի փոխարկման գործարքների իրականացումն է և այլ բանկային ծառայությունների մատուցումն է իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկին իր գործունեությունն իրականացնում է գլխամասային գրասենյակի և 16 մասնաճյուղերի միջոցով, որոնք գտնվում են Երևանում, Գյումրիում, Աբովյանում և Վանաձորում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության փ. 44/2:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ 653 աշխատակից (2024թ-ին՝ 527):

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ.		2024թ.	
	հազ. դրամ	**%**	հազ. դրամ	%
Մարետա Գևորկյան	**22,999,300**	**100.0**	22,999,300	100.0
Այլ բաժնետերեր	**700**	**0.0**	700	0.0
	23,000,000	**100**	23,000,000	100

Բանկի վերջնական հսկող անձն է Մարետա Գևորկյանը, ով իրավունք ունի կառավարել Բանկի գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մի շարք մասնակցություններ ուներ Բանկի հետ առնչություն չունեցող այլ կազմակերպություններում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի համար կարևոր առևտրային գործընկերներ են:

Պատերազմի արդյունքում գրանցվեց ոչ ռեզիդենտների հոսք (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական մուտքերի ծավալների զգալի աճին և պլաստիկ քարտերով գործարքների ակտիվացմանը: Բանկի ղեկավարությունը հետևում է տնտեսական իրավիճակին ներկայիս միջավայրում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն ամբողջական ազդեցությունը, որը կարող է ունենալ Բանկի գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա կատարողականի վրա: Վերջնական ազդեցությունը կախված է տևողությունից և զարգացումներից և Հայաստանի տնտեսության վրա ազդեցությունից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

(բ) Հայաստանի գործարար միջավայրը (շարունակություն)

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և վերագնահատված արժեքով հաշվառվող հողի և շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 381.36 դրամ և 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 449.01 դրամ և 413.89 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – *Ծանոթագրություն 4 (ե) (i)*;
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն – Ծանոթագրություն 29 (գ):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (շարունակություն)

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ վերականգնվող դրամական հոսքերը գնահատելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները և ապագայամետ տեղեկատվության ներառումը – *Ծանոթագրություն 29 (գ):*

3 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵՋ

ա) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ): Բանկը վաղաժամ չի ընդունել այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք հրապարակվել, սակայն դեռևս ուժի մեջ չեն մտել:

Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ

2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար *Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ* ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշի սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Փոփոխությունները նաև պահանջում են տեղեկատվության բացահայտում, որը թույլ կտա ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է մեկ այլ արժույթով փոխանակման ոչ ենթակա արժույթը ազդում կամ ակնկալվում է, որ կազդի կազմակերպության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա:

Այս փոփոխությունը նշանակալի ազդեցություն չի ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, մինչև Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների թողարկումը, ներկայացվում են ստորև: Բանկը մտադիր է ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, կիրառելիության դեպքում, երբ ուժի մեջ մտնեն:

ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Ստանդարտը պահանջում է նաև նոր, ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է նաև ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների սահմանած «դերերի» վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

3 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵՋ (շարունակություն)

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում (շարունակություն)

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18 և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18 ստանդարտը կիրառվելու է հետահայաց:

Ներկայումս Բանկը աշխատում է բացահայտել այն բոլոր ազդեցությունները, որ փոփոխությունները կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության: Բացահայտումներ

2024 թվականի մայիսին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 19 ստանդարտը, որը հնարավորություն է տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՖՀՄՍ ստանդարտների ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Իրավասու լինելու համար, կազմակերպությունը պետք է հանդիսանա դուստր կազմակերպություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10 ստանդարտում, չի կարող ունենալ հրապարակային հաշվետվողականություն, և պետք է ունենա մայր կազմակերպություն (վերջնական կամ միջանկյալ), որը պատրաստում է հանրության օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: ՖՀՄՍ 19 ստանդարտը ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Քանի որ Բանկի պարտքային գործիքները հրապարակայնորեն շրջանառվում են, այն իրավասու չէ կիրառել ՖՀՄՍ 19 ստանդարտը:

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ. Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում

2024 թվականի մայիսին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտների փոփոխությունները - Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (այսուհետ՝ Փոփոխություններ): Փոփոխությունները ներառում են՝.

- Պարզաբանում, որ ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է «մարման ամսաթվին» և սահմանում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն (եթե բավարարված են որոշակի պայմաններ) էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունները մինչև «մարման ամսաթիվը» ապաճանաչելու համար;
- Լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է գնահատվեն պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման և նմանատիպ հատկանիշներով ֆինանսական ակտիվների համար;
- Պարզաբանումներ այն մասին, թե որոնք են «առանց ռեգրեսի հատկանիշները» և որոնք են պայմանագրորեն կապակցված գործիքների բնութագրերը;
- Պայմանական հատկանիշներով ֆինանսական գործիքների բացահայտման և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով դասակարգված բաժնային գործիքների բացահայտման լրացուցիչ պահանջների սահմանում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

3 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵՋ (շարունակություն)

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ. Փոփոխություններ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում (շարունակություն)

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և համապատասխան բացահայտումների համար: Բանկը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ – Բաժին 11

2024 թվականի հուլիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ինը նեղ շրջանակի փոփոխություններ որպես ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պարբերական թարմացման մաս: Փոփոխությունները ներառում են պարզաբանումներ, պարզեցումներ, ճշգրտումներ կամ փոփոխություններ ՖՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»,* ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ»* և ՖՀՄՍ 7 ստանդարտի կիրառման վերաբերյալ կից ուղեցույց, ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»*, ՖՀՄՍ 10 *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»,* ՀՀՄՍ 7 *«Դրամական հոսքերի մասին հաշվետվություն»* ստանդարտների համապատասխանությունը բարելավելու համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր – Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում

2024 թվականի դեկտեմբերին ՀՀՄՍԽ -ն հրապարակել է *ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտների փոփոխությունները – Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիային վերաբերող պայմանագրեր:* Փոփոխությունները կիրառվում են միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք վերաբերում են բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիային:

Փոփոխությունները՝

- Պարզաբանում են «սեփական օգտագործման» պահանջների կիրառումը բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Փոփոխում են դրամական հոսքերի հեջավորման փոխհարաբերություններում հեջավորված հոդվածների նախորոշման պահանջները բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Ավելացնում են բացահայտման նոր պահանջներ՝ հնարավորություն տալով ներդրողներին հասկանալ այսպիսի պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: Սեփական օգտագործման գծով բացառության վերաբերյալ փոփոխությունները կիրառվում են հետընթաց, իսկ հեջի հաշվառման վերաբերյալ փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց հեջավորման նոր փոխհարաբերությունների նկատմամբ՝ նախորոշված սկզբնական կիրառման ամսաթվից: Ինչպես նաև, ՖՀՄՍ 7-ի բացահայտման գծով փոփոխությունները պետք է կիրառվեն ՖՀՄՍ 9-ի գծով փոփոխությունների հետ մեկտեղ: Եթե կազմակերպությունը չի վերահաշվարկում համեմատական տեղեկատվությունը, այն չի կարող ներկայացնել համեմատական տեղեկատվության բացահայտումներ:

Բանկը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված՝ ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացառությամբ այն դեպքերի, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ;
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(գ) Տոկոսներ (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույք (շարունակություն)

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու համար: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է *Ծանոթագրություն 4 (և) (iv)* կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները;
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես *Ծանոթագրություն 4 (գ)*):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումային կառավարման վճարները, վաճառքից միջնորդավճարները, տեղաբաշխման վճարները և սինդիկացիոն վճարները, ճանաչվում է համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Բանկը դասակարգում է որպես այլ գործառնական ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- Ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- Ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

i. Դասակարգում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ;
- Ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և կորուստներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այդ ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այդ բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- Պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով;
- Ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը;
- Բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը;
- Ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա);
- Նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխհատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այդ դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- Պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները;
- Լծակավորման հատկանիշը;
- Վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները;
- Պայմանները, որոնք սահմանափակում են բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- Հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են (շարունակություն)

Բանկն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որոնց հետ կապված հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Վարկառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, քանի որ այդ հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկն այդ վարկերը դիտարկում է որպես ըստ իրենց էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես *Ծան. 4 (և) (iii)*):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

i. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այդպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

i. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում

Երբ ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում փոխվում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքը, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումը պահանջում է պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- Փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխման ուղղակի հետևանք և
- Պայմանագրային դրամական հոսքերը որոշելու նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին, այսինքն՝ անմիջապես նախքան փոփոխությունը գործող հիմքին:

Եթե ի լրումն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունների կատարվում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության այլ փոփոխություններ, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխումով պահանջվող փոփոխությունն արտացոլելու համար: Այնուհետև, Բանկը լրացուցիչ փոփոխությունների նկատմամբ կիրառում է պայմանների վերափոխման հաշվառմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- Վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ;
- Մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի վերափոխումը չի դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում է գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- Ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն;
- Գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն;
- Ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխումը կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այդ մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում՝ վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Վերափոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- Ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն;
- Գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն;
- Փոխարկման հնարավորության ներառում;
- Ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

i. Արժեզրկում

Տես նաև *Ծան. 29(գ)*:

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- Պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալություններում,
- Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- Փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- Պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- Այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես *Ծանոթագրություն 29 (գ)*):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

i. Արժեզրկում (շարունակություն)

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է);
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն;
- *չօգտագործված փոխառվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ;
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև *Ծան. 29(գ)*:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես *Ծանոթագրություն 4 (ե) (ii)*), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես *Ծան. 29(գ)*);
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

i. Արժեզրկում (շարունակություն)

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալություններում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- Փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները;
- Պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը;
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի;
- Հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- Արժեթղթի համար ակտիվ շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում;
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները;
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը;
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով;
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Դա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

i. Արժեզրկում (շարունակություն)

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից;
- *Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ;
- *Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այդ ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այդ գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- Արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
- Արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- Արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

i. Արժեզրկում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր (շարունակություն)

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելավճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այդ ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- Հաճախորդներին տրված վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- Զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

Հաճախորդներին տրված վարկերը ներառում են վարկեր ունիվերսալ վարկային կազմակերպություններին, որոնք ներկայացված չեն «վարկեր և փոխատվություններ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածում:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես *Ծանոթագրություն 4 (ե) (iv)*) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ (շարունակություն)

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես *Ծանոթագրություն 4 (և) (iv)*) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրի կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով կրեդիտորական պարտքերի կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

(ii) Վերագնահատում

Հողը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների փոփոխություններից: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է երբ հիմնական միջոցը պատրաստ է օգտագործման: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են:

-շենքեր	40 տարի
-համակարգիչներ և կապի սարքավորումներ	1-5 տարի
-փոխադրամիջոցներ	8 տարի
-այլ հիմնական միջոցներ	8 տարի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(հ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները, ներառյալ հարկերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

(ii) Արտոնյալ բաժնետոմսեր

Չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ նախատեսում են հայեցողական շահաբաժինների վճարում, չեն ներառում դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելու պարտականություններ և չեն պահանջում Բանկի փոփոխական թվով բաժնային գործիքների մարում: Այդ բաժնետոմսերի գծով հայեցողական շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Բանկի բաժնետերերի հաստատմամբ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(լ) Առգրավված գրավ

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

(խ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ, բանկային ներդրումային ծառայություններ (2024թ-ին՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ, իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ, ներդրումային բանկային ծառայություններ և թվային բանկային ծառայություններ):

(ծ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

4 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐ (շարունակություն)

(ծ) Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սպառողական վարկերն ապահովված են անշարժ գույքով, շարժական գույքով, դրամական միջոցներով և ոսկով:

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավների:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Անշարժ գույք	**254,538,650**	211,704,192
Շարժական գույքով և այլ հիմնական միջոցներ	**11,374,440**	7,271,752
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**23,798,810**	9,143,206
Երաշխավորություն	**29,223,460**	21,070,607
Թանկարժեք մետաղներ, ոսկի	**3,111,655**	1,702,816
Այլ	**1,783,174**	737,315
Գրավով չապահովված	**25,150,262**	21,074,626
	348,980,451	272,704,514

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի 3-րդ փուլ դասված՝ հաճախորդներին տրված վարկերի համար որպես ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ:

		Գրավի գնահատված շուկայական արժեք							
31 դեկտեմբերի 2025թ.	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Անշարժ գույք**	**Ավտոմեքե-նաներ**	**Սարքա-վորումներ**	**Այլ**	**Ավելցուկ**	**Ընդամենը գրավ**	**Գրավով չապահով-ված գումար**	**Համապա-տասխան ԱՊԿ**
Վարկեր իրավաբանա-կան անձանց	**8,043,964**	**7,313,652**	**108,600**	**2,660,071**	**–**	**(3,893,520)**	**6,188,803**	**1,855,161**	**2,097,344**
Հիփոթեքային վարկեր	**399,819**	**702,513**	**–**	**–**	**–**	**(305,492)**	**397,021**	**2,798**	**92,466**
Սպառողական վարկեր	**867,438**	**748,077**	**8,839**	**–**	**19,385**	**(425,707)**	**350,594**	**516,844**	**438,517**
Ընդամենը	**9,311,221**	**8,764,242**	**117,439**	**2,660,071**	**19,385**	**(4,624,719)**	**6,936,418**	**2,374,803**	**2,628,327**

		Գրավի գնահատված շուկայական արժեք						
31 դեկտեմբերի 2024թ.	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Անշարժ գույք**	**Ավտոմե-քենա-ներ**	**Սարքա-վորումներ**	**Ավելցուկ**	**Ընդամենը գրավ**	**Գրավով չապահովված գումար**	**Համապա-տասխան ԱՊԿ**
Վարկեր իրավաբանա-կան անձանց	8,364,099	9,085,848	262,991	94,738	(1,591,616)	7,851,961	512,138	2,116,970
Հիփոթեքային վարկեր	263,761	457,055	–	–	(193,294)	263,761	–	53,864
Սպառողական վարկեր	294,610	95,500	–	–	(46,253)	49,247	245,363	159,910
Ընդամենը	**8,922,470**	**9,638,403**	**262,991**	**94,738**	**(1,831,163)**	**8,164,969**	**757,501**	**2,330,744**

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ յուրաքանչյուր վարկի համար բացահայտված գրավի արժեքը սահմանափակվում է այն վարկի անվանական արժեքով, որի համար ծառայում է որպես ապահովություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

Առգրավված գրավ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 190,337 հազար դրամ (2024թ-ին՝ 75,223 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների առգրավման միջոցով:

2025 թվականին դատարանի որոշմամբ Բանկը պարտավորվեց վճարել լրացուցիչ 655,864 հազար դրամ՝ կապված առգրավված գույքի հետ, որը սկզբնապես ճանաչվել էր 726,220 հազար դրամ: Բանկի գնահատմամբ այս վճարումը հանդիսանում է ակտիվի սկզբնական ձեռքբերման հետ կապված փոփոխական հատուցում, քանի որ այն ուղղակիորեն առաջանում է բռնագանձման գործարքի վճարումից: ՖՀՄՍ հատուկ ուղեցույցի բացակայության դեպքում Բանկը կիրառել է դատողություն՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի՝ հաշվի առնելով ՖՀՄՍ ՄՀ օրակարգի որոշումը ակտիվների գնման փոփոխական և պայմանական հատուցման վերաբերյալ: Համապատասխանաբար, Բանկը կապիտալացրել է լրացուցիչ 655,864 հազար դրամը՝ որպես առգրավված ակտիվի հաշվեկշռային արժեքի մաս:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Անշարժ գույք	**2,099,864**	1,360,456
Ընդամենը առգրավված գրավ	**2,099,864**	1,360,456

Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

(ii) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին.

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Շինարարություն	**50,276,445**	39,222,923
Առևտուր	**38,343,750**	31,517,960
Արդյունաբերություն	**24,512,708**	22,895,919
Հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	**14,568,932**	7,956,399
Ֆինանսներ և ներդրումներ	**9,005,754**	7,390,036
Սննդի և խմիչքի արտադրություն	**7,909,822**	7,313,562
Տրանսպորտ և կապ	**4,580,784**	5,192,271
Գյուղատնտեսություն	**2,096,361**	1,983,617
Մշակույթ և ժամանց	**452,980**	509,438
Էներգետիկայի բնագավառ	**301,261**	6,282,803
Այլ	**5,813,213**	2,995,666
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	**191,118,441**	139,443,920
	348,980,451	272,704,514
Պարտքային կորստի պահուստ	**(4,019,096)**	(3,306,152)
	344,961,355	269,398,362

(iii) Պարտքային ռիսկին նշանակալի ենթարկվածություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունեցել է մեկ վարկառու կամ կապակցված վարկառուների խումբ (2024թ. դեկտեմբերի 31՝ չի ունեցել վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: Այս մնացորդները համախառն արժեքը կազմում է 20,096,226 հազար դրամ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

(ա) Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր (շարունակություն)

Առգրավված գրավ (շարունակություն)

(iv) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելը կազմող վարկերի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է *Ծան. 29 (դ)* կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված վարկերի մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

(բ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներում		
Մինչև մեկ տարի ժամկետով	**5,734,186**	3,249,546
Մեկից երկու տարի ժամկետով	**4,201,603**	3,103,890
Երկուսից երեք տարի ժամկետով	**2,427,975**	1,939,033
Երեքից չորս տարի ժամկետով	**1,073,227**	683,050
Չորսից հինգ տարի ժամկետով	**432,903**	204,428
	13,869,894	9,179,947
Չվաստակած ֆինանսական եկամուտ	**(2,414,176)**	(1,872,485)
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներում	**11,455,718**	7,307,462
Արժեզրկման գծով պահուստ	**(26,157)**	(16,294)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**11,429,561**	7,291,168

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	**16,294**	**–**	**–**	**16,294**
Տեղափոխում 2-րդ փուլ	**(16)**	**16**	**–**	**–**
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	**2,745**	**572**	**–**	**3,317**
Նոր ֆինանսական ակտիվներ	**6,546**	**–**	**–**	**6,546**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**25,569**	**588**	**–**	**26,157**

	2024թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	7,406	–	–	7,406
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	(2,003)	–	–	(2,003)
Նոր ֆինանսական ակտիվներ	10,891	–	–	10,891
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**16,294**	**–**	**–**	**16,294**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

(բ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

(i) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պարտքային որակի վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
–ոչ ժամկետանց	**11,402,804**	**3,694**	**–**	**11,406,498**
–մինչև 30 օր ժամկետանց	**49,220**	**–**		**49,220**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդամենը համախառն գումարներ	**11,452,024**	**3,694**	**–**	**11,455,718**
Պարտքային կորստի պահուստ	**(25,569)**	**(588)**	**–**	**(26,157)**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդամենը զուտ գումարներ	**11,426,455**	**3,106**	**–**	**11,429,561**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պարտքային որակի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
–ոչ ժամկետանց	7,307,462	–	–	7,307,462
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդամենը համախառն գումարներ	**7,307,462**	**–**	**–**	**7,307,462**
Պարտքային կորստի պահուստ	(16,294)	–	–	(16,294)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդամենը զուտ գումարներ	**7,291,168**	**–**	**–**	**7,291,168**

(ii) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների կենտրոնացում

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(գ) Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ.			
հազ. դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	**840**	**–**	**–**	**840**
Տեղափոխում 2-րդ փուլ	**–**	**–**	**–**	**–**
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	**(840)**	**–**	**–**	**(840)**
Նոր ֆինանսական ակտիվներ	**12,636**	**–**	**–**	**12,636**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**12,636**	**–**	**–**	**12,636**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

(գ) Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

	2024թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	–	–	–	–
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	–	–	–	–
Նոր ֆինանսական ակտիվներ	840	–	–	840
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**840**	**–**	**–**	**840**

(iii) Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների պարտքային որակի վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆայտորինգի գծով ստացվելիք գումարներ				
–ոչ ժամկետանց	**3,636,947**	**–**	**–**	**3,636,947**
Ֆակտորինգի գծով ստացվելիք ընդամենը համախառն գումարներ	**3,636,947**	**–**	**–**	**3,636,947**
Պարտքային կորստի պահուստ	**(12,636)**	**–**	**–**	**(12,636)**
Ֆակտորինգի գծով ստացվելիք ընդամենը զուտ գումարներ	**3,624,311**	**–**	**–**	**3,624,311**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների պարտքային որակի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ֆայտորինգի գծով ստացվելիք գումարներ				
–ոչ ժամկետանց	217,756	–	–	217,756
Ֆակտորինգի գծով ստացվելիք ընդամենը համախառն գումարներ	**217,756**	**–**	**–**	**217,756**
Պարտքային կորստի պահուստ	(840)	–	–	(840)
Ֆակտորինգի գծով ստացվելիք ընդամենը զուտ գումարներ	**216,916**	**–**	**–**	**216,916**

(iv) Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների կենտրոնացում

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

19 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

հազ. դրամ	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**7,079,095**	**339,772**	**1,604,055**	**226,049**	**3,266,681**	**–**	**1,455,099**	**13,970,751**
Ավելացումներ	**1,396,992**	**112,402**	**159,528**	**48,442**	**740,816**	**120,177**	**691,535**	**3,269,892**
Վերադասակարգումներ	**101,792**	**15**	**–**	**–**	**14,926**	**(116,733)**	**–**	**–**
Օտարումներ/ դուրսգրումներ	**–**	**–**	**(5,741)**	**(29,700)**	**(25,270)**	**–**	**(190,678)**	**(251,389)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**8,577,879**	**452,189**	**1,757,842**	**244,791**	**3,997,153**	**3,444**	**1,955,956**	**16,989,254**
Մաշվածություն և ամորտիզացիա								
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**–**	**104,516**	**929,774**	**100,989**	**1,718,824**	**–**	**659,305**	**3,513,408**
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	**235,775**	**38,679**	**236,843**	**27,961**	**318,626**	**–**	**412,444**	**1,270,328**
Օտարումներ/ դուրսգրումներ	**–**	**–**	**(5,741)**	**(28,881)**	**(25,270)**	**–**	**(190,677)**	**(250,569)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**235,775**	**143,195**	**1,160,876**	**100,069**	**2,012,180**	**–**	**881,072**	**4,533,167**
Հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**8,342,104**	**308,994**	**596,966**	**144,722**	**1,984,973**	**3,444**	**1,074,884**	**12,456,087**

հազ. դրամ	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	7,237,496	228,511	1,371,559	282,831	2,694,928	1,080,452	12,895,777
Ավելացումներ	–	113,462	245,722	130	612,643	374,647	1,346,604
Օտարումներ/ դուրսգրումներ	–	(2,201)	(13,226)	(56,912)	(40,890)	–	(113,229)
Վերագնահատում	847,327	–	–	–	–	–	847,327
Կուտակված մաշվածության բացառում	(1,005,728)	–	–	–	–	–	(1,005,728)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**7,079,095**	**339,772**	**1,604,055**	**226,049**	**3,266,681**	**1,455,099**	**13,970,751**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	773,990	87,114	739,444	120,608	1,513,901	398,215	3,633,272
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	231,738	17,527	203,554	32,596	243,010	261,090	989,515
Օտարումներ/ դուրսգրումներ	–	(125)	(13,224)	(52,215)	(38,087)	–	(103,651)
Կուտակված մաշվածության բացառում	(1,005,728)	–	–	–	–	–	(1,005,728)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**–**	**104,516**	**929,774**	**100,989**	**1,718,824**	**659,305**	**3,513,408**
Հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**7,079,095**	**235,256**	**674,281**	**125,060**	**1,547,857**	**795,794**	**10,457,343**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

19 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

(ա) Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումներ

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պարտավորությունների դիմաց գրավադրված հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, կամ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց նկատմամբ սեփականության իրավունքն որևէ այլ կերպ սահմանափակված է:

(բ) Պայմանագրային հանձնառություններ

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու պայմանագրային հանձնառություններ:

(գ) Ակտիվների վերագնահատում

Եթե հողը և շենքերը չվերագնահատվեին, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 3,771,121 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,373,151 հազար դրամ):

Հողի և շենքերի իրական արժեքը վերջին անգամ որոշվել է 2024թ դեկտեմբերի 31-ին՝ հիմք ընդունելով արտաքին, անկախ լիցենզավորված գնահատողի կողմից իրականացված գնահատումը, որն ունի համապատասխան մասնագիտական որակավորում և գնահատվող գույքի դասի գնահատման փորձ վերջին ժամանակներում: Իրական արժեքը որոշվել է սկզբնական արժեքի և շուկայի մոտեցումների համակցմամբ: Շուկայի մոտեցումը հիմնված է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով նմանատիպ գույքի համար հայտարարված գների վրա՝ կիրառելով 0.98-ից 1.4 տիրույթում ընկած գործակիցներ մուտքային գներն օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տարբերությունների (առկայության դեպքում) մասով ճշգրտելու համար: Սկզբնական արժեքի մոտեցմամբ հաշվարկվել են նմանատիպ շենքի կառուցման համար անհրաժեշտ ներդրումները՝ հանած կուտակված ֆիզիկական մաշվածությունը: Ֆունկցիոնալ և տնտեսական մաշվածությունը գնահատվել է զրո՝ հաշվի առնելով շենքերի գտնվելու վայրը և տարիքը:

Բանկը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի իրականացրել հողի և շենքերի վերագնահատում: Բանկի կողմից ներքին և արտաքին ցուցանիշների, այդ թվում՝ համեմատելի գույքի շուկայական պայմանների և դիտարկելի գործարքների գնահատման հիման վրա, հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների միջև էական տարբերություններ չեն հայտնաբերվել: Հետևաբար, վերագնահատում չի իրականացվել:

Հողի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ՝ կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով:

20 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները և այլ տարածքներ: Մասնաճյուղերի գրասենյակների տարածքների և այլ տարածքների վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5-ից 12 տարի:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Մնացորդը առ 1 հունվարի	**1,128,778**	1,055,100
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	**608,247**	305,345
Վարձակալության պայմանագրի լուծում	**(15,966)**	(55,707)
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	**(321,078)**	(253,611)
Վարձակալության պայմանագրի փոփոխություններ	**106,685**	77,651
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,506,666**	1,128,778

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

20 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	**321,078**	253,611
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	**149,303**	123,915
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով ծախսեր *(Ծան. 12)*	**122,977**	96,161

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	**542,813**	438,299

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Մնացորդը առ 1 հունվարի	**1,246,879**	1,150,077
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մարումներ	**(270,533)**	(342,138)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(270,533)**	(342,138)
Այլ փոփոխություններ		
Վարձակալության գծով պարտավորությունների ավելացումներ	**608,247**	305,345
Պայմանագրի լուծում	**(18,443)**	(67,971)
Պայմանագրի փոփոխություն	**106,685**	77,651
Տոկոսային ծախս	**149,303**	123,915
Վճարված տոկոսներ	**(149,303)**	–
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,672,835**	1,246,879

21 ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ստացվելիք գումարներ և այլ մուտքեր	**1,456,718**	1,719,319
Մուտքեր կանխիկի փոխանցումից	**1,106,298**	1,693,809
Պարտքային կորստի պահուստ	**(1,633)**	(3,372)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	**2,561,383**	3,409,756
Կանխավճարներ մատակարարներին	**3,173,612**	1,224,488
Նյութեր	**136,562**	128,009
Հարկային վճարումների գծով կանխավճարներ	**2,937**	2,887
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	**340,739**	303,932
Այլ	**20,725**	324,321
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**3,674,575**	1,983,637
Ընդամենը այլ ակտիվներ	**6,235,958**	5,393,393

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

21 ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,563,016 հազար դրամ գումարով այլ ֆինանսական ակտիվները դասվել են 1-ին փուլ և ժամկետանց չեն (2024թ-ին՝ 3,413,128 հազար դրամ գումարով այլ ֆինանսական ակտիվներն ամբողջությամբ դասվել էին 1-ին փուլ և ժամկետանց չէին):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	**3,372**	**–**	**–**	**3,372**
Կորստի պահուստի զուտ վերաչափում	**(3,372)**	**–**	**–**	**(3,372)**
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**41,376**	**–**	**–**	**41,376**
Դուրսգրումներ	**(39,743)**	**–**	**–**	**(39,743)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,633**	**–**	**–**	**1,633**

	2024թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	3,738	–	–	3,738
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(32,474)	–	–	(32,474)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	3,372	–	–	3,372
Վերականգնումներ	28,736	–	–	28,736
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,372**	**–**	**–**	**3,372**

22 ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ և ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ժամկետային ավանդներ բանկերից	**1,240,442**	–
Լորո հաշիվներ	**24,207,268**	20,003,354
Բանկերին վճարվելիք այլ գումարներ	**7,531**	543
	25,455,241	20,003,897

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունեցել է մեկ պայմանագրի կողմ հանդիսացող բանկ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալ 10%-ը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի բանկեր չկային): Այդ մնացորդների համախառն արժեքը կազմել է 10,901,577 հազար դրամ:

23 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ և ԱՎԱՆԴՆԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
–Ֆիզիկական անձիք	**66,631,759**	58,984,338
–Իրավաբանական անձիք	**118,398,512**	97,035,043
Ժամկետային ավանդներ		
–Ֆիզիկական անձիք	**185,221,182**	132,427,609
–Իրավաբանական անձիք	**63,797,798**	41,057,010
	434,049,251	329,504,000

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

23 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ և ԱՎԱՆԴՆԵՐ (շարունակություն)

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ներառում են 24,282,767 հազար դրամի չափով ավանդներ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,722,596 հազար դրամ), որոնք ծառայում են որպես ապահովություն հաճախորդներին տրված վարկերի, տրված երաշխավորությունների և պայմանական պարտավորությունների հետ կապված այլ գործարքների համար: Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս պայմանագրի կողմ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու հաճախորդ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 60,051,115 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 21,498,079 հազար դրամ):

24 ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
ՀՀ թողարկված պարտատոմսեր ԱՄՆ դոլարով	**19,133,238**	19,896,047
ՀՀ թողարկված պարտատոմսեր ՀՀ դրամով	**8,064,030**	10,067,207
ՀՀ թողարկված պարտատոմսեր եվրոյով	**3,145,037**	2,899,188
	30,342,305	32,862,442

2023թ. մարտի 27-ին Բանկը թողարկել է 2 միլիարդ դրամ, 10 միլիոն ԱՄՆ դոլար և 7 միլիոն եվրո ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է 11%, 5.25% և 4%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 30 և 39 ամիս:

2023թ. սեպտեմբերի 25-ին Բանկը թողարկել է 2 միլիարդ դրամ և 10 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է 11% և 5%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 30 ամիս է:

2023թ. հուլիսի 25-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է 10.25% և 5.25%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 36 ամիս է:

2024թ. սեպտեմբերի 30-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է 10% և 5%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 36 ամիս է:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

24. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ (շարունակություն)

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Մնացորդը առ 1 հունվարի	**32,862,442**	21,296,245
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	**–**	17,632,230
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	**(2,000,000)**	(5,872,900)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(2,000,000)**	11,759,330
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(516,808)**	(291,542)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	**2,103,053**	1,671,911
Վճարված տոկոսներ	**(2,106,382)**	(1,573,502)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**30,342,305**	32,862,442

25 ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ և ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Վարկեր վարկային կազմակերպություններից	**23,341,162**	22,134,434
Փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	**4,350,040**	3,850,872
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	**51,208,875**	27,032,969
	78,900,077	53,018,275

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին: Վարկերի մշտադիտարկումն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից: Այդ վարկերը դիտարկվում են որպես շուկայի առանձին սեգմենտի վարկեր:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի կազմում ներառված են 23,341,162 հազար դրամ գումարով վարկերը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,134,434 հազար դրամ), որոնք ըստ պայմանավորվածության Բանկի կողմից տրամադրվելու են որպես հիփոթեքային վարկեր համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին: Տնտեսության որոշակի ճյուղերում գործող փոքր և միջին չափի ձեռնարկություններին աջակցելու և հիփոթեքային շուկան զարգացնելու նպատակով տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող այս տեսակի ֆինանսավորման համար փաստացի շուկա չի գործում: Այդ վարկերի համար գործում է ՀՀ ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը և դրանք իրենցից ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ:

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու պայմանագրի կողմ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու պայմանագրի կողմ), որոնցից ստացված փոխառությունների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ փոխառությունները կազմում են 28,816,809 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,134,434 հազար դրամ):

(բ) Ստորադաս փոխառություն

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ստորադաս փոխառություն ֆիզիկական անձանցից	**3,869,638**	4,023,289
Ստորադաս փոխառություն միջազգային ֆինանսական կազմակերպություններից	**2,077,012**	–
	5,946,650	4,023,289

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

25. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ և ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

(բ) Ստորադաս փոխառություն (շարունակություն)

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության պայմանագիր, որը Բանկի անվճարունակության կլինի երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների, այդ թվում՝ ավանդների և այլ պարտքային գործիքների գծով պարտավորությունների նկատմամբ:

2016թ. ընթացքում Բանկը ստացել է 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն՝ 2031թ-ին մարման ժամկետով:

2025թ. ընթացքում Բանկը ստացել է 5,500 հազար ԱՄՆ դոլարի չափով ստարադաս փոխառություն՝ 2031թ-ին մարման ժամկետով:

(գ) Սահմանափակումներ (կովենանտներ)

Բանկը պարտավոր է համապատասխանել փոխառության պայմանագրերով նախատեսված որոշակի սահմանափակումների:

Այս սահմանափակումները դասակարգվում են մի քանի կատեգորիաների, ներառյալ կապիտալի համարժեքությունը և լծակները, համակենտրոնացումը և ռիսկի սահմանները, վարկային պորտֆելի որակը, շուկայական ռիսկը, տոկոսադրույքների ռիսկը, իրացվելիության ռիսկը և շահութաբերությունը:

Բոլոր սահմանափակումները ստուգվում են եռամսյակային կտրվածքով՝ կառավարչական հաշվառման տվյալների հիման վրա և տարեկան կտրվածքով՝ ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը համապատասխանում է բոլոր սահմանափակումների գծով պահանջներին և հաշվետու ամսաթվին հաջորդող տասներկու ամիսների ընթացքում դժվարություններ չի ունենա այդ պահանջները բավարարելու համար:

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Այլ փոխառու միջոցներ	Ստորադաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**53,018,275**	**4,023,289**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	**39,179,157**	**2,084,452**
Մարումներ	**(13,010,507)**	**–**
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**26,168,650**	**2,084,452**
Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(1,023,982)**	**(263,851)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	**5,055,985**	**442,677**
Վճարված տոկոսներ	**(4,318,851)**	**(339,917)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**78,900,077**	**5,946,650**

հազ. դրամ	Այլ փոխառու միջոցներ	Ստորադաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	43,353,427	4,107,166
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	23,739,722	–
Մարումներ	(13,996,699)	–
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	9,743,023	–
Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(302,463)	(83,712)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	3,430,743	354,412
Վճարված տոկոսներ	(3,206,455)	(354,577)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**53,018,275**	**4,023,289**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

26 ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Վճարվելիք գումարներ	**3,736,723**	4,011,089
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվելիք շահաբաժիններ	**646,000**	646,000
Ակնկալվող կորուստների պահուստ ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի գծով	**56,571**	78,216
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**4,439,294**	4,735,305
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	**1,757,082**	1,336,232
Անձնակազմին վճարվելիք գումարներ	**869,436**	640,516
Ակտիվներին վերաբերող շնորհներ	**33,240**	35,340
Այլ	**49,887**	39,520
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**2,709,645**	2,051,608
Ընդամենը այլ պարտավորություններ	**7,148,939**	6,786,913

27 ՀԵՏԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

հազ. դրամ	**2025թ. հազ. դրամ**	2024թ. հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ին վճարվելիք գումարներ	**42,061,232**	17,023,540
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**42,061,232**	17,023,540

ՀՀ ԿԲ հետ հետգնման պայմանագերով գրավադրված արժեթղթերը ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, գրավադրված արժեթղթերի ընդհանուր համախառն արժեքը կազմել է 44,326,363 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31՝ 17,910,915 հազար դրամ) *(Ծան. 15)*:

28 ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

(ա) Թողարկված կապիտալ

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 23,000,000 հազար դրամ: Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը բաղկացած է 172,500 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով և 57,500 չմարվող արտոնյալ բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով:

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ տարեկան շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 10-12%-ի չափով Բանկի հայեցողությամբ և չունեն քվեարկելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը: Այդ գումարը նվազեցվում է կորստի պահուստի գումարի չափով: Պարտքային գործիք հանդիսացող ակտիվի ապաճանաչումից հետո պահուստի համապատասխան մասը վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

28. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՀՈՒՍՏՆԵՐ (շարունակություն)

(բ) Պահուստների բնույթը և նպատակը (շարունակություն)

Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի աճ

Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի աճը ներառում է հողի և շենքերի արժեքի կուտակային դրական փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը: Մաշվածությունը հաշվառվում է չբաշխված շահույթի միջոցով:

(գ) Ճահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

Օրենսդրության պահանջների համաձայն՝ Բանկը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթի հաշվին՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արտոնյալ շահաբաժինների գումարը կազմել է 646,000 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 646,000 հազար դրամ): 2025թ-ին մեկ արտոնյալ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմել է 11,235 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11,325 դրամ):

2025թ-ին Բանկի կողմից սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 2,500,000 հազար դրամ (2024թ-ին՝ 1,400,000 հազար դրամ): 2025թ-ին մեկ սովորական բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմել է 14,493 դրամ (2024թ-ին՝ 8,116 դրամ):

29 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող պորդուկտների և ծառայությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր (շարունակություն)

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որի նախագահն է գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, եվրո	Այլ արտար-ժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, եվրո	Այլ արտար-ժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Ներդրումային արժեթղթեր	**10.5**	**7.8**	**–**	10.7	8.0	–
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	**–**	**7.8**	**16.5**	–	8.1	19.8
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**7.4**	**4.6**	**17.9**	8.0	4.6	–
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**13.8**	**7.9**	**9.5**	13.7	7.9	9.5
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	**2.5–6**	**0.75–3**	**0–1**	2.5–6	0.75–3	0–1
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**6. 9**	**–**	**–**	7.5	–	–
Թողարկված պարտքային արժեթղթեր	**10.8**	**5.1**	**–**	10.9	5.1	–
Հաճախորդների ժամկետային ավանդներ	**10.0**	**4.3**	**5.8**	10.0	4.4	5.4
Ստորադաս փոխառություններ	**–**	**10.3**	**–**	–	9.3	–
Այլ փոխառու միջոցներ	**8.4**	**8.4**	**–**	8.0	9.5	–
Վարձակալության գծով պարտավորություններ	**10. 3**	**–**	**–**	10.3	–	–

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի հիման վրա:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
100 բկ զուգահեռ աճ	**132,484**	239,871
100 բկ զուգահեռ նվազում	**(132,484)**	(239,871)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(բ) Ճուկայական ռիսկ (շարունակություն)

(i) Տոկոսադրույքային ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն (շարունակություն)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2025թ.	2024թ.
հազ. դրամ	**Սեփական կապիտալ**	Սեփական կապիտալ
100 բկ զուգահեռ աճ	**(1,993,595)**	(1,482,102)
100 բկ զուգահեռ նվազում	**1,993,595**	1,482,102

Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Այլ արտարժույթ ***	**Ընդամենը**
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**57,816,792**	**47,725,697**	**6,677,069**	**10,084,065**	**122,303,623**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**63,947,313**	**2,484,074**	**–**	**1,221,041**	**67,652,428**
Ներդրումային արժեթղթեր	**100,651,558**	**8,341,002**	**–**	**–**	**108,992,560**
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	**3,190,238**	**41,801,830**	**7,488,330**	**1,985,939**	**54,466,337**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**197,687,604**	**120,698,097**	**40,350,364**	**1,279,162**	**360,015,227**
Այլ ֆինանսական ակտիվներ	**1,981,180**	**457,869**	**116,109**	**6,225**	**2,561,383**
Ընդամենը ակտիվներ	**425,274,685**	**221,508,569**	**54,631,872**	**14,576,432**	**715,991,558**
Պարտավորություններ					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	**1,883,358**	**9,706,546**	**13,782,078**	**83,259**	**25,455,241**
Հետգնման պայմանագրերով վճարվելիք գումարներ	**42,061,232**	**–**	**–**	**–**	**42,061,232**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**236,431,068**	**147,013,102**	**36,686,515**	**13,918,566**	**434,049,251**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**8,064,030**	**19,133,238**	**3,145,037**	**–**	**30,342,305**
Ստորադաս փոխառություններ	**–**	**5,946,650**	**–**	**–**	**5,946,650**
Այլ փոխառու միջոցներ	**41,629,436**	**36,148,400**	**1,122,241**	**–**	**78,900,077**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**3,318,125**	**606,515**	**388,288**	**69,795**	**4,382,723**
Ընդամենը պարտավորություններ	**333,387,249**	**218,554,451**	**55,124,159**	**14,071,620**	**621,137,479**
Զուտ դիրքը	**91,887,436**	**2,954,118**	**(492,287)**	**504,812**	**94,854,079**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**(35,000)**	**155,553**	**(120,553)**	**–**	**–**
Զուտ դիրքը	**91,852,436**	**3,109,671**	**(612,840)**	**504,812**	**94,854,079**

* *Այլ արտարժույթը հիմնականում ներառում է ռուսական ռուբլին:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

(i) Տոկոսադրույքային ռիսկ (շարունակություն)

Արժութային ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ *	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,424,701	37,622,375	6,396,904	6,713,479	83,157,459
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	42,975,822	2,747,946	–	–	45,723,768
Ներդրումային արժեթղթեր	85,261,940	8,840,615	–	–	94,102,555
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	2,572,740	26,090,541	4,018,475	1,314,417	33,996,173
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	138,409,047	106,676,683	30,314,874	1,505,842	276,906,446
Այլ ֆինանսական ակտիվներ	2,189,858	971,097	43,842	204,959	3,409,756
Ընդամենը ակտիվներ	**303,834,108**	**182,949,257**	**40,774,095**	**9,738,697**	**537,296,157**
Պարտավորություններ					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	177,492	11,260,617	8,305,000	260,788	20,003,897
Հետգնման պայմանագրերով վճարվելիք գումարներ	17,023,540	–	–	–	17,023,540
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	164,861,190	127,586,692	28,874,890	8,181,228	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,067,207	19,896,047	2,899,188	–	32,862,442
Ստորադաս փոխառություններ	–	4,023,289	–	–	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	34,842,557	18,175,718	–	–	53,018,275
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,098,454	1,302,641	178,506	77,488	4,657,089
Ընդամենը պարտավորություններ	**230,070,440**	**182,245,004**	**40,257,584**	**8,519,504**	**461,092,532**
Զուտ դիրքը	**73,763668**	**704,253**	**516,511**	**1,219,193**	**76,203,625**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**(54,420)**	**1,189,680**	**–**	**(1,135,260)**	**–**
Զուտ դիրքը	**73,709,248**	**1,893,933**	**516,511**	**83,933**	**76,203,625**

* *Այլ արտարժույթը հիմնականում ներառում է ռուսական ռուբլին:*

Ստորև աղյուսակում ներկայացված 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

(i) Տոկոսադրույքային ռիսկ (շարունակություն)

Արժութային ռիսկ (շարունակություն)

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	**310,967**	189,393
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	**(61,284)**	51,651
ՀՀ դրամի նկատմամբ այլ արտարժույթների փոխարժեքի աճ 10%-ով	**50,481**	8,393

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- Վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը;
- Վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը;
- Պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը;
- Գրավի գնահատման մեթոդաբանությունը;
- Վարկերի փաստաթղթավորման պահանջները;
- Վարկերի և այլ գործիքների, որոնց հետ կապված բանկը ենթարկվում է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է *Ծանոթագրություն 18-ում:*

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է *Ծան. 31-ում:*

Արժեզրկման գնահատում

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Պարտազանցման հավանականություն	*Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանականության գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Պարտքի գումարը պարտազանցման պահին	*Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:
Կորուստը պարտազանցման դեպքում	*Կորուստը պարտազանցման դեպքում* կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ այդ թվում՝ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

Փուլ 1	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:
Ձեռք բերված կամ սկզբնա-վորված պարտ-քային առումով արժեզրկ-ված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտազանցման սահմանում (շարունակություն)

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Բանկը ներդրել է իր սեփական ներքին վարկանիշային մոդելն անհատական հիմունքով խոշոր վարկերի համար, որոնք կազմում են իրավաբանական անձանց տրված վարկերի ընդհանուր պորտֆելի մոտ 63%-ը: Բանկը վարկանիշները շնորհում է «Moody's» գործակալության վարկանիշայի սանդղակի համաձայն և կիրառում է համապատասխան վարկանիշին համապատասխանող «Moody's» գործակալության պարտազանցման հավանականության դրույքները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին և 2-րդ փուլ դասված իրավաբանական անձանց տրված վարկերի պարտքային որակի մասին, որոնց համար Բանկը որոշել է ներքին վարկանիշ 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ.		
հազ. դրամ	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Զուտ գումար
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
B1	**29,833,349**	**(135,040)**	**29,698,309**
B2	**75,674,114**	**(375,211)**	**75,298,903**
B3	**2,480,178**	**(73,890)**	**2,406,288**
Caa1 (Փուլ 2)	**958,079**	**(4,424)**	**953,655**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**108,945,720**	**(588,565)**	**108,357,155**

	2024թ.		
հազ. դրամ	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Զուտ գումար
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Ba2	5,798,826	(25,867)	5,772,959
B1	38,955,292	(169,111)	38,786,181
B2	34,706,544	(264,983)	34,441,561
B3	1,174,701	(7,218)	1,167,483
Caa1 (Փուլ 2)	1,431,907	(14,584)	1,417,323
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**82,067,270**	**(481,763)**	**81,585,507**

2025 և 2024թթ-ին վերոնշյալ հաճախորդների համար Բանկը կիրառել է վերը նշված վարկանիշներին համապատասխանող՝ «Moody's» գործակալության պարտազանցման դրույքներին համարժեք պարտազանցման հավանականության դրույքներ: Բանկի կողմից շնորհված ներքին վարկանիշները լիովին համապատասխանում են «Moody's» գործակալության արտաքին վարկանիշային սանդղակին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը: 1-ին փուլի վարկերի համար պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկն գնահատում է հնարավոր պարտազանցման իրադարձությունը 12 ամիսների ընթացքում 12-ամսյա ԱՊԿ հաշվարկելու համար: 2-րդ փուլի ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկվում է գործիքի ամբողջ ժամկետով իրադարձությունների համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին ստացվում է՝ հիմք ընդունելով վարկերի անհատական մարման ժամանակացույցերը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտքի գումարը պարտազանցման պահին (շարունակություն)

Կորուստը պարտազանցման դեպքում

Ֆիզիկական անձանց տրված՝ գրավով չապահովված 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները պարտազանցված բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է պարտազանցված վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ և այլն): 1-ին, 2-րդ և 3-րդ փուլեր դասված մնացած վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, այդ թվում՝ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտազանցման դեպքում առաջացող կորուստի միջակայքը անհատական հիմունքով հաշվարկված կորպորատիվ վարկերի համար եղել է 5%-53.7% (2024թ.՝ 5%-53.7%):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- Տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված այլ վարկերի ժամկետանց օրերի քանակը;
- Վարկառուի ֆինանսական դժվարությունները;
- Վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով;
- Անհատական հիմունքով վարկանշավորված վարկերի ներքին վարկանիշը նվազել է երկու կամ ավելի մակարդակով:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը;
- սպառողական գների ինդեքս;
- ներմուծման ծավալը;
- արտահանման ծավալը;
- շինարարության ծավալը;
- ՀՆԱ անվանական ծավալը;
- սպառողական վարկերի աճը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտքի գումարը պարտազանցման պահին (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- Հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- Հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով: Գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(գ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտքի գումարը պարտազանցման պահին (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ	Ստացված գրավ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**67,652,428**	**–**	**67,652,428**	**–**	**(67,652,428)**	**–**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**67,652,428**	**–**	**67,652,428**	**–**	**(67,652,428)**	**–**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**(42,061,232)**	**–**	**(42,061,232)**	**42,061,232**	**–**	**–**
Ընդամենը ֆինանսական պարտավորություն-ներ	**(42,061,232)**	**–**	**(42,061,232)**	**42,061,232**	**–**	**–**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ Ֆինանսական ակտիվների/ պարտավորություն-ների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ	Ստացված գրավ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	45,723,768	–	45,723,768	–	(45,723,768)	–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**45,723,768**	**–**	**45,723,768**	**–**	**(45,723,768)**	**–**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(17,023,540)	–	(17,023,540)	17,023,540	–	–
Ընդամենը ֆինանսական պարտավորություն-ներ	**(17,023,540)**	**–**	**(17,023,540)**	**17,023,540**	**–**	**–**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- Դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում;
- Ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում;
- Պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում;
- Պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում;
- Բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում;
- Իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում;
- Օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ: Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեստեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ: Այնուամենայնիվ, Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը արտահոսքի համախառն գումար	Հաշվեկշռայ ին արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	**25,455,241**	**–**	**–**	**–**	**25,455,241**	**25,455,241**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**42,099,516**	**–**	**–**	**–**	**42,099,516**	**42,061,232**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**207,994,758**	**120,380,319**	**125,576,665**	**119,715**	**454,071,457**	**434,049,251**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**151,956**	**14,077,795**	**18,336,181**	**–**	**32,565,932**	**30,342,305**
Ստորադաս փոխառություններ	**17,992**	**565,667**	**2,339,498**	**6,438,467**	**9,361,624**	**5,946,650**
Այլ փոխառու միջոցներ	**347,272**	**18,928,931**	**64,225,429**	**12,116,768**	**95,618,400**	**78,900,077**
Վարձակալության գծով պարտավորություններ	**41,719**	**437,765**	**1,258,950**	**517,889**	**2,256,323**	**1,672,835**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**3,736,723**	**646,000**	**–**	**–**	**4,382,723**	**4,382,723**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**279,845,177**	**155,036,477**	**211,736,723**	**19,192,839**	**665,811,216**	**622,810,314**
Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ	**25,622,618**	**–**	**–**	**–**	**25,622,618**	**25,622,618**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը արտահոսքի համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	20,003,897	–	–	–	20,003,897	20,003,897
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,033,658	–	–	–	17,033,658	17,023,540
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	169,435,192	104,667,798	66,211,446	88,847	340,403,283	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	154,947	3,969,627	33,121,961	–	37,246,535	32,862,442
Ստորադաս փոխառություններ	18,382	337,933	1,428,789	4,642,447	6,427,551	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	333,482	14,982,264	37,364,763	13,474,337	66,154,846	53,018,275
Վարձակալության գծով պարտավորություններ	32,357	321,137	1,013,296	254,683	1,621,473	1,246,879
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,972,689	684,400	–	–	4,657,089	4,657,089
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**210,984,604**	**124,963,159**	**139,140,255**	**18,460,314**	**493,548,332**	**462,339,411**
Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ	**30,232,497**	**–**	**–**	**–**	**30,232,497**	**30,232,497**

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ավանդատուի պահանջով՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը ներկայացված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	**15,510,861**	10,792,311
1-ից 3 ամիս ժամկետով	**21,443,369**	15,642,115
3-ից 6 ամիս ժամկետով	**22,808,867**	20,248,811
6-ից 12 ամիս ժամկետով	**44,004,029**	39,278,201
Ավելի քան 1 տարի ժամկետով	**81,454,056**	46,466,171
	185,221,182	132,427,609

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**122,303,623**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**122,303,623**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	**6,916**	**20,892,431**	**51,411,682**	**14,972,514**	**–**	**–**	**87,283,543**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**–**	**5,854,876**	**11,341,646**	**4,512,495**	**–**	**–**	**21,709,017**
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	**4,217,638**	**1,515,984**	**6,442,933**	**–**	**42,289,782**	**–**	**54,466,337**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**67,652,428**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**67,652,428**
Հաճախորդներին տրված վարկեր	**24,858,114**	**72,595,353**	**157,320,892**	**99,273,925**	**–**	**5,966,943**	**360,015,227**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	**–**	**–**	**–**	**–**	**12,456,087**	**–**	**12,456,087**
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	**–**	**–**	**–**	**–**	**1,506,666**	**–**	**1,506,666**
Առգրավված ակտիվներ	**–**	**–**	**–**	**–**	**2,099,864**	**–**	**2,099,864**
Այլ ակտիվներ	**2,561,383**	**–**	**–**	**–**	**3,674,575**	**–**	**6,235,958**
Ընդամենը ակտիվներ	**221,600,102**	**100,858,644**	**226,517,153**	**118,758,934**	**62,026,974**	**5,966,943**	**735,728,750**
Պարտավորություններ							
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**42,061,232**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**42,061,232**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	**25,455,241**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**25,455,241**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**207,419,700**	**111,975,178**	**114,578,348**	**76,025**	**–**	**–**	**434,049,251**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**114,114**	**12,787,391**	**17,440,800**	**–**	**–**	**–**	**30,342,305**
Ստորադաս փոխառություններ	**17,240**	**39,449**	**–**	**5,889,961**	**–**	**–**	**5,946,650**
Այլ փոխառու միջոցներ	**301,665**	**14,367,749**	**53,644,515**	**10,586,148**	**–**	**–**	**78,900,077**
Վարձակալության գծով պարտավորություններ	**26,985**	**294,246**	**931,151**	**420,453**	**–**	**–**	**1,672,835**
Ընթացիկ հարկային պարտավորություն	**–**	**1,733,550**	**–**	**–**	**–**	**–**	**1,733,550**
Հետաձգված հարկային պարտավորություն	**–**	**–**	**–**	**–**	**3,212,171**	**–**	**3,212,171**
Այլ պարտավորություններ	**4,606,159**	**646,000**	**–**	**–**	**1,896,780**	**–**	**7,148,939**
Ընդամենը պարտավորություններ	**280,002,336**	**141,843,563**	**186,594,814**	**16,972,587**	**5,108,951**	**–**	**630,522,251**
Զուտ դիրքը	**(58,402,234)**	**(40,984,919)**	**39,922,339**	**101,786,347**	**56,918,023**	**5,966,943**	**105,206,499**

* *Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է ֆինանսական արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերով, և այն փաստի վրա, որ ժամկետային ավանդների ժամկետը կերկարաձգվի մարման ժամկետից հետո:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

29. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	83,157,459	–	–	–	–	–	83,157,459
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,218	8,349,104	45,644,737	8,285,288	309,465	–	62,593,812
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,215,332	10,559,028	15,235,177	4,392,399	–	–	31,401,936
Ներդրումային արժեթղթեր նախորոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	–	–	–	–	106,807	–	106,807
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	1,792,757	2,094,034	4,678,012	–	25,431,370	–	33,996,173
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	45,723,768	–	–	–	–	–	45,723,768
Հաճախորդներին տրված վարկեր	7,297,769	59,699,223	121,928,053	84,646,216	–	3,335,185	276,906,446
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	10,457,343	–	10,457,343
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	–	–	–	–	1,128,778	–	1,128,778
Առգրավված ակտիվներ	–	–	–	–	1,360,456	–	1,360,456
Այլ ակտիվներ	3,409,756	–	–	–	1,983,637	–	5,393,393
Ընդամենը ակտիվներ	**142,602,059**	**80,701,389**	**187,485,979**	**97,323,903**	**40,777,856**	**3,335,185**	**552,226,371**
Պարտավորություններ							
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,023,540	–	–	–	–	–	17,023,540
Բանկերի ավանդներ և մնացորդներ	20,003,897	–	–	–	–	–	20,003,897
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	169,169,296	98,787,817	61,492,488	54,399	–	–	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	116,362	2,020,850	30,725,230	–	–	–	32,862,442
Ստորադաս փոխառություններ	17,991	39,893	–	3,965,405	–	–	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	288,388	11,801,995	29,272,258	11,655,634	–	–	53,018,275
Վարձակալության գծով պարտավորություններ	21,656	220,849	833,997	170,377	–	–	1,246,879
Ընթացիկ հարկային պարտավորություն	–	1,217,295	–	–	–	–	1,217,295
Հետաձգված հարկային պարտավորություն	–	–	–	–	2,337,034	–	2,337,034
Այլ պարտավորություններ	4,611,705	685,900	–	–	1,489,308	–	6,786,913
Ընդամենը պարտավորություններ	**211,252,835**	**114,774,599**	**122,323,973**	**15,845,815**	**3,826,342**	**–**	**468,023,564**
Զուտ դիրքը	**(68,650,776)**	**(34,073,210)**	**65,162,006**	**81,478,088**	**36,951,514**	**3,335,185**	**84,202,807**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

30 ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետոմսերի ֆոնդային բորսայի արժեքն առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների և իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2024թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 11%: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբեր ամսվա համար:

	2025թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2024թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Ընդամենը կապիտալ	**102,867,314**	80,078,261
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**576,103,526**	468,929,395
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**17.86%**	17.08%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով սահմանված չափանիշներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

31 ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այդ պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31 ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Պայմանագրային գումար		
Չօգտագործված վարկերի գծով հանձնառություններ	**22,400,110**	19,480,437
Երաշխավորություններ	**3,222,508**	10,752,060
	25,622,618	30,232,497
Արժեզրկման գծով պահուստ	**(56,517)**	(78,216)

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 157,085 հազար դրամ գումարով ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասված են 3-րդ փուլ (2024թ. դեկտեմբերի 31՝ 157,085 հազար դրամ դասված են 3-րդ փուլ)., մնացած ֆինանսական փոխատվության հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ:

Չօգտագործված վարկերի գծով հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն և ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հանձնառությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	**22,315**	**–**	**55,901**	**78,216**
Սկզբնավորված նոր հանձնառություններ	**–**	**–**	**–**	**–**
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	**(21,694)**	**–**	**49**	**(21,645)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**621**	**–**	**55,950**	**56,571**

	2024թ.			
հազ. դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	66,457	–	–	66,457
Տեղափոխում 3-րդ փուլ	(55,950)	–	55,950	–
Սկզբնավորված նոր հանձնառություններ	16,834	–	–	16,834
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	(5,026)	–	(49)	(5,075)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**22,315**	**–**	**55,901**	**78,216**

32 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի հետևանքով առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

32 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ (շարունակություն)

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

33 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

(ա) Գործարքներ առանցքային կառավարչական անձնակազմի հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	**4,556,467**	3,046,217
Ընդհամենը առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն	**4,556,467**	3,046,217

Այդ գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների գծով հատուցումները, որոնք ճանաչվել են համապատասխան ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Ստորև ներկայացված են առանցքային կառավարչական անձնակազմի հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**2025թ.**	**Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**	2024թ.	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**290,969**	**11.24%**	342,391	11.40%
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստներ	**(4,504)**	**–**	(1,035)	–
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**3,931,435**	**0.0% - 10.75%**	3,222,942	0.0% - 9.75%
Թողարկված պարտքային արժեթղթեր	**886,095**	**5%-10.65%**	1,078,750	4%-11%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

33 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ (շարունակություն)

(ա) Գործարքներ առանցքային կառավարչական անձնակազմի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են առանցքային կառավարչական անձնակազմի հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	**2025թ.**	2024թ.
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	**32,894**	29,270
Տոկոսային ծախս	**(104,258)**	(184,089)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	**(3,887)**	(4,788)

(բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքները, դրանց գծով մնացորդները և տարվա համապատասխան ծախսը և եկամուտը:

հազ. դրամ	**Բաժնետերեր**	**Վերջնական վերահսկող կողմի հետ կապակցված այլ կազմակերպություններ և վերջնական վերահսկող կողմի ընտանիքի անդամներ**	**Առանցքային ղեկավարության հետ կապակցված այլ կազմակերպություններ և առանցքային ղեկավարության ընտանիքի անդամներ**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ			
Համախառն մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**6,862,271**	**793,421**	**19,919**
Տարվա ընթացքում տրված վարկեր	**18,329,442**	**–**	**–**
Վարկերի մարումներ տարվա ընթացքում	**(5,095,669)**	**(793,421)**	**(19,919)**
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**20,096,044**	**–**	**–**
Պարտքային կորստի պահուստ	**(9,071)**	**–**	**–**
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**20,086,973**	**–**	**–**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**1,022,280**	**476,172**	**98,339**
Տարվա ընթացքում ստացված	**109,673,622**	**12,626,456**	**859,214**
Տարվա ընթացքում մարված	**(95,930,618)**	**(12,007,434)**	**(835,834)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**14,765,284**	**1,095,194**	**121,719**
Թողարկված պարտքային արժեթղթեր			
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**3,479,939**	**–**	**164,908**
Տարվա ընթացքում ստացված	**441,274**	**–**	**9,030**
Տարվա ընթացքում մարված	**(319,800)**	**–**	**(78,519)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**3,601,413**	**–**	**95,419**
Ստորադաս փոխառություն	**3,869,638**	**–**	**–**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն			
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	**750,231**	**15,316**	**2,118**
Տոկոսային ծախս ավանդների գծով	**(448,090)**	**(469)**	**(4,200)**
Տոկոսային ծախս թողարկված պարտքային արժեթղթերի գծով	**(159,320)**	**–**	**(7,525)**
Տոկոսային ծախս ստորադաս փոխառության գծով	**(348,284)**	**–**	**–**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

33 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ (շարունակություն)

(բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը 9% է, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

Այլ կապակցված կողմերին տրված վարկերը և փոխատվությունները արտահայտված են ՀՀ դրամով, եվրոյով և ԱՄՆ դոլարով, տոկոսադրույքները կազմում են 4.3-11.75% և ենթակա են մարման 2026-2035թթ.:

Այլ կապակցված կողմերի ժամկետային ավանդներն արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսադրույքները կազմում են 3.3%-10.75% և ենթակա են մարման 2027-2030թթ:

Ստորև ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքները, դրանց գծով մնացորդները և տարվա համապատասխան ծախսը և եկամուտը:

հազ. դրամ	Բաժնետերեր	Վերջնական վերահսկող կողմի հետ կապակցված այլ կազմակեր-պություններ և վերջնական վերահսկող կողմի ընտանիքի անդամներ	Առանցքային ղեկավարության հետ կապակցված այլ կազմակերպություն-ներ և առանցքային ղեկավարության ընտանիքի անդամներ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ			
Համախառն մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	2,178,681	810,663	23,489
Տարվա ընթացքում տրված վարկեր	10,284,952	109,080	1,590
Վարկերի մարումներ տարվա ընթացքում	(5,571,433)	(125,561)	(5,154)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**6,892,200**	**794,182**	**19,925**
Պարտքային կորստի պահուստ	(29,929)	(761)	(6)
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**6,862,271**	**793,421**	**19,919**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	–	–	2,609,866
Տարվա ընթացքում ստացված	–	–	71,855,206
Տարվա ընթացքում մարված	–	–	(74,465,072)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**–**	**–**	**–**
Պարտքային կորստի պահուստ	–	–	–
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**–**	**–**	**–**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	1,080,252	36,349	88,631
Տարվա ընթացքում ստացված	1,022,499	4,968,570	76,161,265
Տարվա ընթացքում մարված	(1,080,471)	(4,528,747)	(76,151,557)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**1,022,280**	**476,172**	**98,339**
Թողարկված պարտքային արժեթղթեր			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	3,678,683	–	369,825
Տարվա ընթացքում ստացված	158,648	–	73,746
Տարվա ընթացքում մարված	(357,392)	–	(278,663)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**3,479,939**	**–**	**164,908**
Ստորադաս փոխառություն	**4,023,289**	**–**	**–**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն			
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	274,970	55,128	2,118
Տոկոսային եկամուտ հակադարձ հետգնման գործարքների գծով	–	–	190,399
Տոկոսային ծախս ավանդների գծով	(158,822)	(11,934)	(5,270)
Տոկոսային ծախս թողարկված պարտքային արժեթղթերի գծով	(158,648)	–	(69,471)
Տոկոսային ծախս ստորադաս փոխառության գծով	(354,412)	–	–
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	–	(640,000)	–

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

33 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ (շարունակություն)

(բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը 9% է, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

Այլ կապակցված կողմերին տրված վարկերը և փոխատվությունները արտահայտված են ՀՀ դրամով, եվրոյով, ԱՄՆ դոլարով, և ռուբլով, տոկոսադրույքները կազմում են 4.3-19.0% և ենթակա են մարման 2025-2033թթ.:

Այլ կապակցված կողմերի ժամկետային ավանդներն արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսադրույքները կազմում են 3.3%-5.25% և ենթակա են մարման 2025-2026թթ.:

34 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ ՀՀ ԿԲ-ից ՀՀ դրամով 6%-7.5% անվանական տոկոսադրույքով և տեղական վարկային կազմակերպությունից ՀՀ դրամով 4.5%-10.5% անվանական տոկոսադրույքով ստացված փոխառություններ: Փոխառությունները համարվում են շուկայի առանձին սեգմենտի փոխառություններ, հետևաբար, Բանկը գտնում է, որ փոխառությունները ստացվել են շուկայական տոկոսադրույքներով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները:

2025թ.	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	Իրական արժեք հազ. դրամ	Տարբերություն հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**360,015,227**	**366,566,030**	**(6,550,803)**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**21,709,017**	**22,989,904**	**(1,280,887)**
Այլ փոխառու միջոցներ	**78,900,077**	**80,138,634**	**(1,238,557)**
Ընդամենը	**460,624,321**	**469,694,568**	**(9,070,247)**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

34 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ (շարունակություն)

2024թ.	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	Իրական արժեք հազ. դրամ	Տարբերություն հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	276,906,446	280,741,225	(3,834,779)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	31,401,936	32,613,878	(1,211,942)
Այլ փոխառու միջոցներ	53,018,275	52,962,638	55,637
Ընդամենը	**361,326,657**	**366,317,741**	**(4,991,084)**

Ստորև բերվող աղյուսակներում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ.			
հազ. դրամ	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ներդրումային արժեթղթեր	**–**	**86,974,078**	**–**	**86,974,078**
Բաժնային գործիքներ	**–**	**–**	**309,465**	**309,465**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**–**	**–**	**366,566,030**	**366,566,030**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**–**	**22,989,904**	**–**	**22,989,904**
Այլ փոխառու միջոցներ	**–**	**–**	**80,138,634**	**80,138,634**
	–	**109,963,982**	**447,014,129**	**556,978,111**

	2024թ.			
հազ. դրամ	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ներդրումային արժեթղթեր	–	62,284,347	–	62,284,347
Բաժնային գործիքներ	–	–	416,272	416,272
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	–	–	280,741,225	280,741,225
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	–	32,613,878	–	32,613,878
Այլ փոխառու միջոցներ	–	–	52,962,638	52,962,638
	–	**94,898,225**	**334,120,135**	**429,018,360**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

34 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ (շարունակություն)

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոփերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար: 2-րդ մակարդակ դասված ֆինանսական գործիքների համար Բանկն օգտագործում է նմանատիպ գործիքների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք համարվում են գրեթե ոչ գործող:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 7.1%-13.5% զեղչման դրույքներ՝ արտարժույթով արտահայտված վարկերի համար և 8.5%-12.5% զեղչման դրույքներ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 8.2%-10.5% դրույքներ և արտարժույթով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 6.0%-7.1% դրույքներ:

Մակարդակ 3-ում գտնվող, իրական արժեքով չափվող ակտիվների շարժը

Ստորև աղյուսակը ներկայացնում է մակարդակ 3-ում գտնվող իրական արժեքով չափվող ակտիվների և պարտավորությունների տարեկասկզբի և տարեվերջի գումարների համադրումը 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

հազ. դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**Օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված իրական արժեքի փոփոխություն**	**Ձեռքբերումներ**	**2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Ֆինանսական ակտիվներ				
Բաժնային գործիքներ	309,465	–	–	**309,465**
Ընդամենը մակարդակ 3-ի ֆինանսական ակտիվներ	309,465	–	–	**309,465**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

34 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ և ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ (շարունակություն)

Մակարդակ 3-ում գտնվող, իրական արժեքով չափվող ակտիվների շարժը (շարունակություն)

հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված իրական արժեքի փոփոխություն ից	Ձեռքբե-րումներ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ				
Բաժնային գործիքներ	42,825	49,483	217,157	309,465
Ընդամենը մակարդակ 3-ի ֆինանսական ակտիվներ	**42,825**	**49,483**	**217,157**	**309,465**

35 ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործառնական սեգմենտներ

Բանկի գործունեությունը կազմակերպվում է երեք հիմնական գործառնական սեգմենտների (2024թ-ին՝ չորս սեգմենտների) հիման վրա: Այդ գործառնական սեգմենտները մշտադիտարկվում են, և դրանց գործառնական արդյունքների հիման վրա կայացվում են ռազմավարական որոշումներ:

Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններն իրենցից ներկայացնում են հաճախորդներին ընթացիկ հաշիվների բացման և վարման, խնայողությունների, ավանդների գծով բանկային ծառայությունները, ներդրումային խնայողական, պահառուական, բանկային քարտերի սպասարկման ծառայությունները, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրումը:

Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններն իրենցից ներկայացնում են հաշվարկային և ընթացիկ հաշիվների սպասարկման, ավանդների, օվեդրաֆտների գծով ծառայությունները, վարկերի և ֆինանսավորման այլ միջոցների տրամադրումը, արտարժույթով գործառնությունները և ածանցյալ գործիքներով գործարքները:

Բանկային ներդրումային ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքների առուվաճառքի գործառնությունները, համակարգված ֆինանսավորման տրամադրումը, վարձակալությունը, միաձուլման և ձեռքբերման գծով խորհրդատվության տրամադրումը:

Բիզնես սեգմենտների միջև գործառնություններն իրականացվում են սովորական առևտրային պայմաններով: Ֆինանսական միջոցները որպես կանոն վերաբաշխվում են սեգմենտների միջև, որի արդյունքում ֆինանսավորման գծով ծախսերի տեղափոխումները բացահայտվում են գործառնական եկամտի կազմում: Այդ միջոցների գծով տոկոսները հաշվարկվում են Բանկի կապիտալի արժեքի հիման վրա:

Բիզնես սեգմենտների միջև առկա չեն եկամտի և ծախսի այլ էական հոդվածներ: Սեգմենտի ակտիվները և պարտավորությունները ներառում են գործառնական ակտիվները և պարտավորությունները, որոնք կազմում են Բանկի հաշվեկշռային ակտիվների և պարտավորությունների մեծ մասը, բացառությամբ այնպիսի հոդվածների, ինչպիսիք են՝ հարկերը և փոխառությունները: Ներքին ծախսերը և տրանսֆերային գնագոյացման մասով ճշգրտումները արտացոլվում են յուրաքանչյուր բիզնես սեգմենտի գործունեության արդյունքներում: Արտաքին հաճախորդների հետ պայմանագրերի հասույթն ըստ բիզնես սեգմենտների՝ ողջամիտ հիմունքով բաշխելու համար օգտագործվում են հասույթի բաշխման համաձայնագրեր:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

35 ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Գործառնական սեգմենտներ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն Բանկի գործառնական սեգմենտների եկամուտների և շահույթի, որոշակի ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

2025թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումային ծառայություններ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	**19,404,971**	**13,621,048**	**15,671,876**	**48,697,895**
Տոկոսային ծախս	**(12,011,777)**	**(10,299,934)**	**(3,512,053)**	**(25,823,764)**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ *(Ծան. 6)*	**6,533,895**	**1,967,555**	**1,714,287**	**10,215,737**
Զուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)*	**689,939**	**4,551,883**	**6,441,055**	**11,682,877**
Միջսեգմենտային եկամուտ	**4,906,437**	**4,447,010**	**(9,353,447)**	**–**
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	**19,523,465**	**14,287,562**	**10,961,718**	**44,772,745**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	**(413,398)**	**(97,675)**	**232,118**	**(278,955)**
Անձնակազմի և այլ վարչական ծախսեր	**(8,485,348)**	**(8,416,468)**	**(2,236,630)**	**(19,138,446)**
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը	**10,624,719**	**5,773,419**	**8,957,206**	**25,355,344**
Շահութահարկի գծով ծախս	**(1,659,982)**	**(902,424)**	**(1,399,055)**	**(3,961,461)**
Տարվա շահույթ	**8,964,737**	**4,870,995**	**7,558,151**	**21,393,883**

2024թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումային ծառայություններ հազ. դրամ	Թվային բանկինգ** հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	12,756,323	10,625,650	12,969,520	844,869	37,196,362
Տոկոսային ծախս	(3,404,842)	(7,464,393)	(2,616,149)	(5,553,731)	(19,039,115)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ *(Ծնթգ. 6)*	841,555	664,158	2,307,572	8,438,969	12,252,254
Զուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)*	1,760,469	1,605,498	2,652,262	(6,287,503)	(269,274)
Միջսեգմենտային եկամուտ	(2,727,254)	4,327,028	(8,083,774)	6,484,000	–
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	**9,226,251**	**9,757,941**	**7,229,431**	**3,926,604**	**30,140,227**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(186,482)	308,787	(209,753)	554,713	467,264
Անձնակազմի և այլ վարչական ծախսերը	(4,491,331)	(2,735,433)	(1,161,205)	(4,428,052)	(12,816,021)
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը	**4,548,438**	**7,331,295**	**5,858,473**	**53,264**	**17,791,470**
Շահութահարկի գծով ծախս	(817,850)	(1,295,390)	(1,046,638)	(22,396)	(3,182,275)
Տարվա շահույթ	**3,730,588**	**6,035,904**	**4,811,835**	**30,868**	**14,609,195**

* *Զուտ ոչ տոկոսային եկամուտը ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսը, այլ գործառնական եկամուտը, ուղղակի բանկային ծախսերը, զուտ օգուտը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից, զուտ օգուտը փոխարժեքային տարբերություններից և զուտ օգուտը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

35 ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Գործառնական սեգմենտներ (շարունակություն)

2025թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումային և ծառայություններ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ընդամենը ակտիվներ	**244,677,322**	**221,009,194**	**270,042,234**	**735,728,750**
Ընդամենը պարտավորություններ	**283,424,545**	**244,519,912**	**102,577,794**	**630,522,251**

2024թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումային և ծառայություններ հազ. դրամ	Թվային բանկինգ** հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ընդամենը ակտիվներ	148,288,662	152,902,464	238,420,993	12,614,252	552,226,371
Ընդամենը պարտավորություններ	116,610,261	174,531,981	69,868,953	107,012,369	468,023,564

Բանկը վերանայել է իր սեգմենտային հաշվետվողականությունների պատրաստման, ներառյալ ոչ ֆինանսական տվյալների՝ սեգմենտների միջև բաշխման մեթոդաբանությունը:2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Բանկն ըստ սեգմենտների ներկայացրել է ընդհանուր ակտիվները և պարտավորությունները:

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 15-ի շրջանակներում գնտվող՝ հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ սեգմենտների 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

2025թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումային և ծառայություններ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Պլաստիկ քարտերով գործառնություններ	**5,067,192**	**384,132**	**–**	**5,451,324.00**
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների վճարներ	**194,819**	**134,361**	**1,636,503**	**1,965,683.00**
Դրամական փոխանցումներ	**906,429**	**816,927**	**–**	**1,723,356**
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	**254,436**	**504,473**	**–**	**758,909**
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	**–**	**77,788**	**76,714**	**154,502**
Այլ	**111,019**	**49,874**	**1,070**	**161,963**
	6,533,895	**1,967,555**	**1,714,287**	**10,215,737**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

35 ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից (շարունակություն)

2024թ.	Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ	Բանկային ներդրումայի և ծառայություններ հազ. դրամ	Թվային բանկինգ** հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Պլաստիկ քարտերով գործառնություններ	187,157	–	–	7,954,622	8,141,779
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների վճարներ	167,902	134,602	2,159,815	158	2,462,477
Դրամական փոխանցումներ	327,457	353,737	–	91,505	772,699
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	89,603	79,041	–	371,540	540,184
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	–	76,847	145,227	–	222,074
Այլ	69,436	19,931	2,530	21,144	113,041
	841,555	**664,158**	**2,307,572**	**8,438,969**	**12,252,254**

** *Ընթացիկ տարում ղեկավարությունը ռազմավարական որոշում է կայացրել վերանայել սեգմենտների կառուցվածքը և դադարեցնել թվային բանկինգի ներկայացումը որպես առանձին գործառնական սեգմենտ (2024թ.՝ ներկայացված է որպես առանձին սեգմենտ): Համապատասխանաբար, թվային բանկինգն այլևս առանձին չի բացահայտվում սեգմենտների վերաբերյալ տեղեկատվությունում: Համեմատական տեղեկատվություն չի ներկայացվել, քանի որ պատմական տվյալները պատրաստվել և ստուգվել են նախորդ սեգմենտի շրջանակներում: Ներկայացումը կպահանջի գնահատականների և դատողությունների լայնածավալ օգտագործում, որոնք ղեկավարությունը համարում է անիրագործելի և պոտենցիալ վնասակար համեմատական տեղեկատվության հուսալիության համար: Համապատասխանաբար, նախորդ տարիների համեմատական տվյալները ներկայացվում են նախկինում ներկայացված տվյալների հիման վրա:*

«Էվոկաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականություններն այդ պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք դիտարկել ենք այդ հարցերը ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջության, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 18-ում և Ծանոթագրություն 29 (գ) կետում:	
Աուդիտի առանցքային հարց	**Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր**
Հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները կազմում են ընդհանուր ակտիվների 50%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, որոնք ներկայացված են ստորև: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելով ղեկավարությունից պահանջվում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, – ապագայամետ տեղեկատվությունը ներառելու նպատակով կատարված ճշգրտման գնահատում, – ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատման Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով պարտքային ռիսկերի մեր ներքին մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի՝ փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: – ֆիզիկական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը, որն օգտագործվում է որպես հիմք վարկերը փուլերի միջև բաշխելու համար: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կատարված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – 1-ին և 2-րդ փուլերին բաշխված՝ իրավաբանական անձանց տրված վարկերի համար, որոնց հետ կապված պարտազանցման հավանականությունը գնահատվում է խմբային հիմունքով, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ ընտրանքային կարգով: – իրավաբանական անձանց տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի համար, որոնց հետ կապված պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարը գնահատվում է անհատական հիմունքով, գնահատել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկի համար օգտագործված ելակետային տվյալները՝ համեմատելով գրավի արժեքներն արտաքին գնահատողների հաշվետվությունների տվյալների հետ և ստուգելով կիրառված զեղչերի ճշտությունը և տեղին լինելը:

	– իրավաբանական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կատարված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Մենք ներգրավել ենք գնահատման մեր ներքին մասնագետներին ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար օգտագործվող գրավի արժեքների համապատասխանության ընտրանքային կարգով գնահատմանը մեզ աջակցելու համար: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերին, որոնք ըստ հավանականության կարող են առավել նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – ֆիզիկական անձանց տրված վարկերի համար ընտրանքային կարգով ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներում օգտագործված ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը՝ համեմատելով հիմնավորող գրառումների և փաստաթղթերի տվյալների հետ: – ֆիզիկական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք՝ շուկայում հասանելի տեղեկատվության հետ համեմատության միջոցով, ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կատարված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները: – գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2024թ. հունվարի 1-ի դրությամբ կատարված գնահատումները 2024թ. փաստացի արդյունքների հետ: – գնահատել ենք ապագայամետ տեղեկատվությունը ներառելու նպատակով կատարված ճշգրտման համար կիրառված մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտությունը և տեղին լինելը՝ կրկին իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն և համեմատելով մակրոտնտեսական տվյալները հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության հետ: – գնահատել ենք նաև, արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է տարեկան հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք արտահայտում որևէ ձևի հավաստիացման եզրակացություն դրա վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և ծանոթանալիս դիտարկել, արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքներին կամ այլ կերպ կարող է էականորեն խեղաթյուրված լինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է,

քան սխալի պատճառով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքների հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքի կիրառման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հետ, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցվում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների շուրջ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդ հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի համար պատասխանատու գործընկերն է՝

Լուսինե Սարդարյան
Առաջադրանքի համար պատասխանատու գործընկեր
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
15 ապրիլի 2025թ.

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	36,525,153	28,860,639
Այլ տոկոսային եկամուտ	5	671,209	186,621
Տոկոսային ծախս	5	(19,039,115)	(13,888,429)
Զուտ տոկոսային եկամուտ		**18,157,247**	**15,158,831**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	6	12,252,254	7,967,909
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	6	(9,838,459)	(5,663,032)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**2,413,795**	**2,304,877**
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով		37,842	12,667
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7	10,436,785	7,714,975
Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		11,144	3,515
Այլ գործառնական եկամուտ	8	568,990	734,504
Ուղղակի բանկային ծախսեր	9	(1,485,576)	(1,312,447)
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը		**30,140,227**	**24,616,922**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստների զուտ հակադարձում/(զուտ կորուստներ արժեզրկումից)	10	467,264	(732,404)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(7,855,157)	(6,420,563)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19, 20	(1,243,123)	(1,006,040)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	(3,717,741)	(3,043,446)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**17,791,470**	**13,414,469**
Շահութահարկի գծով ծախս	13	(3,182,275)	(2,378,489)
Տարվա շահույթ		**14,609,195**	**11,035,980**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց շահութահարկի		712,379	-
Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս		**712,379**	**-**
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
– իրական արժեքի զուտ փոփոխություն		1,476,263	936,800
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		(9,138)	(2,882)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		**1,467,125**	**933,918**
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		**2,179,504**	**933,918**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**16,788,699**	**11,969,898**

8-ից 93-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Վարչության կողմից 2025թ. ապրիլի 15-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Կարեն Եղիազարյան
Վարչության նախագահ

Էմմա Ջանինյան
Գլխավոր հաշվապահ
Վարչության անդամ

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	83,157,459	60,937,733
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15(ա)		
– Բանկի կողմից պահվող		44,682,897	30,553,145
– Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		17,910,915	6,181,126
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	15(բ)		
– Բանկի կողմից պահվող		31,401,936	49,141,141
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15(գ)	106,807	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ*	16	33,996,173	40,764,775
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	45,723,768	30,249,231
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	276,906,446	211,751,365
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	10,457,343	9,262,505
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	20	1,128,778	1,055,100
Առգրավված ակտիվներ	18	1,360,456	1,526,940
Այլ ակտիվներ	21	5,393,393	4,220,303
Ընդամենը ակտիվներ		**552,226,371**	**445,643,364**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ	22	20,003,897	11,581,709
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	27	17,023,540	6,007,733
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	23	329,504,000	280,821,591
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	32,862,442	21,296,245
Այլ փոխառու միջոցներ	25	53,018,275	43,353,427
Ստորադաս փոխառություններ	25	4,023,289	4,107,166
Ընթացիկ հարկային պարտավորություն		1,217,295	1,389,238
Հետաձգված հարկային պարտավորություն	13	2,337,034	1,452,052
Վարձակալության գծով պարտավորություններ	20	1,246,879	1,150,077
Այլ պարտավորություններ	26	6,786,913	5,024,018
Ընդամենը պարտավորություններ		**468,023,564**	**376,183,256**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	28		
Բաժնետիրական կապիտալ		23,000,000	23,000,000
Շենքերի վերագնահատումից արժեքի աճ		3,875,488	3,270,974
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		761,851	(705,274)
Չբաշխված շահույթ		56,565,468	43,894,408
Ընդամենը սեփական կապիտալ		**84,202,807**	**69,460,108**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**552,226,371**	**445,643,364**

* Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները չեն ներառում ունիվերսալ վարկային կազմակերպություններին տրված վարկերը: Այդ վարկերը ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների կազմում:

	Ծնթգ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		**17,791,470**	**13,414,469**
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.			
Ամորտիզացիայի և մաշվածության մասհանումներ		1,243,123	1,006,040
Զուտ վնաս/(օգուտ) հիմնական միջոցների դուրսգրումից		9,578	(166)
Զուտ (օգուտ)/վնաս այլ ակտիվների օտարումից		(16,616)	11,876
(Արժեզրկումից կորուստների հակադարձում)/արժեզրկումից կորուստներ		(467,264)	732,404
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախս		123,915	103,786
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից՝ ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	7	(1,218,697)	(1,283,818)
Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազում		18,471	-
Ստացվելիք տոկոսների փոփոխություն*		(803,859)	(749,377)
Վճարվելիք տոկոսների փոփոխություն*		1,573,929	829,904
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**18,254,050**	**14,065,118**
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(15,508,130)	(3,139,744)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		2,946,503	(18,577,877)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		(67,839,784)	(46,859,471)
Առգրավված ակտիվներ		258,323	146,206
Այլ ակտիվներ		(1,022,938)	523,443
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Բանկերի ավանդներ և մնացորդներ		12,750,222	11,084,857
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		11,030,733	6,010,648
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		52,797,746	46,707,320
Այլ պարտավորություններ		2,254,609	2,447,019
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		**15,921,334**	**12,407,519**
Վճարված շահութահարկ		(2,919,808)	(5,485,032)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**13,001,526**	**6,922,487**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(31,716,846)	(22,416,499)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		7,838,355	12,032,796
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(15,570,729)	(21,661,786)
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից		32,831,906	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,346,604)	(1,619,364)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		-	39,187
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(7,963,918)**	**(33,625,666)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ	28	(2,046,000)	(3,420,110)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	24	17,632,230	14,668,639
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	24	(5,872,900)	(4,866,450)
Ստացված այլ փոխառու միջոցներ	25	23,739,722	16,931,181
Այլ փոխառու միջոցների մարում	25	(13,996,699)	(7,320,965)
Վարձակալության գծով պարտավորություններ	20	(342,138)	(282,922)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**19,114,215**	**15,709,373**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**24,151,823**	**(10,993,806)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,921,322)	529,580
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(10,775)	17,637
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		60,937,733	71,384,322
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	14	**83,157,459**	**60,937,733**

* 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացված տոկոսները կազմել են 36,374,541 հազար դրամ (2023թ-ին՝ 28,297,883 հազար դրամ): 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար վճարված տոկոսները կազմել են 17,340,182 հազար դրամ (2023թ-ին՝ 14,718,333 հազար դրամ):

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Շենքերի վերագնա-հատումից արժեքի աճ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	23,000,000	(1,639,192)	3,378,746	36,196,656	60,936,210
Տարվա շահույթ	-	-	-	11,035,980	11,035,980
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
– իրական արժեքի զուտ փոփոխություն	-	936,800	-	-	936,800
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	(2,882)	-	-	(2,882)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**933,918**	**-**	**11,035,980**	**11,969,898**
Հիմնական միջոցների մաշվածության կամ օտարման գծով պահուստի ճշգրտում	-	-	(107,772)	107,772	-
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	-	-	-	(3,446,000)	(3,446,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**(3,446,000)**	**(3,446,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**23,000,000**	**(705,274)**	**3,270,974**	**43,894,408**	**69,460,108**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	23,000,000	(705,274)	3,270,974	43,894,408	69,460,108
Տարվա շահույթ	-	-	-	14,609,195	14,609,195
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց շահութահարկի	-	-	712,379	-	712,379
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ					
– իրական արժեքի զուտ փոփոխություն	-	1,476,263	-	-	1,476,263
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	(9,138)	-	-	(9,138)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**1,467,125**	**712,379**	**14,609,195**	**16,788,699**
Հիմնական միջոցների մաշվածության կամ օտարման գծով պահուստի ճշգրտում	-	-	(107,865)	107,865	-
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում					
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	-	-	-	(2,046,000)	(2,046,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**(2,046,000)**	**(2,046,000)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**23,000,000**	**761,851**	**3,875,488**	**56,565,468**	**84,202,807**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և գործունեությունը

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ-ն) (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Բանկն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից 1991թ. հոկտեմբերի 2-ին տրված թիվ 27 լիցենզիայի համաձայն:

Բանկը Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամի, Հայաստանի բանկերի միության, ԱրՔա և Master Card վճարային համակարգերի անդամ է:

Բանկի հիմնական գործունեությունն ավանդների ընդունումն է և վարկերի տրամադրումը, Հայաստանում և արտերկիր փոխանցումների, արտարժույթի փոխարկման գործարքների իրականացումն է և այլ բանկային ծառայությունների մատուցումն է իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկին իր գործունեությունն իրականացնում է գլխամասային գրասենյակի և 13 մասնաճյուղերի միջոցով, որոնք գտնվում են Երևանում, Գյումրիում, Աբովյանում և Վանաձորում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության փ. 44/2:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ 527 աշխատակից (2023թ-ին՝ 492):

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ.		2023թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Մարետա Գևորկյան	22,999,300	100.0	22,999,300	100.0
Այլ բաժնետերեր	700	0.0	700	0.0
	23,000,000	**100**	**23,000,000**	**100**

Բանկի վերջնական հսկող անձն է Մարետա Գևորկյանը, ով իրավունք ունի կառավարել Բանկի գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մի շարք մասնակցություններ ուներ Բանկի հետ առնչություն չունեցող այլ կազմակերպություններում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում: Հայաստանի և Ադրբեջանի միջև իրավիճակը շարունակում է լարված մնալ՝ երկրների միջև սահմանի սահմանազատման շուրջ շարունակվող տարաձայնությունների պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 396.56 դրամ և 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 413.89 դրամ և 447.9 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր կամ տեղի է ունեցել պարտազանցում ֆինանսական ակտիվի գծով, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն – Ծանոթագրություն 29 (գ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

– ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ վերականգնվող դրամական հոսքերը գնահատելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները և ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 29 (գ):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Բանկը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2024թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված՝ ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացառությամբ այն դեպքերի, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Օտարումներ/ դուրսգրումներ	-	(4,899)	(6,349)	-	(41,355)	(51,494)	(104,097)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**773,990**	**87,114**	**739,444**	**120,608**	**1,513,901**	**398,215**	**3,633,272**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**6,463,506**	**141,397**	**632,115**	**162,223**	**1,181,027**	**682,237**	**9,262,505**

(ա) Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ պարտավորությունների դիմաց գրավադրված հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, կամ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց նկատմամբ սեփականության իրավունքն որևէ այլ կերպ սահմանափակված է:

(բ) Պայմանագրային հանձնառություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու պայմանագրային հանձնառություններ:

(գ) Ակտիվների վերագնահատում

Եթե հողը և շենքերը չվերագնահատվեին, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 2,373,151 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,473,457 հազար դրամ):

Հողի և շենքերի իրական արժեքը վերջին անգամ որոշվել է 2024թ դեկտեմբերի 31-ին՝ հիմք ընդունելով արտաքին, անկախ լիցենզավորված գնահատողի կողմից իրականացված գնահատումը, որն ունի համապատասխան մասնագիտական որակավորում և գնահատվող գույքի դասի գնահատման փորձ վերջին ժամանակներում: Իրական արժեքը որոշվել է շուկայի համեմատական և եկամտի կապիտալիզացիայի մոտեցումների համակցմամբ: Շուկայի համեմատական մոտեցումը հիմնված է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով նմանատիպ գույքի համար հայտարարված գների վրա՝ կիրառելով 0.87-ից 1.2 տիրույթում ընկած գործակիցներ մուտքային գներն օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տարբերությունների (առկայության դեպքում) մասով ճշգրտելու համար: Եկամտի կապիտալիզացիայի մոտեցումը կիրառելիս կանխատեսվող զուտ դրամական հոսքերը, որոնք հիմնված են ընթացիկ շուկայական գնահատված վարձավճարների (շուկայական վարձավճարների) վրա՝ գնահատված ծախսերի հետ միասին, զեղչվում են շուկայի կապիտալիզացիայի դրույքաչափերով՝ իրական արժեքի վերաբերյալ գնահատողի կարծիքը ստանալու համար:

Հողի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ՝ կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով:

20 Վարձակալություն

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները և այլ տարածքներ: Մասնաճյուղերի գրասենյակների տարածքների և այլ տարածքների վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5-ից 12 տարի:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	1,055,100	1,077,445
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	305,345	378,333
Վարձակալության պայմանագրի լուծում	(55,707)	(271,961)
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(253,611)	(205,687)
Վարձակալության պայմանագրի փոփոխություններ	77,651	76,970
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,128,778**	**1,055,100**

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	253,608	205,687
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	123,915	103,786
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով ծախսեր (Ծանոթագրություն 12)	96,161	70,151

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	**438,299**	**353,073**

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	**1,150,077**	**1,166,032**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մարումներ	(342,138)	(282,922)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(342,138)**	**(282,922)**
Այլ փոփոխություններ		
Վարձակալության գծով պարտավորությունների ավելացումներ	305,345	378,333
Պայմանագրի լուծում	(67,971)	(271,961)
Պայմանագրի փոփոխություն	77,651	56,809
Տոկոսային ծախս	123,915	103,786
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,246,879**	**1,150,077**

21 Այլ ակտիվներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Չավարտված գործարքների գծով ստացվելիք գումարներ	1,719,319	646,813
Ստացվելիք գումարներ և այլ մուտքեր	1,693,809	1,664,949
Պարտքային կորստի պահուստ	(3,372)	(3,738)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	**3,409,756**	**2,308,024**
Կանխավճարներ մատակարարներին	1,224,488	1,419,363
Նախապես վճարված ծախսեր	303,932	158,905
Պետական բյուջեից ստացվելիք գումարներ	278,206	190,902
Նյութեր	128,009	115,682
Այլ	49,002	27,427
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**1,983,637**	**1,912,279**
Ընդամենը այլ ակտիվներ	**5,393,393**	**4,220,303**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,413,128 հազար դրամ գումարով այլ ֆինանսական ակտիվները դասվել են 1-ին փուլ և ժամկետանց չեն (2023թ-ին՝ 2,311,762 հազար դրամ գումարով այլ ֆինանսական ակտիվներն ամբողջությամբ դասվել էին 1-ին փուլ և ժամկետանց չէին):

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	3,738	-	-	3,738
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(3,738)	-	-	(3,738)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	28,736	-	-	28,736
Մարված	(25,364)	-	-	(25,364)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,372**	**-**	**-**	**3,372**

հազ. դրամ	**2023թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	13,790	-	-	13,790
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(13,790)	-	-	(13,790)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	41,938	-	-	41,938
Մարված	(38,200)	-	-	(38,200)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**3,738**	**-**	**-**	**3,738**

22 Բանկերի ավանդներ և մնացորդներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Լորո հաշիվներ	20,003,354	1,987,393
Ժամկետային ավանդներ բանկերից	-	6,720,267
Բանկերին վճարվելիք այլ գումարներ	543	2,874,049
	20,003,897	**11,581,709**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրի կողմ հանդիսացող բանկեր, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալ 10%-ը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի բանկեր չկային):

23 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
− Ֆիզիկական անձիք	58,984,338	49,085,302
− Իրավաբանական անձիք	97,035,043	82,007,289
Ժամկետային ավանդներ		
− Ֆիզիկական անձիք	132,427,609	115,828,100
− Իրավաբանական անձիք	41,057,010	33,900,900
	329,504,000	**280,821,591**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ներառում են 13,514,031 հազար դրամի չափով ավանդներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,516,116 հազար դրամ), որոնք ծառայում են որպես ապահովություն հաճախորդներին տրված վարկերի, տրված երաշխավորությունների և պայմանական պարտավորությունների հետ կապված այլ գործարքների համար: Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու պայմանագրի կողմ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ հաճախորդ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 21,498,079 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 7,216,537 հազար դրամ):

24 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՀ թողարկված պարտատոմսեր	**32,862,442**	**21,296,245**

2023թ. մարտի 27-ին Բանկը թողարկել է 2 միլիարդ դրամ, 10 միլիոն ԱՄՆ դոլար և 7 միլիոն եվրո ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է համապատասխանաբար 11%, 5.25% և 4%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 30 և 39 ամիս:

2023թ. սեպտեմբերի 25-ին Բանկը թողարկել է 2 միլիարդ դրամ և 10 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է համապատասխանաբար 11% և 5%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 30 ամիս է:

2024թ. հուլիսի 25-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է համապատասխանաբար 10.25% և 5.25%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 36 ամիս է:

2024թ. սեպտեմբերի 30-ին Բանկը թողարկել է 3 միլիարդ դրամ և 15 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով հրապարակային տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսեր: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը կազմում է համապատասխանաբար 10% և 5%, արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ, շրջանառության ժամկետը 36 ամիս է:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	**21,296,245**	**10,895,281**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	17,632,230	14,668,639
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(5,872,900)	(4,866,450)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**11,759,330**	**9,802,189**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(291,542)**	**603,674**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	1,671,911	1,157,491
Վճարված տոկոսներ	(1,573,502)	(1,162,390)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**32,862,442**	**21,296,245**

25 Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Վարկեր վարկային կազմակերպություններից	22,134,434	20,144,512
Փոխառություններ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից	3,850,872	4,875,973
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	27,032,969	18,332,942
	53,018,275	**43,353,427**
Ստորադաս փոխառություններ	4,023,289	4,107,166
	4,023,289	**4,107,166**

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին: Վարկերի մշտադիտարկումն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից: Այդ վարկերը դիտարկվում են որպես շուկայի առանձին սեգմենտի վարկեր:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի կազմում ներառված են 22,134,434 հազար դրամ գումարով վարկերը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20,144,512 հազար դրամ), որոնք ըստ պայմանավորվածության Բանկի կողմից տրամադրվելու են որպես հիփոթեքային վարկեր համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին: Տնտեսության որոշակի ճյուղերում գործող փոքր և միջին չափի ձեռնարկություններին աջակցելու և հիփոթեքային շուկան զարգացնելու նպատակով տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող այս տեսակի ֆինանսավորման համար փաստացի շուկա չի գործում: Այդ վարկերի համար գործում է ՀՀ ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը և դրանք իրենցից ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ:

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու պայմանագրի կողմ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք պայմանագրի կողմ), որոնցից ստացված փոխառությունների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ փոխառությունները կազմում են 22,134,434 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 31,781,102 հազար դրամ):

(բ) Ստորադաս փոխառություն

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության պայմանագիր, որը Բանկի անվճարունակության կլինի երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների, այդ թվում՝ ավանդների և այլ պարտքային գործիքների գծով պարտավորությունների նկատմամբ:

2016թ. ընթացքում Բանկը ստացել է 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով ստորադաս փոխառություն ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետիրոջից՝ 2031թ-ին մարման ժամկետով:

(գ) Սահմանափակումներ (կովենանտներ)

Բանկը պարտավոր է համապատասխանել փոխառության պայմանագրերով նախատեսված որոշակի սահմանափակումների: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը համապատասխանում էր բոլոր սահմանափակումներին:

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	**Այլ փոխառու միջոցներ**	**Ստորադաս փոխառություններ**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	**43,353,427**	**4,107,166**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	23,739,722	-
Մարումներ	(13,996,699)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**9,743,023**	**-**
Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(302,463)	(83,712)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	3,430,743	354,412
Վճարված տոկոսներ	(3,206,455)	(354,577)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**53,018,275**	**4,023,289**

հազ. դրամ	Այլ փոխառու միջոցներ	Ստորադաս փոխառություններ
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	**33,096,336**	**3,993,514**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր	16,931,181	-
Մարումներ	(7,320,965)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**9,610,216**	**-**
Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	370,604	113,566
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	2,642,848	353,178
Վճարված տոկոսներ	(2,366,577)	(353,092)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**43,353,427**	**4,107,166**

26 Այլ պարտավորություններ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Վճարվելիք գումարներ	4,011,089	2,837,304
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվելիք շահաբաժիններ	646,000	646,000
Ակնկալվող կորուստների պահուստ ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի գծով	78,216	66,457
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**4,735,305**	**3,549,761**
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	1,336,232	940,036
Անձնակազմին վճարվելիք գումարներ	640,516	461,388
Ակտիվներին վերաբերող շնորհներ	35,340	37,439
Այլ	39,520	35,394
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**2,051,608**	**1,474,257**
Ընդամենը այլ պարտավորություններ	**6,786,913**	**5,024,018**

27 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ին վճարվելիք գումարներ	17,023,540	6,007,733
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**17,023,540**	**6,007,733**

(ա) Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կենտրոնացում

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրի կողմ, բացի ՀՀ ԿԲ-ից, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

28 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 23,000,000 հազար դրամ: Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը բաղկացած է 172,500 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով և 57,500 չմարվող արտոնյալ բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100,000 դրամ անվանական արժեքով:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ տարեկան շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 10-12%-ի չափով Բանկի հայեցողությամբ և չունեն քվեարկելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը: Այդ գումարը նվազեցվում է կորստի պահուստի գումարի չափով: Պարտքային գործիք հանդիսացող ակտիվի ապաճանաչումից հետո պահուստի համապատասխան մասը վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի աճ

Հողի և շենքերի վերագնահատումից արժեքի աճը ներառում է հողի և շենքերի արժեքի կուտակային դրական փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը: Մաշվածությունը հաշվառվում է չբաշխված շահույթի միջոցով:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

Օրենսդրության պահանջների համաձայն՝ Բանկը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթի հաշվին՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արտոնյալ շահաբաժինների գումարը կազմել է 646,000 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 646,000 հազար դրամ): 2024թ-ին մեկ արտոնյալ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմել է 11,235 դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11,325 դրամ):

2024թ-ին Բանկի կողմից սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 1,400,000 հազար դրամ (2023թ-ին՝ 2,800,000 հազար դրամ): 2024թ-ին մեկ սովորական բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմել է 8,116 դրամ (2023թ-ին՝ 16,232 դրամ):

29 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող պորդուկտների և ծառայությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչությանը և անուղղակիորեն՝ Բանկի խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որի նախագահն է Վարչության նախագահը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Վարչության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			**2023թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**		
	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար, եվրո**	**Այլ արտար-ժույթ**	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար, եվրո**	**Այլ արտար-ժույթ**
Տոկոսաբեր ակտիվներ						
Ներդրումային արժեթղթեր	10.7	8.0	-	10.8	6.3	-
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	-	8.1	19.8	-	6.0	21.0
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8.0	4.6	-	10.4	4.3	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13.7	7.9	9.5	13.2	8.4	10.4
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2.5-6	0.75-3	0-1	2.5-6	0.75-3	0-1
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	7.5	-	-	9.9	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.9	5.1	-	11.4	4.9	-
Հաճախորդների ժամկետային ավանդներ	10.0	4.4	5.4	10.6	4.4	5.4
Ստորադաս փոխառություններ	-	9.3	-	-	9.3	-
Այլ փոխառու միջոցներ	8.0	9.5	-	6.9	10.9	-
Վարձակալության գծով պարտավորություններ	10.3	-	-	10.2	-	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի հիման վրա:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
100 բկ զուգահեռ աճ	239,871	145,484
100 բկ զուգահեռ նվազում	(239,871)	(145,484)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2024թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	**2023թ. Սեփական կապիտալ հազ. դրամ**
100 բկ զուգահեռ աճ	(1,482,102)	(916,764)
100 բկ զուգահեռ նվազում	1,482,102	916,764

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	**Եվրո հազ. դրամ**	**Այլ արտարժույթ* հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,622,375	6,396,904	6,713,479	50,732,758
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,747,946	-	-	2,747,946
Ներդրումային արժեթղթեր	8,840,615	-	-	8,840,615
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	26,090,541	4,018,475	1,314,417	31,423,433
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	106,676,683	30,314,874	1,505,842	138,497,399
Այլ ֆինանսական ակտիվներ	971,097	43,842	204,959	1,219,898
Ընդամենը ակտիվներ	**182,949,257**	**40,774,095**	**9,738,697**	**233,462,049**

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	11,260,617	8,305,000	260,788	19,826,405
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	127,586,692	28,874,890	8,181,228	164,642,810
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,896,047	2,899,188	-	22,795,235
Ստորադաս փոխառություններ	4,023,289	-	-	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	18,175,718	-	-	18,175,718
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,302,641	178,506	77,488	1,558,635
Ընդամենը պարտավորություններ	**182,245,004**	**40,257,584**	**8,519,504**	**231,022,092**
Զուտ դիրքը	**704,253**	**516,511**	**1,219,193**	**2,439,957**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**1,189,680**	**-**	**(1,135,260)**	**54,420**
Զուտ դիրքը	**1,893,933**	**516,511**	**83,933**	**2,494,377**

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,822,892	5,926,880	5,248,057	35,997,829
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,762,086	-	-	2,762,086
Ներդրումային արժեթղթեր	20,481,974	-	-	20,481,974
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	29,408,723	6,158,470	1,397,104	36,964,297
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	87,345,887	23,568,527	455,736	111,370,150
Այլ ֆինանսական ակտիվներ	377,875	102,553	201,081	681,509
Ընդամենը ակտիվներ	**165,199,437**	**35,756,430**	**7,301,978**	**208,257,845**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	4,735,933	6,825,615	7,701	11,569,249
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	126,178,342	25,221,319	6,270,739	157,670,400
Թողարկված պարտքային արժեթղթեր	12,151,341	3,136,939	-	15,288,280
Ստորադաս փոխառություններ	4,107,166	-	-	4,107,166
Այլ փոխառու միջոցներ	17,519,189	-	-	17,519,189
Այլ ֆինանսական պարտավորություններ	517,307	255,239	37,314	809,860
Ընդամենը պարտավորություններ	**165,209,278**	**35,439,112**	**6,315,754**	**206,964,144**
Զուտ դիրքը	**(9,841)**	**317,318**	**986,224**	**1,293,701**

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին:

Ստորև աղյուսակում ներկայացված 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	189,393	(984)
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	51,651	31,732
ՀՀ դրամի նկատմամբ այլ արտարժույթների փոխարժեքի աճ 10%-ով	8,393	98,622

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց հետ կապված Բանկը ենթարկվում է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գոծառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Պարտազանցման հավանականության

Պարտազանցման հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանականության գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում

Կորուստը պարտազանցման դեպքում կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ այդ թվում՝ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:
Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հիրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Բանկը ներդրել է իր սեփական ներքին վարկանիշային մոդելն անհատական հիմունքով խոշոր վարկերի համար, որոնք կազմում են իրավաբանական անձանց տրված վարկերի ընդհանուր պորտֆելի մոտ 61%-ը: Բանկը վարկանիշները շնորհում է «Moody's» գործակալության վարկանիշայի սանդղակի համաձայն և կիրառում է համապատասխան վարկանիշին համապատասխանող «Moody's» գործակալության պարտազանցման հավանականության դրույքները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին և 2-րդ փուլ դասված իրավաբանական անձանց տրված վարկերի պարտքային որակի մասին, որոնց համար Բանկը որոշել է ներքին վարկանիշ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ.		
հազ. դրամ	**Համախառն գումար**	**Պարտքային կորստի պահուստ**	**Զուտ գումար**
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Ba2	5,798,826	(25,867)	5,772,959
B1	38,955,292	(169,111)	38,786,181
B2	34,706,544	(264,983)	34,441,561
B3	1,174,701	(7,218)	1,167,483
Caa1 (2-րդ փուլ)	1,431,907	(14,584)	1,417,323
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**82,067,270**	**(481,763)**	**81,585,507**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ B3 վարկանիշով վարկերում ներառված է 2-րդ փուլ դասված մեկ հաճախորդ, որի վարկի ընդհանուր գումարը կազմում է 1,724,724 հազար դրամ, իսկ պարտքային կորստի պահուստը՝ 12,233 հազար դրամ:

	2023թ.		
հազ. դրամ	**Համախառն գումար**	**Պարտքային կորստի պահուստ**	**Զուտ գումար**
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Ba2	6,275,324	(33,365)	6,241,959
B1	21,692,218	(78,692)	21,613,526
B2	16,520,689	(203,299)	16,317,390
B3	5,629,189	(21,723)	5,607,466
Caa1 (2-րդ փուլ)	1,627,194	(6,679)	1,620,515
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**51,744,614**	**(343,758)**	**51,400,856**

2024թ-ին և 2023թ-ին վերոնշյալ հաճախորդների համար Բանկը կիրառել է վերը նշված վարկանիշներին համապատասխանող՝ «Moody's» գործակալության պարտազանցման դրույքներին համարժեք պարտազանցման հավանականության դրույքներ: Բանկի կողմից շնորհված ներքին վարկանիշները համապատասխանում են «Moody's» գործակալության արտաքին վարկանիշային սանդղակին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը: 1-ին և 2-րդ փուլերի վարկերի համար պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկն օգտագործում է պարտազանցումով վարկերի ամորտիզացված արժեքի մասով անցյալ ժամանակաշրջանների օրինաչափությունը մինչև պարտազանցման ամսաթիվը:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Կորուստը պարտազանցման դեպքում

Ֆիզիկական անձանց տրված՝ գրավով չապահովված 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները պարտազանցված բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է պարտազանցված վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ և այլն): 1-ին, 2-րդ և 3-րդ փուլեր դասված մնացած վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, այդ թվում՝ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված այլ վարկերի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- անհատական հիմունքով վարկանշավորված վարկերի ներքին վարկանիշը նվազել է երկու կամ ավելի մակարդակով:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- սպառողական գների ինդեքս,
- ներմուծման ծավալը,
- արտահանման ծավալը,
- շինարարության ծավալը,
- ՀՆԱ անվանական ծավալը;
- սպառողական վարկերի աճը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից, ՀՀ ֆինանսների նախարարությունից):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանական-նություն, %	2025թ.	2026թ.	2027թ.
Հիմնական գործոն					
Սպառողական գների ինդեքս					
	Լավատեսական	20%	100.38	100.73	100.55
	Բազային	60%	103.05	103.75	103.85
	Վատատեսական	20%	105.72	106.77	107.15
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք					
	Լավատեսական	20%	382	372	369
	Բազային	60%	407	423	448
	Վատատեսական	20%	431	471	522
Ներմուծում, հազար ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	20%	24,031,663	33,608,465	47,435,676
	Բազային	60%	18,158,086	19,392,836	20,813,361
	Վատատեսական	20%	12,284,510	9,059,732	6,659,623
Արտահանում, հազար ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	20%	23,737,476	33,649,823	47,896,167
	Բազային	60%	17,587,177	18,906,216	20,395,080
	Վատատեսական	20%	11,436,879	8,376,574	6,149,490
Շինարարություն, հազար դրամ					
	Լավատեսական	20%	860,979,326	1,001,683,857	1,176,450,565
	Բազային	60%	808,625,109	873,315,118	943,180,327
	Վատատեսական	20%	756,270,892	753,681,556	742,773,582
Անվանական ՀՆԱ աճի տեմպ					
	Լավատեսական	20%	10.99	10.92	10.89
	Բազային	60%	5.43	5.23	5.10
	Վատատեսական	20%	(0.14)	(0.47)	(0.69)
Սպառողական վարկեր, միլիոն դրամ					
	Լավատեսական	20%	1,501,336	1,672,439	1,916,706
	Բազային	60%	1,554,138	1,734,691	1,985,588
	Վատատեսական	20%	1,618,724	1,806,528	2,066,372

Վերը աղյուսակում ներկայացված բազային կանխատեսումների հետ մեկտեղ (60% հավանականությամբ) Բանկն օգտագործում է նաև ցնցող մակրոտնտեսական փոփոխականներ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (20% հավանականությամբ) և վատատեսական (20% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: Այդ ցուցանիշները գնահատվում են ակնկալվող պարտքային կորուստների վերջնական ցուցանիշը ստանալու համար:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով: Գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	45,723,768	-	45,723,768	(45,723,768)		-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**45,723,768**	**-**	**45,723,768**	**(45,723,768)**		**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(17,023,540)	-	(17,023,540)	17,023,540		-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(17,023,540)**	**-**	**(17,023,540)**	**17,023,540**		**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	30,249,231	-	30,249,231	(30,249,231)		-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**30,249,231**	**-**	**30,249,231**	**(30,249,231)**		**-**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,007,733)	-	(6,007,733)	6,007,733		-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(6,007,733)**	**-**	**(6,007,733)**	**6,007,733**		**-**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Բանկի խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ: Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեստեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ: Այնուամենայնիվ, Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Արտահոսքի ընդհանուր համախառն գումար**	**Հաշվեկշռ. արժեք**
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	20,003,897	-	-	-	20,003,897	20,003,897
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,033,658	-	-	-	17,033,658	17,023,540
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	169,435,192	104,667,798	66,211,446	88,847	340,403,283	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	154,947	3,969,627	33,121,961	-	37,246,535	32,862,442
Ստորադաս փոխառություններ	18,382	337,933	1,428,789	4,642,447	6,427,551	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	333,482	14,982,264	37,364,763	13,474,337	66,154,846	53,018,275
Վարձակալության գծով պարտավորություններ	32,357	321,137	1,013,296	254,683	1,621,473	1,246,879
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,972,689	684,400	-	-	4,657,089	4,657,089
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**210,984,604**	**124,963,159**	**139,140,255**	**18,460,314**	**493,548,332**	**462,339,411**
Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ	**27,932,623**	**-**	**-**	**-**	**27,932,623**	**27,932,623**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Արտահոսքի ընդհանուր համախառն գումար**	**Հաշվեկշռ. արժեք**
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	11,581,709	-	-	-	11,581,709	11,581,709
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,012,374	-	-	-	6,012,374	6,007,733
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	142,872,717	90,546,134	56,067,147	70,016	289,556,014	280,821,591
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	7,345,018	16,430,984	-	23,776,002	21,296,245
Ստորադաս փոխառություններ	18,573	346,915	1,457,843	5,103,304	6,926,635	4,107,166
Այլ փոխառու միջոցներ	508,944	14,954,533	24,753,182	12,391,329	52,607,988	43,353,427
Վարձակալության գծով պարտավորություններ	27,040	273,740	1,040,465	129,571	1,470,816	1,150,077
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,793,804	689,500			3,483,304	3,483,304
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**163,815,161**	**114,155,840**	**99,749,621**	**17,694,220**	**395,414,842**	**371,801,252**
Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ	**20,285,216**	**-**	**-**	**-**	**20,285,216**	**20,285,216**

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ավանդատուի պահանջով՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը ներկայացված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

	2024թ. հազ. դրամ	**2023թ. հազ. դրամ**
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	10,792,311	7,317,656
1-ից 3 ամիս ժամկետով	15,642,115	12,814,376
3-ից 6 ամիս ժամկետով	20,248,811	19,064,848
6-ից 12 ամիս ժամկետով	39,278,201	35,546,693
Ավելի քան 1 տարի ժամկետով	46,466,171	41,084,527
	132,427,609	**115,828,100**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	83,157,459	-	-	-	-	-	83,157,459
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,218	8,349,104	45,644,737	8,285,288	309,465	-	62,593,812
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,215,332	10,559,028	15,235,177	4,392,399	-	-	31,401,936
Ներդրումային արժեթղթեր նախորոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	-	-	-	-	106,807	-	106,807
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	1,792,757	2,094,034	4,678,012	-	25,431,370	-	33,996,173
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	45,723,768	-	-	-	-	-	45,723,768
Հաճախորդներին տրված վարկեր	7,297,769	59,699,223	121,928,053	84,646,216	-	3,335,185	276,906,446
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	10,457,343	-	10,457,343
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,128,778	-	1,128,778
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	1,360,456	-	1,360,456
Այլ ակտիվներ	3,409,756	-	-	-	1,983,637	-	5,393,393
Ընդամենը ակտիվներ	**142,602,059**	**80,701,389**	**187,485,979**	**97,323,903**	**40,777,856**	**3,335,185**	**552,226,371**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,023,540	-	-	-	-	-	17,023,540
Բանկերի ավանդներ և մնացորդներ	20,003,897	-	-	-	-	-	20,003,897
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	169,169,296	98,787,817	61,492,488	54,399	-	-	329,504,000
Թողարկված պարտքային արժեթղթեր	116,362	2,020,850	30,725,230	-	-	-	32,862,442
Ստորադաս փոխառություններ	17,991	39,893	-	3,965,405	-	-	4,023,289
Այլ փոխառու միջոցներ	288,388	11,801,995	29,272,258	11,655,634	-	-	53,018,275
Վարձակալության գծով պարտավորություններ	21,656	220,849	833,997	170,377	-	-	1,246,879
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	1,217,295	-	-	-	-	1,217,295
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	2,337,034	-	2,337,034
Այլ պարտավորություններ	4,611,705	685,900	-	-	1,489,308	-	6,786,913
Ընդամենը պարտավորություններ	**211,252,835**	**114,774,599**	**122,323,973**	**15,845,815**	**3,826,342**	**-**	**468,023,564**
Զուտ դիրքը	**(68,650,776)**	**(34,073,210)**	**65,162,006**	**81,478,088**	**36,951,514**	**3,335,185**	**84,202,807**

* Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է ֆինանսական արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերով, և այն փաստի վրա, որ ժամկետային ավադների ժամկետը կերկարաձգվի մարման ժամկետից հետո:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,937,733	-	-	-	-	-	60,937,733
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	6,152,413	22,863,645	7,675,388	42,825	-	36,734,271
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,507,638	13,039,328	20,598,971	6,995,204	-	-	49,141,141
Բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ	4,746,560	4,729,135	2,268,174	-	29,020,906	-	40,764,775
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	30,249,231	-	-	-	-	-	30,249,231
Հաճախորդներին տրված վարկեր	3,986,324	45,300,291	96,040,114	64,072,397	-	2,352,239	211,751,365
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	9,262,505	-	9,262,505
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	1,055,100	-	1,055,100
Առգրավված ակտիվներ	-	-	-	-	1,526,940	-	1,526,940
Այլ ակտիվներ	2,308,024	-	-	-	1,912,279	-	4,220,303
Ընդամենը ակտիվներ	**110,735,510**	**69,221,167**	**141,770,904**	**78,742,989**	**42,820,555**	**2,352,239**	**445,643,364**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,007,733	-	-	-	-	-	6,007,733
Բանկերի ավանդներ և մնացորդներ	11,581,709	-	-	-	-	-	11,581,709
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	142,644,218	86,139,853	51,993,403	44,117	-	-	280,821,591
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,065,145	15,231,100	-	-	-	21,296,245
Ստորադաս փոխառություններ	18,164	41,320	-	4,047,682	-	-	4,107,166
Այլ փոխառու միջոցներ	462,114	12,600,786	19,653,537	10,636,990	-	-	43,353,427
Վարձակալության գծով պարտավորություններ	5,597	210,867	846,480	87,133	-	-	1,150,077
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	1,389,238	-	-	-	-	1,389,238
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	1,452,052	-	1,452,052
Այլ պարտավորություններ	3,255,192	689,500	-	-	1,079,326	-	5,024,018
Ընդամենը պարտավորություններ	**163,974,727**	**107,136,709**	**87,724,520**	**14,815,922**	**2,531,378**	**-**	**376,183,256**
Զուտ դիրքը	**(53,239,217)**	**(37,915,542)**	**54,046,384**	**63,927,067**	**40,289,177**	**2,352,239**	**69,460,108**

30 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետոմսերի ֆոնդային բորսայի արժեքն առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների և իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը որևէ կերպ չեն փոխվել նախորդ տարիների համեմատ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2023թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբեր ամսվա համար:

	2024թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	**2023թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված**
Ընդամենը կապիտալ	80,078,261	70,878,103
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	468,929,395	374,673,944
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**17.08%**	**18.92%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով սահմանված չափանիշներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

31 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այդ պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Իրավաբանական անձանց տրված՝ չօգտագործված վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններ	14,922,057	13,608,507
Ֆիզիկական անձանց տրված՝ չօգտագործված վարկերի և վարկային քարտերի գծով հանձնառություններ	2,258,506	2,632,404
Երաշխավորություններ	10,752,060	4,044,305
	27,932,623	**20,285,216**
Արժեզրկման գծով պահուստ	**(78,216)**	**(66,457)**

Բացի վերը ներկայացված փոխատվության հանձնառությունների, Բանկն ունի չօգտագործված երաշխավորությունների գծով հանձնառություններ, որոնց տրամադրումը ենթակա է լրացուցիչ հաստատման Բանկի կողմից: Բանկն այդ մնացորդները դիտարկում է որպես չպարտավորված: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ չպարտավորված մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 2,299,873 հազար դրամ (2023թ-ին՝ 4,254,626 հազար դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 157,085 հազար դրամ գումարով ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասված են 3-րդ փուլ, մնացած ֆինանսական փոխատվության հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ (2023թ-ին բոլոր ֆինանսական փոխատվության հանձնառությունները դասված էին 1-ին փուլ): 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված՝ չօգտագործված վարկերի և վարկային գծերի գծով հանձնառությունների կազմում ներառված են Բանկի ներքին վարկանիշային համակարգի B1 վարկանիշ ունեցող՝ 6,046,652 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2023թ-ին՝ 1,382,089 հազար դրամ), B2 վարկանիշ ունեցող՝ 2,873,384 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2023թ-ին՝ 2,631,135 հազար դրամ) և B3 վարկանիշ ունեցող՝ 173,931 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հաճախորդները (2023թ-ին այդպիսի հաճախորդներ չկային):

Չօգտագործված վարկերի գծով հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն և ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է երաշխավորությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2024թ.**			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	66,457	-	-	66,457
Տեղափոխում 3-րդ փուլ	(55,950)	-	55,950	-
Սկզբնավորված նոր հանձնառություններ	16,834	-	-	16,834
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	(5,026)	-	(49)	(5,075)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**22,315**	**-**	**55,901**	**78,216**

հազ. դրամ	**2023թ.**			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հանձնառություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	80,560	-	-	80,560
Սկզբնավորված նոր հանձնառություններ	10,424	-	-	10,424
Կորստի պահուստի զուտ վերաչափում, ներառյալ մարումները	(24,527)	-	-	(24,527)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**66,457**	**-**	**-**	**66,457**

32 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի հետևանքով առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

33 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ առանցքային կառավարչական անձնակազմի հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Աշխատավարձ և պարգրավճարներ	3,046,217	2,420,421
Ընդհամենը առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն	**3,046,217**	**2,420,421**

Այդ գումարները ներառում են առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումները, որոնք հաշվառված են համապատասխան ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Ստորև ներկայացված են առանցքային կառավարչական անձնակազմի հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2023թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	342,391	11.40%	291,574	12.28%
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստներ	(1,035)	-	(1,272)	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	3,222,942	0.0% - 9.75%	1,854,720	0.0% - 6.82%
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,078,750	4%-11%	956,696	4%-11%

Ստորև ներկայացված են առանցքային կառավարչական անձնակազմի հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	29,270	29,172
Տոկոսային ծախս	(184,089)	(46,531)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(4,788)	(2,795)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքները, դրանց գծով մնացորդները և տարվա համապատասխան ծախսը և եկամուտը:

	Բաժնետեր	Վերջնական հսկող կողմի հետ կապակցված այլ կազմակերպություններ և վերջնական հսկող կողմի ընտանիքի անդամներ	Առանցքային ղեկավարության հսկողության ներքո գտնվող այլ կազմակերպություններ և առանցքային ղեկավարության ընտանիքի անդամներ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ			
Համախառն մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	2,178,681	810,663	23,489
Տարվա ընթացքում տրված վարկեր	10,284,952	109,080	1,590
Վարկերի մարումներ տարվա ընթացքում	(5,571,433)	(125,561)	(5,154)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**6,892,200**	**794,182**	**19,925**
Պարտքային կորստի պահուստ	(29,929)	(761)	(6)
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**6,862,271**	**793,421**	**19,919**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	-	-	2,609,866
Տարվա ընթացքում ստացված	-	-	71,855,206
Տարվա ընթացքում մարված	-	-	(74,465,072)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**-**	**-**	**-**
Պարտքային կորստի պահուստ	-	-	-
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**-**	**-**	**-**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	1,080,252	36,349	88,631
Տարվա ընթացքում ստացված	1,022,499	4,968,570	76,161,265
Տարվա ընթացքում մարված	(1,080,471)	(4,528,747)	(76,151,557)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**1,022,280**	**476,172**	**98,339**
Թողարկված պարտքային արժեթղթեր			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	3,678,683	-	369,825
Տարվա ընթացքում ստացված	158,648	-	73,746
Տարվա ընթացքում մարված	(357,392)	-	(278,663)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**3,479,939**	**-**	**164,908**
Ստորադաս փոխառություն	**4,023,289**	**-**	**-**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն			
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	274,970	55,128	2,118
Տոկոսային եկամուտ հակադարձ հետգնման գործարքների գծով	-	-	190,399
Տոկոսային ծախս ավանդների գծով	(158,822)	(11,934)	(5,270)
Տոկոսային ծախս թողարկված պարտքային արժեթղթերի գծով	(158,648)	-	(69,471)
Տոկոսային ծախս ստորադաս փոխառության գծով	(354,412)	-	-
Տոկոսային ծախս այլ փոխառու միջոցների գծով	-	(640,000)	-

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը 9% է, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

Այլ կապակցված կողմերին տրված վարկերը և փոխատվությունները արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուբլով, տոկոսադրույքները կազմում են 4.3-19.0% և ենթակա են մարման 2025-2040թթ.:

Այլ կապակցված կողմերի ժամկետային ավանդներն արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսադրույքները կազմում են 2.25%-11% և ենթակա են մարման 2025-2026թթ.:

Թողարկված պարտքային արժեթղթերն արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսադրույքները կազմում են 4%-11% և ենթակա են մարման 2025-2027թթ:

Ստորև ներկայացված են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքները, դրանց գծով մնացորդները և տարվա համապատասխան ծախսը և եկամուտը:

	Բաժնետեր	Վերջնական հսկող կողմի հետ կապակցված այլ կազմակերպու-թյուններ և վերջնական հսկող կողմի ընտանիքի անդամներ	Առանցքային ղեկավարության հսկողության ներքո գտնվող այլ կազմակերպություններ և առանցքային ղեկավարության ընտանիքի անդամներ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ			
Համախառն մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	19,408	-	37,218
Տարվա ընթացքում տրված վարկեր	2,380,621	810,663	-
Վարկերի մարումներ տարվա ընթացքում	(221,348)	-	(13,729)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2,178,681**	**810,663**	**23,489**
Պարտքային կորստի պահուստ	(53,474)	(432)	(10)
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2,125,207**	**810,231**	**23,479**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	-	-	2,907,196
Տարվա ընթացքում ստացված	-	-	91,795,017
Տարվա ընթացքում մարված	-	-	(92,092,347)
Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-	**2,609,866**
Պարտքային կորստի պահուստ	-	-	(839)
Զուտ մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**-**	**-**	**2,609,027**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	1,076,511	-	453,008
Տարվա ընթացքում ստացված	18,307,842	1,367,506	94,269,101
Տարվա ընթացքում մարված	(18,304,101)	(1,331,157)	(94,633,478)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,080,252**	**36,349**	**88,631**
Թողարկված պարտքային արժեթղթեր			
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	-	-	119,448
Տարվա ընթացքում ստացված	3,678,683	-	250,377
Տարվա ընթացքում մարված	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,678,683**	**-**	**369,825**
Ստորադաս փոխառություն	**4,107,166**	**-**	**-**

	Բաժնետեր	Վերջնական հսկող կողմի հետ կապակցված այլ կազմակերպու-թյուններ և վերջնական հսկող կողմի ընտանիքի անդամներ	Առանցքային ղեկավարության հսկողության ներքո գտնվող այլ կազմակերպություններ և առանցքային ղեկավարության ընտանիքի անդամներ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն			
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	28,988	22,399	2,917
Տոկոսային եկամուտ հակադարձ հետգնման գործարքների գծով	-	-	305,152
Տոկոսային ծախս ավանդների գծով	(129)	-	(10,782)
Տոկոսային ծախս թողարկված պարտքային արժեթղթերի գծով	(120,375)	-	(56,694)
Տոկոսային ծախս ստորադաս փոխառության գծով	(353,178)	-	-
Տոկոսային ծախս այլ փոխառու միջոցների գծով	(40,745)	-	-

Բաժնետիրոջից ստացված ստորադաս փոխառության տոկոսադրույքը 9% է, փոխառությունը ենթակա է մարման 2031թ-ին:

Այլ կապակցված կողմերին տրված վարկերը և փոխատվությունները արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուբլով, տոկոսադրույքները կազմում են 4.39-14.85% և ենթակա են մարման 2025-2033թթ.:

Այլ կապակցված կողմերի հետ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներն արտահայտված են ՀՀ դրամով են, միջին տոկոսադրույքը կազմում է 11.24% և իրենց բնույթով հանդիսանում են մարման կարճ ժամկետով գործիքներ:

Այլ կապակցված կողմերի ժամկետային ավանդներն արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, տոկոսադրույքները կազմում են 3.2%-5.11% և ենթակա են մարման 2024-2026թթ.:

34 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ ՀՀ կառավարությունից և ՀՀ ԿԲ-ից ՀՀ դրամով համապատասխանաբար 4%-9% և 6%-7.5% անվանական տոկոսադրույքով և տեղական վարկային կազմակերպությունից ՀՀ դրամով 4.5%-13% անվանական տոկոսադրույքով ստացված փոխառություններ: Փոխառությունները համարվում են շուկայի առանձին սեգմենտի փոխառություններ, հետևաբար, Բանկը գտնում է, որ փոխառությունները ստացվել են շուկայական տոկոսադրույքներով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները:

2024թ.	**Հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	276,906,446	280,741,225	(3,834,779)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	31,401,936	32,613,878	(1,211,942)
Ընդամենը	**308,308,382**	**32,613,878**	**(5,046,721)**

2023թ.	**Հաշվեկշռային արժեք հազ. դրամ**	**Իրական արժեք հազ. դրամ**	**Տարբերություն հազ. դրամ**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	211,751,365	210,706,502	1,044,863
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	49,141,141	49,864,082	(722,941)
Ընդամենը	**260,892,506**	**260,570,584**	**321,922**

Ստորև բերվող աղյուսակներում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին մակարդակ	**2-րդ մակարդակ**	**3-րդ մակարդակ**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր. պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	-	62,284,347	-	62,284,347
Բաժնային գործիքներ	-	-	416,272	416,272
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	280,741,225	280,741,225
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	32,613,878	-	-
Ընդամենը ակտիվներ	**-**	**62,284,347**	**281,157,497**	**343,441,844**

հազ. դրամ	2023թ.			
	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր. պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	-	36,691,446	-	36,691,446
Բաժնային գործիքներ	-	-	42,825	42,825
Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների բացահայտված իրական արժեք				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	210,706,502	210,706,502
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	49,864,082	-	49,864,082
Ընդամենը ակտիվներ	**-**	**86,555,528**	**210,749,327**	**297,304,855**

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոփերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար: 2-րդ մակարդակ դասված ֆինանսական գործիքների համար Բանկն օգտագործում է նմանատիպ գործիքների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք համարվում են գրեթե ոչ գործող:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար կիրառվում են 7.1%-13.5% զեղչման դրույքներ՝ արտարժույթով արտահայտված վարկերի համար և 8.5%-12.5% զեղչման դրույքներ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը գնահատելու համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով՝ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 8.2%-10.5% դրույքներ և արտարժույթով արտահայտված արժեթղթերի գծով կիրառվում են 6.0%-7.1% դրույքներ:

35 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Գործառնական սեգմենտներ

Բանկի գործունեությունը կազմակերպվում է չորս հիմնական գործառնական սեգմենտների (2023թ-ին՝ չոր սեգմենտների) հիման վրա: Այդ գործառնական սեգմենտները մշտադիտարկվում են, և դրանց գործառնական արդյունքների հիման վրա կայացվում են ռազմավարական որոշումներ:

Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններն իրենցից ներկայացնում են հաճախորդներին ընթացիկ հաշիվների բացման և վարման, խնայողությունների, ավանդների գծով բանկային ծառայությունները, ներդրումային խնայողական, պահառուական, բանկային քարտերի սպասարկման ծառայությունները, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրումը:

Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններն իրենցից ներկայացնում են հաշվարկային և ընթացիկ հաշիվների սպասարկման, ավանդների, օվեդրաֆտների գծով ծառայությունները, վարկերի և ֆինանսավորման այլ միջոցների տրամադրումը, արտարժույթով գործառնությունները և ածանցյալ գործիքներով գործարքները:

Բանկային ներդրումային ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքների առուվաճառքի գործառնությունները, համակարգված ֆինանսավորման տրամադրումը, վարձակալությունը, միաձուլման և ձեռքբերման գծով խորհրդատվության տրամադրումը:

Թվային բանկինգն իրենից ներկայացում է բանկերի գործառնությունները թվային հարթակներում:

Բիզնես սեգմենտների միջև գործառնություններն իրականացվում են սովորական առևտրային պայմաններով: Ֆինանսական միջոցները որպես կանոն վերաբաշխվում են սեգմենտների միջև, որի արդյունքում ֆինանսավորման գծով ծախսերի տեղափոխումները բացահայտվում են գործառնական եկամտի կազմում: Այդ միջոցների գծով տոկոսները հաշվարկվում են Բանկի կապիտալի արժեքի հիման վրա:

Բիզնես սեգմենտների միջև առկա չեն եկամտի և ծախսի այլ էական հոդվածներ: Սեգմենտի ակտիվները և պարտավորությունները ներառում են գործառնական ակտիվները և պարտավորությունները, որոնք կազմում են Բանկի հաշվեկշռային ակտիվների և պարտավորությունների մեծ մասը, բացառությամբ այնպիսի հոդվածների, ինչպիսիք են՝ հարկերը և փոխառությունները: Ներքին ծախսերը և տրանսֆերային գնագոյացման մասով ճշգրտումները արտացոլվում են յուրաքանչյուր բիզնես սեգմենտի գործունեության արդյունքներում: Արտաքին հաճախորդների հետ պայմանագրերի հասույթն ըստ բիզնես սեգմենտների՝ ողջամիտ հիմունքով բաշխելու համար օգտագործվում են հասույթի բաշխման համաձայնագրեր:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն Բանկի գործառնական սեգմենտների եկամուտների և շահույթի, որոշակի ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

2024թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ**	**Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայություններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Տոկոսային եկամուտ	12,756,323	10,625,650	12,969,520	844,869	37,196,362
Տոկոսային ծախս	(3,404,842)	(7,464,393)	(2,616,149)	(5,553,731)	(19,039,115)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ (Ծնթգ. 6)	841,555	664,158	2,307,572	8,438,969	12,252,254
Զուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)*	1,760,469	1,605,498	2,652,262	(6,287,503)	(269,274)
Միջսեգմենտային եկամուտ	(2,727,254)	4,327,028	(8,083,774)	6,484,000	-
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	**9,226,251**	**9,757,941**	**7,229,431**	**3,926,604**	**30,140,227**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(186,482)	308,787	(209,753)	554,713	467,264
Անձնակազմի և այլ վարչական ծախսերը	(4,491,331)	(2,735,433)	(1,161,205)	(4,428,052)	(12,816,021)
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը	**4,548,438**	**7,331,295**	**5,858,473**	**53,264**	**17,791,470**
Շահութահարկի գծով ծախս	(817,850)	(1,295,390)	(1,046,638)	(22,396)	(3,182,275)
Տարվա շահույթ	**3,730,588**	**6,035,904**	**4,811,835**	**30,868**	**14,609,195**

2024թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ**	**Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայություններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Տոկոսային եկամուտ	9,232,365	8,625,718	10,248,724	940,453	29,047,260
Տոկոսային ծախս	(2,779,667)	(5,226,932)	(1,268,575)	(4,613,255)	(13,888,429)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ (Ծնթգ. 6)	663,750	666,519	1,202,333	5,435,307	7,967,909
Զուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)*	(273,314)	751,547	4,909,934	(3,897,985)	1,490,182
Միջսեգմենտային եկամուտ	(724,941)	3,869,095	(8,369,933)	5,225,779	-
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	**6,118,193**	**8,685,947**	**6,722,483**	**3,090,299**	**24,616,922**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(42,238)	(1,141,150)	(135,255)	586,239	(732,404)
Անձնակազմի և այլ վարչական ծախսերը	(3,930,867)	(2,940,782)	(728,648)	(2,869,752)	(10,470,049)
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը	**2,145,088**	**4,604,015**	**5,858,580**	**806,786**	**13,414,469**
Շահութահարկի գծով ծախս	(700,337)	(927,656)	(541,896)	(208,600)	(2,378,489)
Տարվա շահույթ	**1,444,751**	**3,676,359**	**5,316,684**	**598,186**	**11,035,980**

* Զուտ ոչ տոկոսային եկամուտը/(ծախսը) ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսը, այլ գործառնական եկամուտը, ուղղակի բանկային ծախսերը, զուտ օգուտը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից, զուտ օգուտը փոխարժեքային տարբերություններից և զուտ օգուտը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից:

2024թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Իրավաբանա-կան անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Ընդամենը ակտիվներ	148,288,662	152,902,464	238,420,993	12,614,252	552,226,371
Ընդամենը պարտավորություններ	116,610,261	174,531,981	69,868,953	107,012,369	468,023,564

2023թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Իրավաբանա-կան անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	96,893,984	111,027,863	131,554,142	3,829,518	343,305,507
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	108,394,748	137,711,735	34,024,245	82,175,694	362,306,422

Բանկը վերանայել է իր սեգմենտային հաշվետվողականությունների պատրաստման, ներառյալ ոչ ֆինանսական տվյալների՝ սեգմենտների միջև բաշխման մեթոդաբանությունը: 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Բանկն ըստ սեգմենտների ներկայացրել է ընդհանուր ակտիվները և պարտավորությունները:

Տոկոսաբեր ֆինանսական ակտիվները ներառում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերի տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված ընդհանուր վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լորո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառու միջոցները, ստորադաս փոխառությունները:

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում գնտվող՝ հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ սեգմենտների 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

2024թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Իրավաբանա-կան անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Պլաստիկ քարտերով գործառնություններ	187,157	-	-	7,954,622	8,141,779
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների վճարներ	167,902	134,602	2,159,815	158	2,462,477
Դրամական փոխանցումներ	327,457	353,737	-	91,505	772,699
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	89,603	79,041	-	371,540	540,184
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	-	76,847	145,227	-	222,074
Այլ	69,436	19,931	2,530	21,144	113,041
	841,555	**664,158**	**2,307,572**	**8,438,969**	**12,252,254**

2023թ.	**Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Իրավաբանա-կան անձանց մատուցվող ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Բանկային ներդրումային ծառայու-թյուններ հազ. դրամ**	**Թվային բանկինգ հազ. դրամ**	**Ընդամենը հազ. դրամ**
Պլաստիկ քարտերով գործառնություններ	177,424	-	-	5,072,789	5,250,213
Կանխիկ և անկանխիկ գործառնությունների վճարներ	188,690	136,066	1,167,759	39,552	1,532,067
Դրամական փոխանցումներ	176,035	313,320	-	42,610	531,965
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	84,875	118,645	34,574	272,770	510,864
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	-	90,294	-	-	90,294
Այլ	36,726	8,194	-	7,586	52,506
	663,750	**666,519**	**1,202,333**	**5,435,307**	**7,967,909**